ԱՐՏԱԿ ՇԱԲԱՐՅԱՆ

ՊԱՏԱՐԱԳՆԵՐ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԿԱՍԿԱԾ
ԺԽՏՈՒՄ
ԱՆՏԵՌԱՅԱԿՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԲԱԾՈՒՄ
ՈՉՆՉԱՑՈՒՄ
ՈՉՆՉԱՑՈՒՄ
ՈՉՆՉԱՑ

Արտակ Շաքարյան

Ուղեցույց երիտասարդ դեսպանին

ՓԱՍՏԱՐԿՆԵՐ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վերնատուն

Երևան
2014

Շ 380 Ուղեցույց երիտասարդ դեսպանին. Փաստարկներ Հայոց ցեղասպանության մասին / Արտակ Շաքարյան. — Եր.: Վերնատուն, 2014. — 120 էջ:

Երաշխավորվել է հրատարակության ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի որոշմամբ

«Ուղեցույց երիտասարդ դեսպանին. Փաստարկներ Հայոց ցեղասպանության մասին» գրքի շրջանակներում ուսումնասիրվել է Հայոց ցեղասպանության մասին թուրքական գրականությունն ու հակահայկական կայքերի քարոզչական բնույթը: Այս բնագավառի ճանաչված հայ մասնագետների հետ համատեղ փորձ է արվել տալ հնարավորինս հիմնավոր, սեղմ և ընդգրկուն պատասխաններ ժխտողական հիմնական թեզերին: Գրքում մասնավորապես քննարկվում են Թուրքիայի ժխտողական քաղաքականությունը, Ցեղասպանությանը զոհ գնացած հայերի թիվը, հայերի ինքնապաշտպանությունները, բռնագաղթի՝ որպես բնաջինջ գործիքի օգտագործումը, ինչպես նաև օսմանյան դատարանի կողմից հայերի կոտորածների դատապարտումը:

Գիրքը նախատեսված է արտասահման մեկնող երիտասարդների համար, ովքեր այս կամ այն ձևաչափով քննարկելու են Հայոց ցեղասպանությունը կամ հանդիպումներ են ունենալու թուրք գործընկերների հետ: Գիրքն անշուշտ շատ հետաքրքիր և ուսանելի կլինի Հայոց ցեղասպանության պատմությամբ հետաքրքրված ընթերցողների լայն շրջանակի համար:

ISBN 978-9939-1-0114-9

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)52
Շ 380

© Ա. Շաքարյան, 2014
© «Վերնատուն մեդիա» ՍՊԸ, 2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 5

Ժխտումից ժխտում 9

Կանխամտածվածության փաստումը Հայոց ցեղասպանությունում 20

Հայոց ցեղասպանության զոհերի թիվը 31

Բռնագաղթը որպես ցեղասպանություն իրականացնելու միջոց 41

Հայերի ինքնապաշտպանական մարտերը 1915 թվականին եվ հայոց ցեղասպանությունը 55

Հայոց ցեղասպանության դատապարտումը օսմանյան դատարանում 1919-1920 թթ. 78

Բաց և փակ հայկական ու թուրքական արխիվները Հայոց ցեղասպանության մասին 86

«Արդար հիշողությունը» և «համատեղ ցավը» 98

Նվիրում եմ Ցեղասպանությունից հայերին փրկածներին, Ցեղասպանության ճանաչման ու հատուցման գործընթացում իրենց ներդրումն ունեցող երախտավորներին:

Հատուկ շնորհակալություն Հայկ Մինասյանին՝ գրքում օգտագործված հարցազրույցների բարձորակ անցկացման համար:

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Թվում է, թե մեր հասարակությունը լիովին տեղեկացված է Հայոց ցեղասպանության հիմնահարցի մանրամասներին: Յուրաքանչյուր տարվա ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդ այցելող բազմահազար հայերից յուրաքանչյուրը գիտե Ցեղասպանության մեղսագործների անունները, հիշում է «Նեմեսիս» օպերացիայի հերոսներին ու աշխարհից պահանջում է Թուրքիային դատապարտել կատարվածի համար, և այս ամենը մեզ բավարար է թվում:

...85 տոկոսը ցանկություն են հայտնել ունենալ մի ուղեցույց, որը կներառեր հակափաստարկներ Հայոց ցեղասպանության վերաբերյալ թուրքական թյուր տեսակետներին:

Թերևս, առավել համոզված ենք բարձրագույն կրթություն ստացած երիտասարդների հարցում՝ կարծելով, թե նրանք մի քանի անգամ ուսումնասիրել են Հայոց պատմությունն ու պետք է որ քաջատեղյակ լինեն հայ ժողովրդի ճակատագրի այդ անջնջելի ժամանակաշրջանի մասին: Սակայն հայ հասարակության ու, մասնավորապես երիտասարդների հետ աշխատանքի մեր հարուստ փորձը ցույց է տալիս, որ այստեղ գործ ունենք մոլորության հետ: Հայոց ցեղասպանության վերաբերյալ մեր հասարակության անդամների զգալի մասի գիտելիքները ոչ հիմնավոր են ու ոչ էլ, առավել ևս, փաստարկված:

Մինչդեռ նշված հիմնախնդիրների վերաբերյալ թերի տեղեկացված երիտասարդներն արտասահմանում տարաբնույթ գիտաժողովների, երիտասարդական հավաքների, միջոցառումների մասնակցելիս հանդիպում են համապատասխան կառույցների կողմից բավականին պատրաստված ադրբեջանցիների ու թուրքերի, ովքեր ունեն արդեն նախապես սովորած հարցեր ու հայտարարություններ, որոնցով դժվարին կացության մեջ են գցում հայ գործընկերներին՝ պահանջելով ցույց տալ հայերին ցեղաս-

պանության ենթարկելու վերաբերյալ որևէ մի հրաման կամ մեղադրելով պատերազմական իրավիճակում ապստամբության ու դավաճանության մեջ: Շատ դեպքերում նման բարդ հարցերին մասնագիտությամբ ֆիզիկոս, լեզվաբան կամ նույնիսկ պատմաբան հայ երիտասարդները հանպատրաստի սկսում են կցկտուր, հաճախ՝ իրարամերժ պատասխաններ տալ, ինչն այդքան էլ արժանահավատ չի հնչում:

Հայոց ցեղասպանության վերաբերյալ քննարկում-հանդիպումներին պատրաստվելիս արտասահմանում սովորող հայ ուսանողների 53 տոկոսը նյութեր է քաղում «Գուգլ» որոնողական համակարգից, իսկ 36 տոկոսը՝ «Վիկիպեդիայից»:

Ըստ մեր կողմից անցկացված հարցախույզի արդյունքների՝ արտասահմանյան բուհերում սովորող ուսանողների ճնշող մեծամասնությունն այս կամ այն կերպ առնչվել է Հայոց ցեղասպանության լուսաբանման խնդիրներին՝ ուսումնառության ընթացքում: Ընդ որում, նրանց 80 տոկոսը պատմել են Հայոց ցեղասպանության մասին օտարազգի կուրսընկերներին, 30 տոկոսը՝ արձագանքել թուրք կամ ադրբեջանցի կուրսընկերների հերյուրանքներին, իսկ 23 տոկոսը՝ մասնակցել հայ-թուրքական հարաբերությունների թեմային առնչվող գիտաժողովների: Ընդհանուր առմամբ, ուսանողների մեծ մասը՝ 96 տոկոսը, նույնիսկ հաշվի առնելով գերզբաղված օրակարգը, պատրաստ է ժամանակ տրամադրել Հայոց ցեղասպանության պատշաճ ներկայացման հարցում ՀՀ դեսպանատների աշխատակիցներին աջակցելու համար: Թեև հարցվածների ընդամենը 43 տոկոսն է այս ոլորտում զգում գիտելիքների պակաս, այդուհանդերձ, 85 տոկոսը ցանկություն է հայտնել ունենալ մի ուղեցույց, որը կներառեր հակափաստարկներ Հայոց ցեղասպանության վերաբերյալ՝ թուրքական թյուր տեսակետներին: Այս ցանկությունը բացատրելի է, քանի որ ըստ հարցման արդյունքների՝ Հայոց ցեղասպանության վերաբերյալ քննարկում-

հանդիպումներին պատրաստվելիս արտասահմանում սովորող հայ ուսանողների 53 տոկոսը նյութեր է քաղում «Գուգլ» որոնողական համակարգից, իսկ 36 տոկոսը՝ «Վիկիպեդիայից»:

«Ուղեցույց երիտասարդ դեսպանին» աշխատանքն ուղղված է լրացնելու այս բացը: Առաջնային թիրախ խմբի մեջ մտնում են այս կամ այն ծրագրով արտասահման մեկնող երիտասարդները: Երկրորդական թիրախ խմբի մեջ են մտնում պատմությամբ հետաքրքրվող լայն շերտերը, ինչպես նաև թեմայի վերաբերյալ հետաքրքրություն ցուցաբերող արտասահմանցիները, քանի որ նյութերը թարգմանվելու են անգլերեն:

«Ուղեցույց երիտասարդ դեսպանին. Փաստարկներ Հայոց ցեղասպանության մասին» գրքի շրջանակներում ուսումնասիրվել է Հայոց ցեղասպանության մասին թուրքական գրականությունն ու հակահայկական կայքերի քարոզչական բնույթը: Այս բնագավառի ճանաչված հայ մասնագետի հետ անցկացվել են հարցազրույցներ, որոնց ընթացքում քննարկվել են թուրքական հերքողական հիմնական թեզերի հնարավոր պատասխանները: Հեղինակն այս ծավալուն նյութից պատրաստել է համապատասխան հոդվածներ: Հոդվածները հավելյալ վերամշակվելուց ու ակադեմիական գիտական պահանջներին համապատասխանեցվելուց հետո անցել են նաև խմբագրական քննություն ու որոշ փոփոխություններից հետո հաստատվել տպագրության: Գիրքը նաև թարգմանվելու է անգլերեն:

...ճանաչված հայ մասնագետի հետ անցկացվել են հարցազրույցներ, որոնց ընթացքում քննարկվել են թուրքական հերքողական հիմնական թեզերի հնարավոր պատասխանները:

Գիրքը գրախոսվել է չորս մասնագետի կողմից, որոնցից ամեն մեկը ներկայացնում է Հայոց ցեղասպանության ճանաչման և պահանջատիրության գործընթացի կարևո-

Գիրքը գրախոսվել է չորս մասնագետի կողմից, որոնցից ամեն մեկը ներկայացնում է Հայոց ցեղասպանության ճանաչման և պահանջատիրության գործընթացի կարևորագույն չորս կառույցները:

ռագույն չորս կառույցները. ՀՀ Արտաքին գործերի նախարարության Սահմանակից երկրների վարչության պետ, պ.գ.դ. Արսեն Ավագյան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի փոխտնօրեն, պ.գ.թ. Սուրեն Մանուկյան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի վարիչ, պ.գ.թ. Արմեն Մարուքյան, ՀՅԴ Հայ Դատի գրասենյակի ղեկավար Կիրո Մանոյան:

ԺԽՏՈՒՄԻՑ ԺԽՏՈՒՄ

«Կասկածն է մեր արտադրանքը, քանի որ դա է լավագույն միջոցը մրցակցելու այն փաստերի հետ, որոնց տեղյակ է լայն հասարակությունը: Սա նաև միջոց է ստեղծելու հակասություն...»

Բրաուն և Վիլյամսոն ծխախոտագործական ընկերության հուշագիր (1969 թ.)[1]

Ցեղասպանությունը մեկ գործողություն չէ, այլ շարունակական գործընթաց: Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիան նշում է ցեղասպանության 10 փուլ. դասակարգում, խորհրդանշում, խտրականություն, ապամարդկայնացում, կազմակերպում, բևեռում, նախապատրաստում, հետապնդում, բնաջնջում և ժխտում:

Ժխտումը Ցեղասպանային քաղաքականության վերջին փուլն է, որ «միշտ հետևում է ցեղասպանությանը»: Շատ մասնագետներ պնդում են, որ հայտնի ցեղասպանության միտումնավոր ժխտումը պետք է որակավորվի որպես անուղղակի կամ ուղղակի մասնակցություն իրականացված ցեղասպանությանը[2]:

Հայկական լոբբին շատ ջանքեր ու եռանդ է թափում տարբեր երկրներում Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևեր ընդունելու ուղղությամբ, և որպես վերջնական նպատակ դրվում է Ցեղասպանության ճանաչումը Թուրքիայի կողմից: Մինչդեռ Հայոց ցեղասպանությունն առաջին անգամ դատական որոշմամբ ճանաչել է Օսմանյան կայսրությունը:

---

1. *Smoking and health proposal, Brown and Williamson collection, Bates Number 680561778-680561786 http://legacy.library.ucsf.edu/tid/nvs40f00/pdf;jsessionid=53C030F-77779D2073EF01246846F8591.tobacco03*
2. *The Ten Stages of Genocide, Gregory H. Stanton. Originally presented as a briefing paper, 'The Eight Stages of Genocide" at the US State Department in 1996. Discrimination and Persecution have since been added to the 1996 model. http://genocidewatch.org/genocide/ten-stagesofgenocide.html*

Բնականաբար, չի օգտագործվել «ցեղասպանություն» եզրը, որն այդ ժամանակ դեռ չկար:

1919-1920 թթ. օսմանյան դատարաններում քննվեց 63 դատական նիստ, որոնց ընթացքում բացահայտվեցին կոտորածների շատ մանրամասներ, ի հայտ բերվեցին ընդհանուր և լոկալ պատասխանատուները, կայացվեցին մահվան դատավճիռներ, իսկ հայկական կոտորածները դատապարտվեցին: Դատական նիստերի սղագրություններն ու որոշումների տեքստն էլ կանոնավոր կերպով հրապարակվում էր ժամանակի օսմանյան մամուլում, ինչն այսօր հետազոտողների համար կարևոր աղբյուր է հանդիսանում:

Կասկածն է մեր արտադրանքը, քանի որ դա է լավագույն միջոցը մրցակցելու այն փաստերի հետ, որոնց տեղյակ է լայն հասարակությունը:

Կարևորելով այս քայլը ցեղասպանության ճանաչման ու ուսումնասիրման տեսանկյունից, ամեն դեպքում պետք է նշել, որ դատական նիստերի իրական դրդապատճառը արդարության վերականգնումը չէր: Կարծում ենք դատավարությունների անցկացման ամենակարևոր պատճառն այն էր, որ Առաջին աշխարհամարտի ավարտից արդեն սկսվել էին խոսակցություններ Անտանտի տերությունների մոտ ռազմական տրիբունալներ ստեղծելու մասին: Օսմանյան կայսրությունը մտավախություն ուներ, որ եթե խաղաղ բնակչության նկատմամբ կատարված հանցագործությունները քննվեն ոչ թե Օսմանյան դատարանում, այլ միջազգային դատարանում, ապա ի հայտ է գալու Օսմանյան պետության պատասխանատվության խնդիրը, ինչը ենթադրելու էր նաև տարածքային կորուստներ, նյութական հատուցման խնդիր և այլն[3]: Այդ ժամանակ արդեն Ֆրանսիայում Խաղաղության վեհաժողովի նախապատրաստական աշխատանքներն էին ընթանում և, օրինակ, Սևրի պայմանագրի մեջ կար մի դրույթ՝ հանցագործության պատասխանատուներին պատժելու և տվյալ պետությանը փոխհատուցում տալու վերաբերյալ: Ուստի, օսմանցիները փորձում էին նվազագույնի հասցնել այդ պարտադրանքները և դրա համար էլ իրենք նախաձեռնեցին և իրականացրին դատավարությունները[4]: Այսինքն, օսմանյան պետությունը գիտակցում էր այն բոլոր հնարավոր ծանր հետևանքներն իր համար, որոնք կարող էին ի հայտ գալ, եթե Հայոց ցեղասպանության հարցը քննվեր միջազգային տրիբունալում: Դրանից էլ բխում է այն շտապողականությունը, որն ի հայտ եկավ 1918 թ. վերջերին, այսինքն՝ հենց Միդրոսի զինադադարի կնքումից անմիջապես հետո շատ արագ սկսվեցին քննարկումները մամուլում, ապա՝ օսմանյան խորհրդարանում, և այնուհետև հենց 1919 թ. սկզբներին, անմիջապես սկսվեց դատավարությունը[5]:

Հայոց ցեղասպանությունն առաջին անգամ դատական որոշմամբ ճանաչել է Օսմանյան կայսրությունը:

Օսմանյան պետությունը գիտակցում էր այն բոլոր հնարավոր ծանր հետևանքներն իր համար, որոնք կարող էին ի հայտ գալ, եթե Հայոց ցեղասպանության հարցը քննվեր միջազգային տրիբունալում:

Այսինքն՝ իրականում պատիժը, որպես այդպիսին, թուրքական կառավարությունը չի իրականացրել, պատիժը իրականացվել է հետագայում՝ հայ վրիժառուների միջոցով[6]: Միայն մի հոգի է կախաղան բարձրացվել, որը շատ փոքր պատասխանատվություն է նման հանցա-

Իրական պատասխանատուները մեծ մասամբ պատասխանատվության չեն ենթարկվել և նույնիսկ հետագայում դարձել են հանրապետական Թուրքիայի կարևոր դեմքեր:

3. *Հարցազրույց Մ. Անումյանի հետ. հարցազրույց Ա. Մարուքյանի հետ:*

4. *Հարցազրույց Կ. Մանոյանի հետ:*
5. *Հարցազրույց Մ. Անումյանի հետ. հարցազրույց Ա.Մարուքյանի հետ:*
6. *Հարցազրույց Ս. Մանուկյանի հետ:*

գործության համար[7]: Իրական պատասխանատուները, մեծ մասամբ, պատասխանատվության չեն ենթարկվել և նույնիսկ հետագայում դարձել են հանրապետական Թուրքիայի կարևոր դեմքեր[8]:

1960-ականները դարձան զարթոնքի շրջան Հայոց ցեղասպանության ճանաչման ու պահանջատիրության առումով: Թե՛ Խորհրդային Հայաստանում, թե՛ Սփյուռքում հայերը սկսեցին բարձրացնել իրենց ձայնը: Մասնավորապես ԱՄՆ-ում, գիտնականների ու ակտիվիստների մի ողջ սերունդ ամերիկյան հասարակությանը սկսեց տեղեկացնել տասնամյակներ առաջ իրագործված հանցագործության վերաբերյալ:

Իրական պատասխանատուները, մեծ մասամբ, պատասխանատվության չեն ենթարկվել և նույնիսկ հետագայում դարձել են հանրապետական Թուրքիայի կարևոր դեմքեր:

Թուրքերի համար սա անսպասելի էր: Տարիներով Անկարան հույսը դնում էր միջպետական հարաբերությունների ամրության վրա, ու ԱՄՆ պետքարտուղարությանը կոչ էր անում պաշտպանել Թուրքիային, քանի որ վերջինս կարևոր առևտրային գործընկեր է, և ՆԱՏՕ-ի կարևոր անդամ, սակայն թուրքերը հասկացան, որ դա այլևս բավարար չէ: Թուրքիայի համար լուծումը հանրային կապերի պատերազմում հաղթանակն էր:

1975թ.-ից Թուրքիան սկսեց աշխատել Manning, Selvage, & Lee, Inc., հանրային կապերով զբաղվող ընկերության հետ:

Բայց և այնպես միայն 1975 թ.-ից հետո է Օտար գործակալների գրանցման դաշնային ակտը ցույց տալիս, որ Թուրքիան սկսել է ներգրավել հանրային կապերի ընկերությունների՝ տուրիզմի գովազդից բացի նաև այլ նպատակների համար: 1975 թ.-ից Թուրքիան սկսեց աշխատել Manning, Selvage, & Lee, Inc., հանրային կապերով զբաղվող ընկերության հետ, որը նյութեր էր տարածում Թուրքիայի կառավարության անունից՝ ազդելու համար «Թուրքիայի հանդեպ կոնգրեսականների ու հանրային կարծիքի վրա»: Հետագա տարիներին այլ ընկերություններ էլ են ներգրավվում այս աշխատանքներում. Edelman International Inc., Doremus, և առավել կարևորներից՝ Gray & Co., և Hill &Knowlton[9]:

Հանրային կարծիքի մանիպուլյացիայի հարցում մասնագիտացված այս ընկերությունների խորհրդով Թուրքիան հերքման պարզունակ ռազմավարության հետ միաժամանակ ընտրեց կասկածի սփռման ավելի հմուտ մարտավարություն:

Հանրային կարծիքի մանիպուլյացիայի հարցում մասնագիտացված այս ընկերությունների խորհրդով Թուրքիան ժխտման պարզունակ ռազմավարության հետ միաժամանակ ընտրեց կասկածի սփռման ավելի հմուտ մարտավարություն, որն արդեն օգտագործվում էր ծխախոտագործական ընկերությունների կողմից՝ որպես առողջապահական անժխտելի փաստերի դեմ պայքարի միջոց:

1972 թ.-ի մի հուշագրում, Ծխախոտի ինստիտուտի հանրային կապերի գծով փոխնախագահ Ֆրեդ Փանցերը գովում է քսան տարի անթերի աշխատող «առանց առողջապահական մեղադրանքներն ուղղակիորեն ժխտելու՝ դրանց հանդեպ կասկած ստեղծելու» ռազմավարությունը: Այդուհանդերձ, նա նշում է, թե «դեռ հարյուր տոկոսով ապացուցված չէ» պնդման միջոցով կասկածի կերտումը կարող է լինել միայն հարձակումից պաշտպանվելու ռազմավարություն[10]:

Հենց կասկած ստեղծելու նպատակով Թուրքիայի կա-

7. *Հարցազրույց Ռ. Սաֆրաստյանի հետ:*
8. *Հարցազրույց Ա. Խոսրոևայի հետ:*
9. *Ավելի մանրամասն տես՝ Marc Mamigonian, Scholarship, Manufacturing Doubt and Genocide Denial, Armenia Weekly, April 2013, pp. 37-42*
10. *Fred Panzer, The Roper Proposal, Bates Number 2024274199-2024274202, May 1, 1972, http://legacy.library.ucsf.edu/tid/quo14e00/pdf*

ռավարությունը 3 մլն ԱՄՆ դոլար դրամաշնորհով 1982 թ. ԱՄՆ-ում ստեղծեց Թուրքագիտության ինստիտուտ, որը ղեկավարեց հայտնի թուրքամետ օսմանագետ Հեթ Լորին (Heath Lowry): Ինստիտուտն սկսեց աշխատել ամերիկացի արևելագետների և պատմաբանների հետ՝ դրամաշնորհներ տալով ցանկալի թեմայով հոդվածներ ու գրքեր հրատարակելու համար: Սկզբունքային որոշում էր կայացվել չթիրախավորել Հայոց ցեղասպանության ժխտումը, այլ պարզապես աշխատել ինստիտուտի հետ համագործակցող գիտնականների վարկը գիտության ասպարեզում բարձրացնելու, նրանց՝ ինստիտուտի առատ դրամաշնորհներին վարժեցնելու ուղղությամբ:

...«դեռ հարյուր տոկոսով ապացուցված չէ» պնդման միջոցով կասկածի կերտումը կարող է լինել միայն հարձակումից պաշտպանվելու ռազմավարություն:

Թուրքական կասկածի առաջին «գրոհը» տեղի ունեցավ արդեն 1985 թ., երբ «Նյու Յորք Թայմզ» և «Վաշինգթոն Փոստ» թերթերում լույս տեսավ մի նյութ, որտեղ 69 գիտնականի անունից ԱՄՆ Կոնգրեսին կոչ էր արվում չքվեարկել ցեղասպանությունը ճանաչող բանաձևի օգտին, քանի որ «դեռ շատ փաստեր պետք է ուսումնասիրվեն՝ մինչև որ պատմաբանները կկարողանան հստակ առանձնացնել պատասխանատուներին ու անմեղներին, և մատնանշեն իրադարձությունների պատճառները...»[11]:

Տարիների ընթացքում այս մոտեցումը բյուրեղացվեց թուրքական մի պարզ առաջարկի՝ ստեղծել 1915-1923 թթ. դեպքերն ուսումնասիրող պատմաբանների հանձնաժողով, որի իրական նպատակը միակն է. տասնամյակներով ապացուցել հավելյալ ուսումնասիրության անհրաժեշտությունը ու հարցը բաց պահել ընդմիշտ:

Թուրքիայում փոխվեցին կառավարություններ, նա-

11. *Ավելի մանրամասն տես՝ Marc Mamigonian, Scholarship, Manufacturing Doubt and Genocide Denial, Armenia Weekly, April 2013, pp. 37-42*

խագահներ, սակայն «հարձակումներից պաշտպանվելու» ռազմավարությունը մնաց նույնը ու որպես հիմնական միջոց սկսեց օգտագործվել նաև Արդարություն ու զարգացում կուսակցության կառավարությունների կողմից՝ ավելի բացահայտ կերպով:

Այսպես, 2005 թ. ապրիլի 10-ին, պատմության մեջ առաջին անգամ, Թուրքիայի վարչապետ Էրդողանը պաշտոնական նամակ հղեց ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանին, որտում մասնավորապես ասվում էր. «...մենք կոչ ենք անում հիմնել մեր երկու երկրները ներկայացնող պատմաբաններից ու այլ փորձագետներից մի միասնական խումբ, որը կուսումնասիրի 1915 թ. դեպքերն ու զարգացումները ոչ միայն Թուրքիայի ու Հայաստանի, այլ նաև խնդրո առարկայի հետ կապ ունեցող բոլոր երրորդ երկրների արխիվներում, և իրենց աշխատանքի արդյունքներով կկիսվի միջազգային հանրության հետ»[12]:

Տարիների ընթացքում այս մոտեցումը բյուրեղացվեց թուրքական մի պարզ առաջարկի՝ ստեղծել 1915-1923 թթ. դեպքերն ուսումնասիրող պատմաբանների հանձնաժողով, որի իրական նպատակը միակն է. տասնամյակներով ապացուցել հավելյալ ուսումնասիրության անհրաժեշտությունը ու հարցը բաց պահել ընդմիշտ:

ա) Նամակը հայտնվեց թուրքական լրատվամիջոցներում նախքան Երևան հասնելը: Սրանով հստակ ի ցույց է դրվում նամակի՝ որպես հանրային կարծիքի վրա ազդեցություն գործելու և ոչ թե խնդրին լուծում տալու ցանկությունը: Անշուշտ, կարևոր է նաև ամսաթիվը՝ ապրիլի 10, այսինքն՝ ինչպես ամեն տարի, այս անգամ էլ Թուրքիան քայլ է կատարում ապրիլի 24-ի նախօրյակին՝ օրվա լրահոսը շեղելու և Հայկական լոբբիի պահանջները կատարելու մեջ դժկամ քաղաքական գործիչներին՝ մանևրելու դաշտ

12. *Թուրքիայի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության կայք, http://www.mfa.gov.tr/data/DISPOLITIKA/text-of-the-letter-of-h_e_-prime-minister-recep-tayyip-erdogan-addressed-to-h_e_-robert-kocharian.pdf*

տրամադրելու համար:

բ) Նամակն անմիջապես տարածվել է ԱՄՆ Կոնգրեսում՝ այն բացահայտ ակնարկով, թե հարաբերությունների «նորմալացման» և «կարգավորման» գործընթաց է սկսվել և ԱՄՆ որևէ գործողություն (ինչպես, օրինակ, Կոնգրեսի բանաձևը) կարող են միայն խանգարել: Այստեղ նույնպես համոզվում ենք, որ թուրքական նամակի իրական հասցեատերը ոչ թե ՀՀ Նախագահն էր, այլ միջազգային հանրությունը, մասնավորապես՝ ԱՄՆ օրենսդիրները:

Նամակը հայտնվեց թուրքական լրատվամիջոցներում նախքան Երևան հասնելը: Սրանով հստակ ի ցույց է դրվում նամակի՝ որպես հանրային կարծիքի վրա ազդեցություն գործելու և ոչ թե խնդրին լուծում տալու ցանկությունը:

Հետաքրքիր է նաև այն փաստը, որ թեև ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանը պատասխանել է այս նամակին, սակայն թուրքերը մինչ օրս հաջողությամբ տարածում են այն թյուր կարծիքը, թե Էրդողանի նամակն այդպես էլ մնաց անպատասխան: Այստեղ նաև հայկական կողմն ունի իր մեղավորությունը, քանի որ ի տարբերություն Էրդողանի նամակի, Քոչարյանի պատասխան նամակի լուսապատճենը էականորեն բարդ է գտնել համացանցային որոնման միջոցով[13]:

Այդուհանդերձ, Թուրքիան հասավ այն ընկալմանը, որ կասկածը որպես հայկական պնդումներից պաշտպանվելու միակ ռազմավարություն չի կարելի օգտագործել անվերջ: Անհրաժեշտ էր գտնել մարտավարական նոր հնարք՝ ի հակակշիռ ցեղասպանության վերաբերյալ հայկական փաստերին:

2008 թ. դեկտեմբերին բազմաթիվ լրագրողների, քաղաքական գործիչների ու գիտնականների կողմից Թուրքիայում սկիզբ առավ «Ես ներողություն եմ խնդրում» քարոզարշավը: Նախաձեռնված ստորագրահավաքի տեքստում թուրքերը ներողություն էին խնդրում «...օսմանյան հայերի մեծ ողբերգության համար, որին նրանք ենթարկվեցին 1915 թ.»: Առաջին 24 ժամվա ընթացքում այն ստորագրեց 5000 հոգի, իսկ 2009 թ. հունվարին ստորագրողների թիվն արդեն հասել էր 30 հազարի[14]:

...թուրքական նամակի իրական հասցեատերը ոչ թե ՀՀ Նախագահն էր, այլ միջազգային հանրությունը, մասնավորապես ԱՄՆ օրենսդիրները:

Սույն նախաձեռնությունը շատ լավ փորձաքար էր պարզելու, թե արդյոք Թուրքիան կարող է ճանաչել Հայոց ցեղասպանությունը՝ առանց այն կոչելու ցեղասպանություն: Սա նաև նախանշեց հետագայում ի զեն վերցված մարտավարությունը՝ առաջարկել «Հայոց ցեղասպանություն» եզրի փոխարեն օգտագործել տարբեր մակդիրներ, որոնք չեն պարունակի «ցեղասպանություն» բառը: Ամենևին էլ պատահական չէ, որ հենց առաջիկա ապրիլի 24-ին ԱՄՆ նորընտիր նախագահ Բարաք Օբաման օգտվեց ստեղծված հնարավորությունից ու իր ելույթում օգտագործեց «Մեծ եղեռն» արտահայտությունը[15]:

Այսպիսով, կասկածի ու տարանվանության երկու ռազմավարություններն սկսեցին հավելել միմյանց և հասան իրենց գագաթնակետին Հայոց ցեղասպանության հարյուրամյա տարելիցի նախօրյակին: Թուրքիայի արտաքին գործերի նախարար Դավութօղլուն հրապարակեց 10 էջանոց հոդված՝ առաջ քաշելով «արդար հի-

Սույն նախաձեռնությունը շատ լավ փորձաքար էր պարզելու, թե արդյոք Թուրքիան կարող է ճանաչել Հայոց ցեղասպանությունը՝ առանց այն կոչելու ցեղասպանություն:

13. *Kocharian response to Erdogan letter, 05YEREVAN707_a, http://www.wikileaks.org/plusd/cables/05YEREVAN707_a.html*

14. *Քարոզարշավի կայքէջը՝ http://www.ozurdillyoruz.com/*
15. *Statement of President Barack Obama on Armenian Remembrance Day, The White House, April 24, 2009, http://www.whitehouse.gov/the_press_office/Statement-of-President-Barack-Obama-on-Armenian-Remembrance-Day*

շողության» գաղափարը, որով փորձեց հավասարության նշան դնել Հայոց ցեղասպանության զոհերի և Առաջին աշխարհամարտում սպանված թուրքերի միջև՝ օգտագործման մեջ դնելով մեկ այլ բանալի բառ՝ «ընդհանուր ցավ»[16]:

Այս հոդվածին միացավ նաև Թուրքիայի վարչապետ Էրդողանի հայտարարությունը, բնականաբար, ապրիլ 24-ի նախօրյակին, որում նա «1915 թ. դեպքերի» մասին խոսելիս նշում է, թե «այդ տարիները բարդ ժամանակաշրջան էր, որը լի էր տանջանքներով թուրք, քուրդ, արաբ, հայ և Օսմանյան կայսրության միլիոնավոր այլ քաղաքացիների համար՝ անկախ նրանց կրոնական կամ ազգային պատկանելությունից»: Զոհված հայերի թոռներին իր ցավակցությունը հաղորդելուն զուգահեռ Էրդողանը նորից կրկնում է պատմաբանների հանձնաժողով ստեղծելու իր առաջարկը՝ «գիտական կերպով 1915 թ. դեպքերը ուսումնասիրելու նպատակով»[17]: Անշուշտ, միջազգային մամուլը կոլ տվեց խայծը, և ապրիլի 24-ի լրահոսը լի էր «Թուրքիան ցավակցում է հայերին» բնույթի վերնագրերով:

...թուրքական կողմը հստակորեն հասկանում է, որ գաղափարների պայքարում նրա թիրախը ոչ թե հայկական լսարանն է, այլ միջազգային հանրությունը:

Այստեղ կրկին ուշադրության է արժանի այն փաստը, որ նախքան Էրդողանի հայտարարությունը կհասներ Հայաստան, այն արդեն տարածվել էր թուրքական լրատվամիջոցների կողմից՝ ինը լեզուներով: Այսինքն, թուրքական կողմը հստակորեն հասկանում է, որ գաղափարների պայքարում նրա թիրախը ոչ թե հայկական լսարանն է, այլ միջազգային հանրությունը: Ինչպես բանավեճի շատ դպրոցներ, և մասնավորապես սոփեստներն են ուսուցանում՝ բանավեճի ժամանակ խնդիրը ոչ թե քո գաղափարը ապացուցելն է մրցակցիդ, այլ համոզելը դատավորներին ու հատկապես լսարանին:

16. *Ahmet Davutoğlu, Turkish–Armenian Relations: Is a "Just Memory" Possible?, Turkish Policy Quarterly, Spring 2014, p. 28*
17. *Jonny Hogg, Turkey's Erdogan offers condolences for 1915 Armenia killings, Reuters, Apr 23, 2014, http://www.reuters.com/article/2014/04/23/us-turkey-armenia-erdogan-idUSBREA3M0XN20140423*

Էրդողանի ապրիլ 23-ի ուղերձը Անկարայի ժխտողականության նույն արտահայտությունն է՝ նոր փաթեթավորմամբ ու ավելի լավ նախապատրաստված: Թուրքական ժխտողականությունը շարունակվում է՝ շարունակելով Հայոց ցեղասպանությունը:

...բանավեճի ժամանակ խնդիրն է ոչ թե քո գաղափարը ապացուցել մրցակցիդ, այլ համոզել դատավորներին ու հատկապես լսարանին:

ԿԱՆԽԱՄՏԱԾՎԱԾՈՒԹՅԱՆ ՓԱՍՏՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ցեղասպանությունը որպես հանցագործություն նախապատրաստվում և իրականացվում է պետության կողմից: Ցեղասպանություն հանցագործության հատուկ տարրերից մեկը, որով նա տարբերվում է ուրիշ հանցագործություններից, հատուկ մտադրությունն է: Դրանով էլ այն տարբերվում է նմանատիպ այլ, գուցե ավելի արյունալի, հանցագործություններից: Օրինակ՝ կոտորածի ժամանակ կանխամտածվածություն չկա: Ինչպես սպանությունը և կանխամտածված սպանությունը տարբերվում են ծանրության աստիճանով, ցեղասպանության ամենակարևոր առանձնահատկությունն էլ կանխամտածվածության գոյությունն է՝ ի տարբերություն զանգվածային սպանության այլ ձևերի: Ուստի՝ ցեղասպանությունը գնահատելիս պահանջվում է հաստատել կանխամտածված լինելը, ինչը կարելի է անել երկու մեթոդով[18]:

Ցեղասպանություն հանցագործության հատուկ տարրերից մեկը, որով նա տարբերվում է ուրիշ հանցագործություններից, հատուկ մտադրությունն է:

Առաջինը՝ փաստաթղթերի առկայությամբ: Այսինքն՝ ներկայացնել փաստաթուղթ կամ փաստաթղթերի մի շարք, որտեղ գրված է, որ մարդկանց տվյալ խումբը լիովին պետք է ոչնչացնել: Գրավոր փաստաթուղթ, իհարկե, կարող է և չլինել, որովհետև և Նացիստական Գերմանիայում, և Օսմանյան կայսրությունում, և Ռուանդայում բոլորը հասկանում էին, որ ցեղասպանությունն այն հանցագործություններից է, որոնք պատժելի են բոլոր դեպքերում: Ուստի, այդ ժամանակ մասնագետները դիմում են երկրորդ մեթոդին՝ գործողությունների ընդհանուր վերլուծությանը, երբ ամբողջ հանցագործությունը, բոլոր արարքները ուսումնասիրում են և տեսնում, որ բոլոր արարքների ընդհանրությունը ցույց է տալիս, որ գոյություն է ունեցել կանխամտածվածություն (intent)[19]:

18. *Հարցազրույց Ռ. Սաֆրաստյանի հետ:*

Փաստաթղթերի առումով պետք է հաշվի առնել այն, որ ցեղասպանությունը հանցագործություն է, իսկ ամեն մի հանցագործ փորձում է թաքցնել ամեն մի հանցագործություն: Դրա համար շատ դեպքերում փաստաթղթեր դժվար է գտնել: Հրեաների ցեղասպանության դեպքում մի փաստաթուղթ կա, որը բացահայտում է Հոլոքոստի կանխամտածվածությունը: Դա Վանզեեի՝ 1942 թվականի հունվարի 20-ի խորհրդակցության արձանագրությունն է:

Ինչպես սպանությունը և կանխամտածված սպանությունը տարբերվում են ծանրության աստիճանով, ցեղասպանության ամենակարևոր առանձնահատկությունն էլ կանխամտածվածության գոյությունն է՝ ի տարբերություն զանգվածային սպանության այլ ձևերի:

Վանզեեի կոնֆերանսը նացիստական սպայակույտի բարձր մակարդակի խորհրդակցություն էր, որը տեղի ունեցավ 1942 թ. հունվարի 20-ին՝ Բեռլինի Վանզեե լճի ափին, որպեզի քննարկեն հրեական հարցի «վերջնական լուծումը»:

Ժողովը կազմակերպվել էր գեստապոն և անվտանգության ծառայությունը վերահսկող Ռեյխի անվտանգության գլխավոր գրասենյակի ղեկավար Ռայնհարդ Հայդրիխի կողմից: Հավաքվել էին 14 էսէսական ավագ սպա, նացիստական կուսակցության պաշտոնյաներ ու քաղաքացիական ծառայողներ: Հայդրիխի ենթականերից Ադոլֆ Այխմանը նոթեր է գրի առել և հետագայում երեսուն օրինակ բաժանել մասնակիցներին ու հանդիպմանը առնչություն ունեցող այլ անձանց: Միակ օրինակը՝ թիվ 16-ը, գտնվել է 1947 թ. մարտին, գերմանական արտաքին գործերի նախարարության փաստաթղթերում՝ պատերազմի հանցագործություններն ուսումնասիրող ամերիկացի քննիչների կողմից: Կարճ ժամանակում այս նոթերը կամ Վանզեեի

19. *Հարցազրույց Վ. Վարդանյանի հետ:*

արձանագրությունը դարձան հայտնի[20]:

«Մեծ, միասեռ աշխատանքային ճամբարներում աշխատանքի ունակ հրեաները պետք է դեպի արևելք գնացող ճանապարհներ կառուցեն: Անկասկած նրանց ճնշող մեծամասնությունը կվերացվի բնական պատճառներով: Բոլոր մնացյալ վերապրածները անկասկած կլինեն ամենադիմացկուն տարրերը: Դրանց հետ պետք է վարվել համապատասխան, քանի որ այլապես, բնական ընտրությամբ, նրանք կկազմեն նոր հրեական վերածննդի սաղմը[21]»:

«Մեծ, միասեռ աշխատանքային ճամբարներում աշխատանքի ունակ հրեաները պետք է դեպի արևելք գնացող ճանապարհներ կառուցեն»:

Տեքստում բազում անգամ տեղ է գտել այն արտահայտությունը, թե «հրեական հարցը պետք է ենթարկվի վերջնական լուծման», ինչը և հանգեցնում է Հոլոքոստի կանխամտածված լինելու պնդմանը:

Վանզեեի խորհրդակցության նման մի գաղտնի խորհրդակցություն էլ տեղի է ունեցել 1915 թ. հունվարի վերջերին: Այդ խորհրդակցությանը մասնակցել են Օսմանյան կայսրության 5 ղեկավար գործիչներ՝ Թալեաթը (ներքին գործերի նախարար և երիտթուրքական կուսակցության փաստացի ղեկավար), երիտթուրքական կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներ և «հատուկ կազմակերպության» ղեկավարներ՝ Բեհաեդդին Շաքիրը և դոկտոր Նազիմը, ներքին գործերի հասարակական անվտանգության վարչության պետ Իսմայիլ Ջանփոլադը, ով հետագայում արդեն նշանակվել է մայրաքաղաքի՝ Կոստանդնուպոլիսի նահանգապետ, և օսմանյան բանակի գլխավոր շտաբի քաղաքական վարչության պետ, գնդապետ Սեյֆին, ով հայտնի էր իր մոտիկ հարաբերություններով Էնվերի հետ, որը ռազմա-

20. http://www.jewishvirtuallibrary.org/jsource/Holocaust/wannsee.html
21. http://www.jewishvirtuallibrary.org/jsource/Holocaust/Wannsee_Protocol.html

կան նախարարն էր[22]: Խորհրդակցությանը ներկա է եղել նաև ներքին գործերի նախարարության հետախուզական վարչության պետ, գնդապետ Էսադը, ով գրի է առել փաստաթուղթը և հետագայում հանձնել այն բրիտանացիներին:

Այդ խորհրդակցության ընթացքում ընդունվել է 10 կետից բաղկացած որոշում, որը հայտնի է որպես «10 պատվիրաններ»: Հանրությանը նրա գոյության մասին հայտնի է դարձել 1919 թ. Կ. Պոլսի հայկական լրագրերի հրապարակումներից, որոնք տպագրել են նրա հայերեն թարգմանությունը[23]: Այս փաստաթղթի մասին անգլիական արխիվներից նյութեր է գտել ցեղասպանագետ Վահագն Դադրյանը, ով և հրապարակել է «10 պատվիրանների» տեքստը[24].

Վանզեեի կոնֆերանսը նացիստական սպայակույտի բարձր մակարդակի խորհրդակցություն էր, որը տեղի ունեցավ 1942թ. հունվարի 20-ին՝ Բեռլինի Վանզեե լճի ափին, որպեսզի քննարկեն հրեական հարցի «վերջնական լուծումը»:

1. Համաձայն «Միություն և առաջադիմություն» կոմիտեի կանոնակարգի 3-րդ ու 4-րդ կետերի՝ փակել բոլոր հայկական միությունները և ձերբակալել բոլոր նրանց, ովքեր երբևիցե գործել են կառավարության դեմ, և ուղարկել նրանց այնպիսի նահանգներ, ինչպիսիք են Բաղդադը կամ Մոսուլը, և ոչնչացնել նրանց ճանապարհին կամ տեղում:
2. Բռնագրավել զենքերը:
3. Համապատասխան ու հատուկ միջոցներով գրգռել

22. Այս հինգ դերակատարների մասին ավելի մանրամասն տես՝ Ռ. Սաֆրաստյան, Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Եր., 2009, 246 էջ:
23. Ռ. Սաֆրաստյան, էջ 168-169:
24. Vahakn N. Dadrian, The Secret Young-Turk Ittihadist Conference and the Decision for the World War I Genocide of the Armenians, Holocaust Genocide Studies (1993) 7 (2): 173-201.

մահմեդականներին հայերի դեմ. այնպիսի վայրերում, ինչպիսիք են՝ Վանը, Էրզրումը, Ադանան, որտեղ հայերը, փաստորեն, արդեն արժանացել էին մահմեդականների ատելությանը, հրահրել կազմակերպված կոտորածներ՝ ինչպես ռուսները դա արեցին Բաքվում:

Համապատասխան ու հատուկ միջոցներով գրգռել մահմեդականներին հայերի դեմ՝ այնպիսի վայրերում, ինչպիսիք են՝ Վանը, Էրզրումը, Ադանան,

4. Էրզրումի, Վանի, Մամուրեթ-ուլ-Ազիզի ու Բիթլիսի նահանգներում թողնել գործադրումը ժողովրդին, ի հակառակ դրան՝ այնպիսի տեղերում, ինչպիսիք են՝ Ադանան, Սըվազը, Բուրսան, Իզմիթը ու Զմյուռնիան ակտիվորեն օգնել մահմեդականներին զինված ուժերով (այսինքն՝ ժանդարմերիայով):
5. Իրականացնել միջոցառումներ՝ մինչև 50 տարեկան բոլոր տղամարդկանց, հոգևորականներին և ուսուցիչներին ոչնչացնելու համար և թողնել աղջիկներին ու երեխաներին՝ մահմեդականացնելու նպատակով:
6. Տեղահանել բոլոր այն ընտանիքներին, որոնց կհաջողվի փրկվել, և իրականացնել միջոցառումներ՝ նրանց կապերն իրենց ծննդավայրերի հետ կտրելու համար:
7. Քանի որ հայ պաշտոնյաները կարող են լինել լրտեսներ, նրանց լիովին հեռացնել բոլոր պետական գերատեսչություններից կամ պաշտոններից:
8. Օգտագործելով համապատասխան միջոցներ սպանել բանակում գտնվող բոլոր հայերին՝ դրա իրականացումը թողնելով զինված ուժերին:
9. Բոլոր գործողություններն ամենուրեք սկսել միաժամանակ՝ այդպիսով ժամանակ չթողնելով պաշտպանական միջոցառումների նախապատրաստմանը:
10. Ուշադրություն դարձնել այս հրահանգների հույժ գաղտնի պահպանմանը, դրանք հայտնի չպետք է լինեն 2-3 հոգուց ավելի մարդկանց:

Կասկած չկա, որ այդ 10 կետերը վերաբերում են հայ ժողովրդի տեղահանությանը, քաղաքական տարբեր միջոցներով ոչնչացմանը: Ըստ էության, երբ համեմատում ենք, թե ինչ է տեղի ունեցել իրականում, տեսնում ենք, որ այդ 10 կետերը հստակորեն իրականացվել են[25]:

Ինչո՞վ են կարևոր այս խորհրդակցությունն ու դրան մասնակից անձինք: Օսմանյան կայսրությունում միակուսակցական համակարգ էր և, Խորհրդային Միության նմանությամբ, այն ղեկավարվում էր «политбюро»-ի՝ կուսակցության Կենտկոմի կողմից: Որոշումներն ընդունում էին կուսակցության կենտկոմի անդամները, իսկ տեղերում վալիներից՝ մարզպետներից ավելի ազդեցիկ էին կենտկոմի ներկայացուցիչները: Կուսակցության կենտկոմի ազդեցիկ միջուկը բաղկացած էր հիմնականում հենց վերոհիշյալ խորհրդակցությանը մասնակցած անձանցից՝ Թալեաթ, Նազըմ, Բեհաեդդին Շաքիր: Իսկ Թալեաթը թե ներքին գործերի նախարարն էր, այսինքն՝ ուներ պաշտոնական դիրք, և թե կենտկոմի կարևորագույն դեմքերից էր: Նա և՛ կարևոր դերակատարում է ունեցել Հայոց ցեղասպանության վերաբերյալ որոշում ընդունելու, և՛ թե այն ի կատար ածելու մեջ:

Իրականացնել միջոցառումներ՝ մինչև 50 տարեկան բոլոր տղամարդկանց, հոգևորականներին և ուսուցիչներին ոչնչացնելու համար և թողնել աղջիկներին ու երեխաներին՝ մահմեդականացնելու նպատակով:

1915 թ. մայիսի 24-ին Անտանտի երեք երկրները՝ Ռուսաստանը, Ֆրանսիան, Անգլիան, հանդես եկան հայտարարությամբ, որտեղ խստագույնս դատապարտում են հայերի զանգվածային կոտորածները, պատմության մեջ առաջին անգամ օգտագործում են «հանցագործություն

25. *Այդ փաստաթուղթը գրի է առնվել (խորհրդակցությանը մասնակցող–խմբ.) վեցերորդի՝ գնդապետ Էսադի կողմից: Երբ 1919 թվականին անգլիական հետախուզությունը ձերբակալել է նրան, նա (գնդապետը–խմբ.) այդ փաստաթուղթը փորձել է սկզբից վաճառել անգլիացիներին: Արդյունքում ստացել է իր ազատությունը՝ այդ փաստաթուղթը տալով անգլիացիներին:*

մարդկության դեմ» արտահայտությունը և նշում, որ օսմանյան կառավարության անդամները անձամբ պատասխան կտան այդ հանցագործության համար: Նույն օրը ֆրանսերեն տեքստը տարածվում է «Ավաս» (Havas) գործակալության կողմից և հեռագրով հասնում է Կոնստանդնուպոլիս:

Թալեաթի մոտ, ըստ երևույթին, առաջացել էր մտավախություն, որ ողջ մեղքն այդ ոճրագործությունների համար հետագայում կբարդվի միայն իր վրա: Թալեաթը հանգում է այն մտքին, որ պետք է լինի կառավարության որոշում, որպեսզի պատասխանատվությունը տարածվի բոլորի վրա:

Օգտագործելով համապատասխան միջոցներ՝ սպանել բանակում գտնվող բոլոր հայերին:

Արդեն երկու օր անց՝ մայիսի 26-ին, նրա կողմից պատրաստված տեքստով բանակի գլխավոր հրամանատարությունը դիմում է ներքին գործերի նախարարությանը՝ առաջարկելով հայերի տեղահանությունը[26]: Ի պատասխան այդ գրության Թալեաթը ներքին գործերի նախարարության անունից գաղտնի զեկուցագրով դիմում է կառավարությանը՝ պահանջելով տեղահանել պատերազմական շրջանների հայ ազգաբնակչությանը:

Առանց կառավարության նիստ հրավիրելու, Թալեաթի զեկուցագիրը քննարկելու և կառավարության համապատասխան որոշում ընդունելու արդեն հաջորդ օրը՝ մայիսի 27-ին, հապճեպ ընդունվում է «Պատերազմի ժամանակ կառավարության գործունեության դեմ դուրս եկողների համար ռազմական տեսանկյունից առնվելիք միջոցների մասին ժամանակավոր օրենք» վերտառությամբ օրենքը, որն ավելի հայտնի է որպես «Տեղահանության օրենք»: Թեև օրենքն արդեն ընդունվել էր, բայց այդուհանդերձ, մայիսի 30-ին տեղի է ունենում կառավարության նիստ, որտեղ քննարկվում է Թալեաթի զեկուցագիրը և ընդունվում որոշում՝ սկսել տեղահանությունը: Որոշման տեքստը հրապարակված է Թուրքիայի պետական արխիվների կողմից: Իսկ հունիսի 1-ին «Տեղահանության օրենքը» հրապարակվում է պաշտոնաթերթում, ինչով և մտնում է ուժի մեջ:

26. *Ռ. Սաֆրաստյան, էջ 176:*

Սակայն ամեն դեպքում պետք է նկատի ունենալ, ինչպես արդեն նշել ենք, որ Օսմանյան կայսրությունում կար կառավարման զուգահեռ մեխանիզմ: Կառավարությունն իր նահանգապետներին պաշտոնական խողովակներով ուղարկում էր հայերին բռնագաղթի ենթարկելու պաշտոնական հրամանը: Միևնույն ժամանակ երիտթուրքերն իրենց կենտկոմի անունից կուսակցական խողովակներով ուղարկում էին հայերին բնաջնջելու հրամանը[27]:

Կառավարությունն իր նահանգապետներին պաշտոնական խողովակներով ուղարկում էր հայերին բռնագաղթի ենթարկելու պաշտոնական հրամանը: Միևնույն ժամանակ երիտթուրքերն իրենց կենտկոմի անունից կուսակցական խողովակներով ուղարկում էին հայերին բնաջնջելու հրամանը:

Բացի այդ հայտնի է, որ Թուրքիայի Հանրապետության տարիներին գործել է հատուկ հանձնաժողով, որն զբաղվել է նմանատիպ փաստաթղթերի ոչնչացմամբ, և եթե անգամ հիմա փորձեն գտնել դրանք, ապա կգտնեն այն, ինչ վրիպել է այդ հանձնաժողովի ուշադրությունից: Փաստաթղթերի մեծ ծավալն ու դրանց՝ օսմաներեն արաբատառ թուրքերենով գրված լինելը թույլ է տվել, որ որոշ փաստաթղթեր սպրդեն, սակայն հակառակ թուրքական արխիվների այդքան զտումների՝ որոշակի փաստաթղթեր ի հայտ են բերվել և՛ հայ, և՛ օտարազգի հետազոտողների կողմից: Այս առումով պետք է շեշտը դրվի օսմանյան ժամանակաշրջանի դատավարությունների, փաստաթղթերի և նյութերի վրա, քանի որ հայերի տեղահանության և կոտորածների դատավարության ընթացքում տեղի են ունեցել շուրջ 60 դատական գործեր: Դրանց մեջ հատկապես կարևորվում են «Միություն և առաջադիմություն» կուսակցության և կառավարության ան-

27. *Հարցազրույց Ռ. Սաֆրաստյանի հետ:*

դամների դատավարությունները: Այս երկու դատավարությունների համար ընդհանուր մեղադրական ակտ էր կազմվել, որտեղ օգտագործվել էր 41 փաստաթուղթ: Հենց այդ մեղադրական ակտում ընդգրկված են բազմաթիվ հեռագրեր, որոնց հավաստիությունը հատուկ ուսումնասիրության առարկա դարձավ Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարարության իրավասուների կողմից[28]:

Այսպես, 1919-1920 թթ., թեև նույնիսկ որոշ փաստաթղթեր արդեն ոչնչացված էին, հենց Թուրքիայում, թուրքական դատարաններում տեղի ունեցած դատավարությունների ժամանակ օգտագործվեցին փաստաթղթեր, որոնք հաստատում էին կատարվածը, և շատ հստակ հաստատվեց, որ երիտթուրքերի իշխանությունն ունեցել է Օսմանյան կայսրության մեջ հայությանը հիմնահատակ ոչնչացնելու որոշում:

Ամեն դեպքում ակնկալել, որ պետք է լինի ինչ-որ մի փաստաթուղթ, որն ապացուցի, թե եղել է նման որոշում, դա նույնպես ծուղակ է. որևէ ցեղասպանության համար չկա որևէ նման պաշտոնական փաստաթուղթ: Նույնիսկ հատուկ դատարաններով դատված՝ ավելի ուշ իրականացված ցեղասպանությունների ժամանակ[29]:

Ցեղասպանության գնահատման երկրորդ մեթոդը գործողությունների ընդհանուր վերլուծությունն է: Եթե հնարավոր չէ վեր հանել հատուկ մտադրությունը ինչ-որ փաստաթղթերից, այն կարելի է վեր հանել ընդհանուր տեղի ունեցած պատմաշարից՝ զոհերի քանակ, թիվ, վերաբերմունք, ընդհանուր քաղաքականություն, որն ուղղված էր հայ էթնիկ խմբի կամ հայ էթնիկ ազգային ու կրոնական խմբի հետապնդմանը: Այսինքն, քանի որ մտադրությունը հստակ փաստաթղթերով դժվար է ապացուցել բոլոր ցեղասպանությունների պարագայում (օրինակ՝ նույն Ռուանդայում), ապա առաջարկվում է դիտարկել, թե առկա՞ է արդյոք խումբը ճնշելու կամ խումբը ոչնչացնելու քաղա-

28. *Հարցազրույց Մ. Անումյանի հետ:*
29. *Հարցազրույց Կ. Մանոյանի հետ:*

քականություն, թե՞ ոչ[30]:

Հիմնականն այն է, որ և՛ որոշումները, և՛ գործողություններն արդեն վկայում են այն մասին, որ նման ձեռագիր եղել է: Այս փաստաթղթերի մեջ կարևորագույններից է Թալեաթ փաշայի, այսպես կոչված, «Սև ծոցատետրը» կամ նոթատետրը, որի մեջ նա արձանագրել է բնակչության շարժերն ամբողջ Օսմանյան կայսրությունում: Դա նրա ձեռագիրը չէ, նրա համար պատրաստել են ձեռագիր վիճակով՝ քարտեզներով, թվերով: Երբ հրապարակվեց այդ նոթատետրը, Թուրքիայում փորձեցին վիճարկել նրա իսկական լինելը, որովհետև այն մնացել էր Թալեաթ փաշայի կնոջ մոտ և կինը մոտ 10-12 տարի առաջ հանձնել էր մի լրագրողի՝ Մուրատ Բարդաքչիին, ով այն հրապարակեց մի քանի տարի հետո: Թալեաթի այդ նոթատետրի տվյալներով՝ 1916 թ. վերջին Օսմանյան կայսրությունում կար մոտ մեկ միլիոնից քիչ հայ: Այսինքն՝ 1916 թ.-ի վերջին արդեն սպանվել էր մոտ մեկ միլիոն հայ: Թալեաթն՝ ինքը մի քանի ամիսը մեկ անգամ նահանգապետերին հեռագիր շրջաբերականներ է հղել հստակ հարցումներով՝ որքան հայ կա շրջանում, որքան է տեղահանվել, որքանն է այլ շրջաններից եկել, որքան են մնացել և այլն: Այս բոլոր շրջաբերականներն ու նրանց պատասխանները մնացել են Թուրքիայի արխիվներում և նրանց հիման վրա պատմաբան Արա Սարաֆյանը հրապարակել է աշխատություն: Նաև թուրքերենով հրատարակված այդ աշխատությունը ևս անտեսության մատնվեց Թուրքիայում, որովհետև հիմնված է անառարկելի փաստերի վրա, և պատմական փաստը ժխտողները ասելիք չունեն[31]:

Կան բազում և տարատեսակ փաստաթղթեր, որոնք ներկայացնում են, որ քրիստոնյաներին ոչնչացնելու երիտթուրքերի քայլերը քաղաքականության բնույթ ունեին: Հայերի ցեղասպանությունը կանխամտածված էր: Ոչ միայն հայկական, այլև բրիտանական, ռուսական, ավստրիական,

30. *Հարցազրույց Վ. Վարդանյանի հետ:*
31. *Հարցազրույց Կ. Մանոյանի հետ:*

գերմանական, ամերիկյան, Վատիկանի արխիվները պարունակում են շատ նյութեր, որոնք փաստում են, որ հայերի ջարդերը երիտթուրքական կառավարության կողմից պատահական կամ անսպասելի չէին: Թուրք պրոֆեսոր Թաներ Աքչամի «Երիտթուրքերի՝ մարդկության դեմ հանցագործությունը. Հայոց ցեղասպանությունն ու ազգային զտումները Օսմանյան կայսրությունում» գիրքը պարունակում է ավելի քան 600 օսմանյան գաղտնի փաստաթղթերի վկայություն, որոնք աննախադեպ կերպով մանրամասնորեն փաստում են, որ Հայոց ցեղասպանությունն իրենից ներկայացնում էր քրիստոնյա տարրերից ձերբազատվելու պաշտոնական ծիգ[32]:

Թուրքիայի դաշնակից Գերմանիայի զինվորականներն ու դիվանագետներն իրենց զեկույցներում փաստել են, որ Օսմանյան կայսրության իշխանությունները որոշել են ոչնչացնել հայերին:

Գործընթացը հասկանալու համար, պետք է խոսել նաև ականատեսների մասին: Նույն Թուրքիայի դաշնակից Գերմանիայի զինվորականներն ու դիվանագետներն իրենց զեկույցներում փաստել են, որ Օսմանյան կայսրության իշխանությունները որոշել են ոչնչացնել հայերին: Եվ դրանք ևս արդեն բավարար հիմքեր են, որ ցույց տան կատարվածի ծրագրված ու կանխամտածված լինելը[33]:

Անշուշտ, ականատեսների վկայությունները, դիվանագետների, լրագրողների ու քրիստոնյա քարոզիչների զեկույցները հավելյալ փաստեր են ներկայացնում առ այն, որ Հայոց ցեղասպանությունը կանխամտածված էր[34]:

Այնպես որ ծրագրավորվածության և միտումի խնդիրը ապացուցված է բազմաթիվ փաստերով, վկայություններով, և հակառակ պնդումը չի դիմանում որևէ լուրջ քննադատության[35]:

32. *Հարցազրույց Ա. Խոսրոևայի հետ:*
33. *Հարցազրույց Կ. Մանոյանի հետ:*
34. *Հարցազրույց Ա.Խոսրոևայի հետ:*
35. *Հարցազրույց Ա.Մարուքյանի հետ:*

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ԹԻՎԸ

Հայերի թվաքանակի հարցը Օսմանյան կայսրությունում և, մասնավորապես, Արևմտյան Հայաստանում մշտապես վիճարկման առարկա է եղել: Հայերի թվաքանակի վերաբերյալ գլխավորապես օգտվում են երկու աղբյուրից՝ մեկը թուրքական վիճակագրական տվյալներն են, մյուսը՝ Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանի տվյալները:

Դեռևս նախքան Հայոց ցեղասպանությունը թուրքական վիճակագրությունը քաղաքական նկատառումներով ամեն կերպ փորձում էր նսեմացնել, նվազեցնել հայերի թվաքանակը, որպեսզի ավելի չեզոքացնի Հայկական հարցից բխող սպառնալիքը: Բարձր Դուռը փոքրացնում էր հայերի թիվը, որովհետև երբ մարդասիրական միջամտություններ էին տեղի ունենում, մեծ տերություններն անընդհատ խոսում էին հայերի իրավունքների պաշտպանության մասին ու այդ պատրվակով միջամտում կայսրության ներքին գործերին: Ուստի, օսմանյան իշխանությունները ամեն կերպ ջանում էին պակասեցնել հայերի թիվը, որ ցույց տային, որ նրանք այդքան էլ մեծաթիվ չեն, որ նրանց իրավունքների կամ շահերի պաշտպանության մասին խոսք լինի: Պետք է նշել, որ նախքան 1878 թ. թուրքական կառավարությունը պաշտոնապես ճանաչում էր, որ Օսմանյան կայսրությունում բնակվում է շուրջ 2 400 000 հայ, սակայն Հայկական հարցի՝ միջազգային ասպարեզում հայտնվելուց հետո անցկացված օսմանյան մարդահամարների տվյալներով հայերի թիվն իջեցվեց շուրջ երկու անգամ՝ երբեք չգերազանցելով 1 200 000-1 300 000-ը[36]:

Մյուս կողմից՝ կարող է պարադոքսալ թվալ, բայց օսմանահպատակ հայերը, հատկապես՝ հայ գյուղացիությունը, ևս շահագրգիռ էր իր թիվը պակաս ցույց տալու հարցում՝ գլխահարկից, իսկ հետագայում դրան փոխարինելու եկած

36. *Հարցազրույց Ռ. Թաթոյանի հետ:*

զինվորագրության փոխարեն գանձվող հարկի («բեդել-ի ասքերիե») վճարումից խուսափելու համար՝ իր թիվը թաքցնելով ինչպես օսմանյան կառավարությունից, այնպես էլ, շատ դեպքերում, Կ. Պոլսի հայոց պատրիարքարանից[37]: Իր հերթին, Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանը չէր ուզում կամ չէր կարող դիմադրել արևմտահայության թվաքանակի նվազեցման միտմանը: Սա ուներ երկու պատճառ: Նախ՝ երկար ժամանակ, հատկապես մինչև 1878 թ. Պատրիարքարանն էր պատասխանատու հայ համայնքից հարկերը հավաքելու ու Բարձր Դռանը փոխանցելու համար, ու, հաշվի առնելով հարկային ծանր քաղաքականության հանգամանքը, բնական է, որ եթե ավելի ստույգ տվյալներ ներկայացվեին, ապա հարկերն էլ ավելի շատ պետք է վճարվեին: Բացի դրանից, Պատրիարքարանը հայերի թիվը պակասեցնում էր կրոնական հալածանքները մեղմելու նպատակով:

Պետք է նաև նշել պանդխտության և մշտական միգրացիաների մասին, որոնք անընդհատ առկա էին Արևմտյան Հայաստանում: Հարկային ծանր բեռի տակ շատերը տեղափոխվում էին Կ. Պոլիս, լքում էին երկիրը՝ փորձելով այլ երկրներում կամ Օսմանյան կայսրության այլ մասերում իրենց աշխատանքով օգտակար լինել իրենց ընտանիքներին[38]: Բացի այդ պետք է ի նկատի ունենալ, որ Պատրիարքարանը պատասխանատու էր առաքելական/լուսավորչական համայնքի ներկայացուցիչների համար: Մասնավորապես բողոքական ու կաթոլիկ հայերը, ովքեր բավականին ստվար թիվ էին կազմում, դուրս էին այս հաշվարկներից: Գաղտնիք չէ, որ հայերը, ազդվելով արևմտյան տարբեր քարոզիչների ու բարեգործական առաքելությունների կողմից, մեծ քանակությամբ, երբեմն գյուղերով, փոխում էին իրենց դավանանքը, հուսալով վարել ավելի ապահով կյանք ու ստանալ տվյալ առաքելության հովանավորչությունը:

37. *Հարցազրույց Ռ. Թաթոյանի հետ:*
38. *Հարցազրույց Ա. Մարուքյանի հետ:*

Ամեն դեպքում, անգամ ըստ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի իրականությունից ցածր տվյալների՝ Մեծ եղեռնի նախօրյակին Օսմանյան կայսրության տարածքում բնակվում էր 2 միլիոնից ավելի հայ,[39] և անհնար էր, որ այդ 2 միլիոնը միանգամից անհետանար:

Բազմաթիվ օտարերկրյա աղբյուրներ հաստատում են Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի տվյալը կամ ավելի բարձր են ցույց տալիս հայ բնակչության թիվը: Դեռ 1916 թ. հոկտեմբերին Կ. Պոլսում գերմանացի հյուպատոս Ռադովիցը իր զեկույցում գրում է, որ երկուսուկես միլիոն հայերից բռնագաղթի են ենթարկվել 2 միլիոնը, որոնցից 425 հազարը փրկվել է ու մոտ մեկուկես միլիոնը՝ կոտորվել[40]:

Օսմանյան կայսրության միգրացիոն քաղաքականությունը

Դեռ վաղ օսմանյան ժամանակաշրջանից ի վեր օսմանյան վարչարարները կարողացել են լավագույնս կառավարել մարդկային հոսքերն ու բռնագաղթերը[41]:

Թուրքերի կողմից բռնագաղթի ու վերաբնակեցման քաղաքականության օրինակներ կարելի է բերել թե վաղ՝ օսմանյան, թե նորագույն՝ հանրապետական շրջանից: Լավագույն օրինակը, թերևս, Կիպրոսն է: 1572 թ. սեպտեմբերի 24-ի հրամանով «Անատոլիայի, Սըվազի, Քարամանի ու Ջյուլքադրիյեի մարզերից ամեն տասներորդ ընտանիքը պետք է ուղարկվեր Կիպրոս»՝ նոր գրավյալ կղզին բնակեցնելու ու անվտանգություն ապահովելու նպատակով:

39. *Տես Kevorkian R., Paboudjian P.B., Les Armeniens dans l'Empire ottoman a la veille du Genocide, Paris, ARHIS, 1992, p. 57-60;*
40. *Der Geschäftsträger der Botschaft Konstantinopel (Radowitz) an den Reichskanzler (Bethmann Hollweg), Therapia, den 4. Oktober 1916, Link: http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1916-10-04-DE-002;*
41. *Թեմայի մասին ավելի մանրամաս տես՝ Արտակ Շաքարյան, Մերձավոր Արևելք(II): Պատմություն, քաղաքականություն, մշակույթ: Հոդվ. ժող.; Խմբ. խորհ.՝ Ն.Հ. Հովհաննիսյան և ուրիշներ: ՀՀ ԳԱԱ Արևելագիտ. ին-տ. Երևան:Զանգակ-97, 2005., էջ 59-62;*

Բռնագաղթյալներն ընտրվում էին գյուղացիների ու արհեստավորների շարքից, և նրանց երկու տարով ազատվում էին հարկերից նոր բնակավայրում[42]: Հետաքրքրական է, որ նույնը արվեց նաև 1974 թ. Կիպրոսի հյուսիսային մասի գրավումից հետո՝ Թուրքիայի Հանրապետության տարբեր, հիմնականում թերզարգացած նահանգներից տասնյակ հազարավոր ընտանիքներ տեղափոխվեցին Հյուսիսային Կիպրոս՝ թուրքերի քանակը բազմացնելու նպատակով[43]:

18-րդ դարավերջից հետո, սակայն, Օսմանյան կայսրության բռնագաղթային-վերաբնակեցման քաղաքականությունը տարվում էր արդեն ոչ թե նոր զավթած տարածքները բնակեցնելու, այլ պարտություններից հետո կորուսյալ տարածքներից փախչող մուսուլմաններին՝ իր սահմաններում տեղավորելու նպատակով: Նախ՝ Ղրիմի կորուստը իր հետ բերեց Ղրիմի թաթարների անկառավարելի հոսք, ինչը հետագայում շարունակվեց նաև Հյուսիսային Կովկասի մուսուլմանների գաղթով: Սակայն առավել նշանակալի էին գաղթերը Բալկաններից, որտեղ ազգային անկախության համար պայքարող տեղացիներն անխնա կերպով վրեժխնդիր էին լինում մուսուլման-թուրք բնակչության հանդեպ: Վերջիններիս գաղթի նոր ալիք բարձրացավ 1877-1878 թթ. Ռուս-թուրքական պատերազմից հետո, երբ նորանկախ Բուլղարիայում մուսուլման բնակչության թիվը էականորեն նվազեց[44]: Այդուհետ ամեն նոր պարտություն Բալկաններում, օսմանյան կայսրության ամեն նոր հետքայլ իր հետ բերում էր մարդկային նոր հոսքեր. մարդկանց, ովքեր անտուն էին ու անհող, մարդկանց, ովքեր քրիստոնյաներին ատելու ու նրանցից վրեժխնդիր լինելու հավելյալ պատճառ ունեին:

42. *İnalcık, Halil, 'Ottoman Methods of Conquest,' Studia Islamica, II, 1954, pp. 123; Barkan, Ömer Lütfi, 'Osmanlı İmparatorluğu'nda Bir İskân ve Kolonizasyon Metodu Olarak Sürgünler," in İstanbul Üniversitesi İktisat Fakültesi Mecmuası, vol. XI, n°. 1-4, 1949-1950, pp. 550-561; Arslan, Hüseyin, 16. yy. Osmanlı Toplumunda Yönetim, Nüfus, İskân, Göç ve Sürgün, İstanbul, Kaknüs Yayınları, 2001, pp. 337-345;*
43. *Celestine Bohlen, Fresh Tension for Cyprus: Counting the Newcomers, The New York Times, 1991, January 23*
44. *Brubaker, Rogers, Nationalism Reframed: Nationhood and the National Question in the New*

Օսմանյան կայսրությունն այս մարդկային հոսքերն օգտագործեց երկարաժամկետ ռազմավարական նպատակների հասնելու նպատակով: Առաջին քայլը ռազմավարական կարևորություն ունեցող վիլայեթներում ազգային ու կրոնական ժողովրդագրական պատկերը հօգուտ մուսուլման/թուրքերի փոխելու համար քաղաքականությունն էր: Փաստորեն, մուսուլման/թուրք փախստականները դարձան Օսմանյան կայսրությունը թուրքացնելու մեծ նախագծի բաղկացուցիչ մասը: Սրանով թե ստիպում էին ոչ հավատարիմ ընկալվող քրիստոնյա տարրերին լքել իրենց հարազատ բնակավայրերը, թե տեղավորում էին հավատարիմ հավատակիցներով:

Հայոց ցեղասպանությանը նախորդող ժամանակահատվածը նույնպես հարուստ էր մարդկային հոսքերով: Այս քաղաքականությունն ավելի ակտիվացավ Առաջին Բալկանյան պատերազմում (1912-1913 թթ.) Օսմանյան կայսրության պարտության արդյունքում: Հունաստանը, Սերբիան, Չեռնոգորիան և Բուլղարիան դաշինք կազմեցին Օսմանյան կայսրության դեմ ու 1912 թ. հոկտեմբերին պատերազմ հայտարարեցին: Հաշված ամիսների ընթացքում կայսրությունը պարտվեց բոլոր ճակատներում ու նահանջեց մինչև պաշտպանության վերջին գիծը՝ Չաթալջա, որը Ստամբուլից գտնվում էր 60 կմ հեռավորության վրա: Բալկաններում բոլոր տարածքների, մասնավորապես, պատմական մայրաքաղաք Էդիրնեի կորուստը, թուրքական հասարակությունում հուսալքության մթնոլորտ ստեղծեցին: Բալկանյան պատերազմն անվանվեց «ազգային աղետ»[45]:

Պատերազմում օսմանյան բանակի պարտություններն

45. *Behlül Özkan, From the Abode of Islam to the Turkish Vatan: The Making of a National Homeland in Turkey, Yale, 2012, p. 65*

առաջ բերեցին մուհաջիրների՝ փախստականների ստվար զանգվածներ, որոնք ուղղորդվեցին դեպի հայաբնակ տարածքներ՝ սրանով թե փոխելով վիլայեթներում ազգաբնակչության համամասնությունը, թե քրիստոնյաներից դառնացած, անհող ու անտուն մուհաջիրներին դրդելով հայերի դեմ՝ նրանց տալով ապագան վերագտնելու հույս:

Թուրքական աղբյուրները հայերի թվի մասին

Այդուհանդերձ, հենց թուրքական աղբյուրներն են օգնում մեզ ավելի հստակ ներկայացնելու հայերի թիվը՝ հաշվի առնելով անընդհատ շարունակվող գաղթերը:

Այսպես, երիտթուրքական կուսակցության տապալումից հետո՝ 1918 թ. դեկտեմբերին, ներքին գործերի նախարար Մուսթաֆա Արիֆի նախաձեռնությամբ կազմվեց մի հանձնաժողով, որը պետք է հետաքններ սպանված հայերի թվաքանակի հարցը: Այն աշխատեց երեք ամիս և արդյունքները հասարակության դատին ներկայացրեց նոր ՆԳ նախարար Ջեմալ բեյի օրոք՝ 1919 թ. մարտի 14-ին: 1919 թ. մարտի 17-ին ներքին գործերի նախարար Ջեմալն «Ալեմդար» օրաթերթին տված հարցազրույցում արձանագրել էր, որ «800 հազարի չափ հայեր են տեղահանել ու կոտորել»[46]:

1915-1916 թթ. Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան վերահսկում էր կայսրությունում հայերի բնաջնջումը: Թալեաթը տարբեր վիլայեթներից ստանում էր ընթացքի վերաբերյալ զեկույցներ և 1916 թ. վերջին պատվիրեց կատարված եղեռնագործության մասին ընդհանուր զեկույց: 1916 թ. օգոստոսի 24-ին նա կոդավորված հեռագիր ուղարկեց 34 ուղղությամբ՝ վիլայեթներ ու շրջաններ, դրանով մանրամասն տեղեկատվություն պահանջելով կայսրության տարբեր հատվածներում հայերի առկայության մասին: Նրա հարցումը պարզ էր. նա պահանջում էր տեղեկացվել, թե քանի հայ կար յուրաքանչյուր վիլայեթում, քանիսն էին տեղաբնակ, քանիսը՝ այլ վայրերից: Վեց ամիս անց՝ 1917 թ. փետրվարի 11-ին, նա մեկ այլ կոդավորված հեռագիր ուղարկեց, այս անգամ 23 վիլայեթ՝ կրկին նմանատիպ տեղեկատվության պահանջով[47]: Թալեաթի նշված թվերով (1916 թ. վերջավորություն – 1917 թ. սկիզբ) բռնագաղթի ենթարկված հայերի թիվը 900 հազարից ավել էր, մինչ դեռ հենց ինքն է նշում, որ թվերը նվազեցված են, կլորացված[48]:

Բռնագաղթի ենթարկված հայերի ընդհանուր քանակը տրված է 924 158, որը 1914 թ. օսմանյան վիճակագրության համաձայն տվյալ վիլայեթներում բնակվող լուսավորչական հայերի ընդհանուր թիվն է: Սակայն այս թիվը չի ընդգրկում Օսմանյան կայսրության եվրոպական տարածքները, ոչ էլ Քյութահյան կամ Վանը: Նմանապես այն չի հաշվարկում կաթոլիկ կամ բողոքական հայերի բռնագաղթի դեպքերը: Բոլոր լուսավորչականների ներառումը հաստատում է, որ անխտիր բոլոր հայերը ենթակա էին բռնագաղթի, իսկ Վանի ու Քյութահյայի բացակայությունն էլ բացատրվում է նրանով, որ Վանում հայերը պայքարել էին, իսկ Քյութահյայում էլ տեղաբնակ մուսուլման բնակչությունն էր դիմադրել կենտրոնական կառավարության պլաններին[49]:

1917 թ. նույն հաշվարկների համաձայն բռնագաղթված այդ հայերի 82 տոկոսը, այսինքն՝ 841 161 հոգի համարվել է անհայտ կորած, քանի որ նրանց չեն գտել ոչ սիրիական անապատներում, ոչ էլ կայսրության այլ վիլայեթներում:

Խաղաղության վեհաժողովին հայկական պատվիրակության ներկայացրածն ընդամենը մինչև 1919 թ. իրենց ունեցած տեղեկություններն են և կարելի չէ մեղադրել, թե այդ

46. *Մ. Անումյան, Երիտթուրքերի 1919-1921 թթ. դատավարությունների վավերագրերը ըստ օսմանյան մամուլի, Երևան, 2011, էջ 64:*

47. *Հեռագրերը առկա են Թուրքայի վարչապետի աշխատակազմին կից պետական արխիվի Օսմանյան կայսրության վերաբերյալ պահոցում՝ DH.Şfr, 68/112 և DH.Şfr., 72/210՝ մեջբերում ըստ Ara Sarafyan, Talaat Pasha's Report on the Armenian Genocide, Gomidas Institute, London, 2011, p. 5;*

48. *Հարցազրույց Կ. Մանոյանի հետ:*

49. *Ara Sarafyan, Talaat Pasha's Report on the Armenian Genocide, Gomidas Institute, London, 2011, pp.67-68;*

ժամանակ ինչ տեղեկություններ ունեին կամ չունեին: Բայց ցեղասպանությունը դեռ ընթացքում էր: Երբ որ ասվում է մեկուկես միլիոն, խոսքը 1915-1923 թթ. մասին է: Այսինքն, սա կարևոր հանգամանք է, որը պետք է միշտ նկատի ունենալ, որ ցեղասպանությունը, ճիշտ է, որ ինչ-որ տեղ մեղմացել է, նվազել է, դանդաղել է, բայց շարունակվեց հիմնականում քեմալական ուժերի կամ ազգայնական ուժերի կողմից: Դրա համար էլ, երբ ասվում է 1915-1923 թթ., այդտեղ է, որ մեկուկես միլիոնի մասին է խոսվում[50]: Եվ չպետք է մոռանալ անընդհատ ջարդերի, կոտորածների հանգամանքը՝ համիդյան ջարդերը, որ մինչ այդ մոտ 300 000 հայերի կյանք խլեցին, Ադանայի և կիլիկիահայության կոտորածը, որը 1909 թ. մոտ 30 000 հայերի ոչնչացման պատճառ դարձավ[51]: Բայց այդ մեկուկես միլիոնի մեջ, հավանական է, մտնում են նաև 1918 թ. կոտորածները (օրինակ՝ Բաքվի կոտորածը), 1920 թ. կոտորածը, երբ կրկին մտել են Հայաստան և ահագին մարդ կոտորել են, նաև Իզմիրի կոտորածը՝ 1922 թ.: Բացի այդ քեմալականների ժամանակ հայերի մի ստվար զանգված կոտորածի ենթարկվեց Կիլիկիայում[52]:

Բայց խնդիրը թիվը չէ իրականության մեջ: Թիվն ինչ-որ տեղ պիտի եզրակացվեր և եզրակացվել է, որովհետև ցեղասպանության կոնվենցիան չի ասում, որ եթե 300 000 հոգի լինեին զոհերը այդ նույն կանխամտածված ծրագրի դեպքում, ուրեմն կատարվածը ցեղասպանություն չէ[53]: Ի վերջո, եթե մենք խոսում ենք ցեղասպանություն հանցագործության մասին, թվաքանակն այդքան մեծ նշանակություն չունի կատարվածը այդպիսի հանցագործություն որակելու տեսակետից: Չկա որևէ մի կոնվենցիա, որը նշի, թե պարտադիր պետք է այս քանակի տվյալ ազգի ներկայացուցիչներ ոչնչացվեն, որպեսզի մենք դա անվանենք ցեղասպանություն կամ չանվանենք: Խնդիրը հետևյալ կերպ է

50. *Հարցազրույց Կ. Մանոյանի հետ:*
51. *Հարցազրույց Ա. Մարուքյանի հետ:*
52. *Հարցազրույց Ռ. Սաֆրասդյանի հետ:*
53. *Հարցազրույց Կ. Մանոյանի հետ:*

ձևակերպված՝ եթե կա միտում ամբողջական կամ մասնակի ոչնչացնել այդ ազգը որպես տեսակ, ուրեմն դա ցեղասպանություն է, իսկ այն, որ ամբողջական կամ մասնակի ոչնչացնելու միտում եղել է, և բոլոր այդ հանցավոր գործողությունները թուրքական կառավարությունը կատարել է, դա միանշանակ է: Ի վերջո, այսօր ցեղասպանված հրեա ժողովրդի թիվն էլ է վիճարկվում՝ 6 միլիոնը, կատարվում են հետազոտություններ, որոնք ասում են, որ չափազանցված է և այլն: Այսինքն՝ մշտապես այդ զոհերի թվաքանակի հետ կապված շահարկումները լինելու են[54]:

Խնդիրն այն է, թե ինչով է ցեղասպանությունը տարբերվում զանգվածային սպանությունից: Զանգվածային սպանության թիրախը մարդն է: Ցեղասպանություն հանցագործության թիրախը ոչ թե մարդն է, այլ՝ մարդկային խումբը: Տեսականորեն ցեղասպանություն կարելի է կատարել նույնիսկ առանց որևիցե մեկի ֆիզիկական գոյությունը ընդհատելու: Օրինակ՝ եթե որևէ խմբում 20-30 տարիների ընթացքում այդ խմբի երեխաներին բռնի կերպով բաժանեն խմբի անդամներից և տանեն այլ էթնիկ-ռասայական խմբեր, ապա տվյալ խմբի հետ որևիցե բան տեղի չի ունենա: Բայց 30-40 տարի հետո խումբը կդադարի գոյություն ունենալուց, որովհետև այլևս այդ մշակույթի, այդ քաղաքակրթության կրողներ գոյություն չեն ունենա: Այսինքն, հնարավոր է ցեղասպանություն իրականացնել նույնիսկ առանց մեկ մարդու կյանքը խլելու: Սա է ամբողջ խնդիրը: Թիվը, իհարկե, հոգեբանական և այլ ազդեցություն կարող է ունենալ, բայց Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին տասնյակ միլիոնավոր մարդիկ զոհվեցին, բայց մենք չենք խոսում ցեղասպանության մասին: Գուցե կարող է էթնիկ թուրքերից ավելի մեծ թվով մարդ մահացած լինի պատերազմի, աղետների և այլնի հետևանքով, բայց փաստը մնում է փաստ, որ 1915-1923 թթ. ընթացքում արևմտահայերի խումբը՝ էթնիկ կամ էթնոազգային խումբը, դադարեց

54. *Հարցազրույց Ա. Մարուքյանի հետ:*

գոյություն ունենալուց: Մենք այլևս ունենք հայեր, որոնք գտնվում են տարբեր աշխարհամասերում, բայց արևմտահայ, որպես այդպիսին, գոյություն չունի: Արևմտահայ, այսինքն՝ անձ, ով բնակվում է այդ տարածաշրջանում, խոսում է արևմտահայերեն, պահպանում է ավանդույթները, սովորույթները, որոնք ձևավորված են եղել և տասնյակ տարիներ, հարյուրավոր տարիներ պահպանվել են: Այսինքն, այդ խումբը գոյություն չունի այլևս: Կորել են բարբառներ, ենթադրենք, կամ սակավաթիվ են դարձել այդ բարբառներով խոսողները: Այսինքն՝ խումբը այլևս գոյություն չունի: Ֆիզիկապես, ենթադրենք, այդ անձանց մի մասը փրկվեց, բայց խումբը դադարեց գոյություն ունենալուց[55]:

Ի վերջո, արդյոք, Թուրքիայի ցեղասպանական հանցագործությունը թեթևանում է, եթե սպանված լիներ 600 հազար հայ՝ մեկուկես միլիոնի փոխարեն: Ամեն դեպքում դա ցեղասպանություն է[56]:

55. Հարցազրույց Վ. Վարդանյանի հետ:
56. Հարցազրույց Ա. Խոսրոևայի հետ:

ԲՌՆԱԳԱՂԹԸ ՈՐՊԵՍ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑ

«Այն, որ 1915 թ. ամռանը մարդկանց՝ կին, մանուկ, տարեց, սրիպել են, հարյուրավոր կիլոմետրեր քայլելով, այստեղ հասնել, չի կարող բացատրվել և ոչ մի «ռազմական միջոցառմամբ»: Դա միայն մեկ մեկնաբանություն ունի՝ բնաջնջել աքսորված մարդկանց: Անգամ այսօր, եթե փորձ անեն հազարավոր մարդկանց քարավաններով, ավելին՝ ոչ թե հունիս-հուլիս, այլ ապրիլ ամսին սրիպել քայլելով այստեղ գալ, դա կնշանակի, որ ցանկություն ունեն նրանց ոչնչացնել: Դա չեք կարող հասկանալ, քանի դեռ չեք տեսել Դեյր էզ-Զորը: Կամ էլ շատ լավ կհասկանաք Դեյր էզ-Զորի շրջանը տեսնելուց հետո...», -թուրքական «Ռադիկալ» օրաթերթում գրում է լրագրող Ջենգիզ Չանդարը՝ «Մի ապրիլի 24 Սիրիայի անապատում» վերնագրով հոդվածում.[57]

Բռնագաղթի վերաբերյալ ուշացած օրենքը

1915 թվականի մայիսի 24-ին Անտանտի երեք երկրները՝ Ռուսաստանը, Ֆրանսիան, Անգլիան, հանդես եկան հայտարարությամբ, որտեղ խստագույնս դատապարտում են հայերի զանգվածային կոտորածները, պատմության մեջ առաջին անգամ օգտագործում են «հանցագործություն մարդկության դեմ» արտահայտությունը և նշում, որ օսմանյան կառավարության անդամներն անձամբ պատասխան կտան այդ հանցագործության համար: Նույն օրն այդ հայ-

57. *Cengiz Çandar, Sürlye çölünün ortasında bir 24 Nisan, Radikal, 25/04/2010, http://www.radikal.com.tr/yazarlar/cengiz_candar/surlye_colunun_ortasinda_bir_24_nisan-993383*

տարարության ֆրանսերեն տեքստը տարածվում է «Ավաս» գործակալության կողմից և հեռագրով հասնում Կոնստանդնուպոլիս:

Թալեաթի մոտ առաջացել էր մտավախություն, որ հետագայում այդ ոճրագործությունների համար ողջ մեղքը կբարդվի միայն իր վրա, քանի որ չկար որևէ պաշտոնական փաստաթուղթ հայերի հետ կատարվող ցեղասպանության վերաբերյալ: Թալեաթը հանգում է մտքի, որ պետք է լինի կառավարության որոշում, որպեսզի պատասխանատվությունը տարածվի բոլորի վրա:

Երկու օր անց՝ մայիսի 26-ին, բանակի գլխավոր հրամանատարությունը նրա կողմից պատրաստված տեքստով դիմում է ներքին գործերի նախարարությանը՝ առաջարկելով հայերի տեղահանությունը[58]: Ի պատասխան այդ գրության Թալեաթը ներքին գործերի նախարարության անունից գաղտնի զեկուցագրով դիմում է կառավարությանը՝ պահանջելով տեղահանել պատերազմական շրջանների հայ ազգաբնակչությանը:

Անգամ այսօր, եթե փորձ անեն հազարավոր մարդկանց քարավաններով, ավելին՝ ոչ թե հունիս-հուլիս, այլ ապրիլ ամսին ստիպել քայլելով այստեղ գալ, դա կնշանակի, որ ցանկություն ունեն նրանց ոչնչացնել:

Առանց կառավարության նիստ հրավիրելու, Թալեաթի զեկուցագիրը քննարկելու և կառավարության հա-մապատասխան որոշում ընդունելու, հաջորդ օրը՝ մայիսի 27-ին, հապճեպ ընդունվում է «Պատերազմի ժամանակ կառավարության գործունեության դեմ դուրս եկողների համար ռազմական տեսանկյունից առնվելիք միջոցների մասին ժամանակավոր օրենք» վերտառությամբ օրենքը, որն ավելի հայտնի է որպես «Տեղահանության օրենք»: Թեև օրենքն արդեն ընդունվել էր, բայց այդուհանդերձ, մայիսի 30-ին տեղի է ունենում կառավարության նիստ,

58. *Ռ. Սաֆրաստյան, Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Եր., 2009, էջ 176:*

որտեղ քննարկվում է Թալեաթի զեկուցագիրը և ընդունվում որոշում՝ սկսել տեղահանությունը: Որոշման տեքստը հրապարակված է Թուրքիայի պետական արխիվների կողմից: Իսկ հունիսի 1-ին «Տեղահանության օրենքը» հրապարակվում է պաշտոնաթերթում, ինչով և մտնում է ուժի մեջ:

Սակայն տեղահանությունները, որպես այդպիսին, արդեն սկսվել էին մինչև օրենքի ի հայտ գալը: Օրենքն ընդունվեց հետագայում՝ հընթացս տեղահանությունների, այսինքն՝ ոչ մի օրինական հիմք չունենալով մարդկանց գյուղերից դուրս էին հանում և ուղարկում մահվան երթերի կամ դեպորտացիայի[59]: Այսպես, բանակի գլխավոր հրամանատարության վերոհիշյալ փաստաթղթի մեջ առաջարկվում է սկսել Զեյթունի հայերի տեղահանությունը, մինչդեռ նրանց տեղահանությունը, Թալեաթի հրամաններով, սկսվել էր դեռևս մարտի վերջին, շարունակվել ապրիլ ամսվա ընթացքում, և Զեյթունում արդեն տեղակայվել էին թուրքական կանոնավոր զորքերը[60]:

...պատմության մեջ առաջին անգամ օգտագործում են «հանցագործություն մարդկության դեմ» արտահայտությունը:

Ցեղասպանության ականատես Երվանդ Օտյանն իր հուշերում գրում է. «Ցայտնի է, որ զեյթունցիները ամենեն առաջ տեղահան եղան, եթե չեմ սխալիր 1915 մայիսի սկիզբները: Նախ զիրենք բերած էին Սուլթանիէ ու Էրէյլի, յետոյ կրկին ճամբայ հանած էին ու հետիոտն քշած մինչև Տէր-Զօր: Այս կերպ անօթութեն, խեղճութեն, հիվանդութեն 30000 զեյթունցի բնաջինջ եղած էր: Անոնք, որ կարող եղած էին ամենաթշուառ վիճակի մեջ Տէր-Զօր հասնիլ՝ չէրքէզ-չէչէններու ձեռքով ջարդուած էին: Երբ ես Տէր-Զօր գացի՝ հազարաւոր զեյթունցիներու մէջ միայն երկու հոգի ողջ մնացած էին»[61]:

59. *Հարցազրույց Ս. Մանուկյանի հետ:*
60. *Ռ. Սաֆրաստյան, էջ 176:*
61. *Երուանդ Օտեան, Անիծեալ տարիներ, 1914-1919 անձնական յիշատակներ, Թեհրան, 2010, էջ 107;*

Բռնագաղթի աշխարհագրությունը

Թուրքական կողմը «ցեղասպանության» փոխարեն հաճախ է օգտագործում հենց «բռնագաղթ» եզրը՝ պնդելով, թե իրականացվել են տեղահանություններ: Այն հիմնավորելու համար թուրքական կողմը պնդում է, թե Կովկասյան ռազմաճակատի երկայնքով հայերը կազմակերպել են ապստամբություններ՝ օգնելու ռուսական բանակին:

Բռնագաղթի աշխարհագրությունն ուսումնասիրելիս պարզ է դառնում այդ հիմնավորման սին լինելը:

Իրականում ապստամբություն տեղի չի ունեցել: Ջինված ընդհարումների հատուկենտ դեպքերը ինքնապաշտպանություն էին, հայերը չեն նախաձեռնել, այլ միայն արձագանքել են օսմանյան իշխանությունների քայլերին: Ավելին, ինքնապաշտպանական գործողությունների թիվն էլ ընդհանուր առմամբ շատ քիչ էր: Այդ հսկայական տարածքում ընդամենը 10 փոքր դիմադրությունը նման զանգվածային գործողության դրդապատճառ չէր կարող դառնալ: Բացի այդ, հայերը տեղահանվել են ոչ միայն ռազմաճակատի գծից, այլ նաև շատ խորը շրջաններից, այսինքն՝ կենտրոնական Թուրքիայից, որտեղ ռազմական գործողություն ընդհանրապես չեղավ և իմաստ չկար ռազմաճակատի ապահովության մասին խոսել[62]: Անկարա, Քոնյա, Ափյոն, Էսքիշեհիր, Իզմիթ, Ադանա՝ սրանք այն քաղաքներից են, որոնք Թալեաթ փաշայի զեկույցում[63] ընդգրկված են որպես տարածքներ, որտեղից տեղահանվել են հայերը, մինչդեռ դրանք հարյուրավոր կիլոմետրերով հեռու են Կովկասյան ռազմաճակատից ու ռուսական բանակներից և այնտեղ նույնիսկ ինքնապաշտպանական դիմադրության մասին ոչ մի հիշատակում չկա:

Թալեաթը հանգում է մտքի, որ պետք է լինի կառավարության որոշում, որպեսզի պատասխանատվությունը տարածվի բոլորի վրա:

62. *Հարցազրույց Ս.Մանուկյանի հետ:*
63. *Ara Sarafyan, Talaat Pasha's Report on the Armenian Genocide, Gomidas Institute, London, 2011;*

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին տղամարդկանց մի մասին արդեն հավաքագրել և տարել էին օսմանյան բանակում ծառայելու: Սակայն 1915 թ. փետրվարից սկսած՝ հայ զինվորների ճնշող մեծամասնությունը զինաթափվում է ու տեղափոխվում բանվորական վաշտեր: Որոշ ժամանակ շինարարական աշխատանքներում օգտագործվելուց հետո նրանք սպանվում էին: Բացի այդ, նախքան որևէ բնակավայր բռնագաղթի ենթարկելը՝ դիմադրությունից խուսափելու համար, կոտորածների կազմակերպիչները հիմնականում փորձում էին տարբեր մեթոդներով վնասազերծել տեղի հայ տղամարդկանց: Օրինակ, 1915 թ. Ուրֆայում երիտթուրքական իշխանությունները 1500 ուրֆացի հայ երիտասարդների ուղարկեցին այսպես կոչված՝ «թիկունքային աշխատանքների» և քաղաքից դուրս տանելով նրանց սպանեցին[64]:

Անոնք, որ կարող եղած էին ամենաթշուառ վիճակի մեջ Տէր-Զօր հասնիլ՝ չէրքէզ-չէչէններու ձեռքով ջարդուած էին:

Չափազանց կարևոր է, թե ինչու Հայոց Ցեղասպանությունը, այդուհանդերձ, անվանվում է ցեղասպանություն: Մի շատ պարզ պատճառով. այն հիմնված է սեգրեգացիայի գաղափարի հիման վրա: Այսինքն՝ տեղահանության են ենթարկվել էթնիկ հայերը, տեղի է ունեցել սեգրեգացիա՝ սելեկցիա, ընտրվել են այն խմբերը, որոնք պետք է ոչնչացվեին: Օսմանյան ոստիկանությունը կամ այլ մարմիններն ստուգում էին մարդուն, և եթե նա էթնիկ հայ էր, նրան տեղահանում էին: Սեգրեգացիան չափազանց կարևոր փաստ է, քանի որ դատարանները Ռուանդայում ու նախկին Հարավսլավիայում ստեղծված սեգրեգացիայի էլեմենտները

64. *Սահակյան, Ռուբեն (2006) Մուշ քաղաքի հայկական թաղամասերի ինքնապաշտպանությունը 1915 թվականին. Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, № 12. էջ 105*

դիտեցին որպես հիմք՝ ասելու, որ կար հատուկ մտադրություն տվյալ խումբը ոչնչացնելու: Մասնավորապես Սրեբրենիցայում հստակ առանձնացվեցին մահմեդական՝ 14 տարեկանից բարձր տղամարդիկ և ոչնչացվեցին: Եվ եթե չլիներ այդ սեգրեգացիան, եթե այնտեղ ոչնչացնեին բոլորին, գուցե շատ դժվար լիներ ապացուցել ցեղասպանության առկայությունը: Բայց, քանի որ սեգրեգացիան իրականացվել է, այսինքն՝ գործողությունն ուղղված է եղել կոնկրետ խմբի դեմ, ապա այն անուղղակիորեն վկայում է միտման առկայության մասին:

Ջինված ընդհարումների հատուկենտ դեպքերը ինքնապաշտպանություն էին:

Այսպիսով, հայկական բնակավայրերում մնացել էին հիմնականում կանայք, ծերեր և երեխաներ: Իսկ ինչ կարող էին անել ծերերը, կանայք, երեխաները, անզեն բնակչությունը:

Այստեղ ի հայտ է գալիս թուրքական կողմի երկրորդ սին բացատրությունը՝ կարիք կար խաղաղ բնակչությանը հեռու տանել ռազմաճակատից, որպեսզի չտուժեն:

Նույնիսկ եթե մի պահ ընդունենք, որ պատերազմական անհրաժեշտություն կար հայերին տեղափոխել ռազմական գոտուց դեպի ավելի ապահով վայր, ապա խոսքը պետք է վերաբերի Վանի, Բիթլիսի, Էրզրումի վիլայեթներից հայերի տարհանմանը, բայց այդ տեղահանությունն իրականացվում էր ամբողջ երկրում, հայերին տեղահանում էին նաև Սեբաստիայից, Դիարբեքիրից, Կիլիկիայից, որտեղ չկային պատերազմական գործողություններ[65]: Երբեմն նույնիսկ ոչ թե ռազմական դաշտից հեռու են տարել, այլ ընդհակառակը՝ մոտեցրել են ռազմաճակատներին: Հայտնի է, որ Սիրիան եղել է բռնագաղթի հիմնական նշանակետը, իսկ Սիրիան ռազմական դաշտին շատ ավելի մոտ էր, քան, օրինակ,

65. *Հարցազրույց Ա. Մարուքյանի հետ:*

Կեսարիան կամ Էսքիշեհիրը[66]:

Տեղահանումը հիմնավորված կլիներ (եթե այն պայմանավորված լիներ ռազմական անհրաժեշտությամբ), եթե տեղահանվեին ոչ միայն էթնիկ հայերը, այլ նաև այդ տարածքի ամբողջ բնակչությունը[67]: Այս հիմնավորում, ընդամենը կրկին քող է պատերազմական իրադարձություններով «ապացուցել կամ հիմնավորել» այսպես կոչված՝ «տեղահանությունը», որը գործնականում Հայոց Ցեղասպանության գլխավոր փուլերից մեկն էր[68]:

...1915 թ. փետրվարից սկսած՝ հայ զինվորների մնշող մեծամասնությունը զինաթափվում է ու տեղափոխվում բանվորական վաշտեր: Որոշ ժամանակ շինարարական աշխատանքներում օգտագործվելուց հետո նրանք սպանվում էին:

Բռնագաղթի ընթացքն ու վերջնակետը

Բռնագաղթերի վերջնակետը հստակ ցույց է տալիս, թե ուր էին տանում այդ մարդկանց. այն բացարձակ անապատ էր, կյանքի համար ոչ մի հարմարեցված պայմաններով: Դեր Զորը մի հսկայական անապատային նահանգ էր, որտեղ ապրում էր մի քանի հազար արաբ քոչվոր բեդվին, այսինքն՝ ամբողջությամբ գրեթե անմարդաբնակ էր[69]:

Այսինքն՝ հայերին միտումնավոր տեղափոխում էին այնպիսի վայրեր, որտեղ նրանք դատապարտված էին մահվան՝ առանց սննդի, առանց ջրի, կիզիչ արևի տակ, հակահիգիենիկ պայմաններում: Պարզ է, որ անմարդկային այդ պայմաններում առաջանալու էին համաճարակներ, որոնք էլ հանգեցնելու էին հազարավոր մարդկանց ոչնչացմանը[70]:

Երբ ծրագրվում է, որ տվյալ նահանգում պետք է բնա-

66. *Հարցազրույց Մ. Անումյանի հետ:*
67. *Հարցազրույց Վ. Վարդանյանի հետ:*
68. *Հարցազրույց Ա. Մարուքյանի հետ:*
69. *Հարցազրույց Ս. Մանուկյանի հետ:*
70. *Հարցազրույց Ա. Մարուքյանի հետ:*

կեցվի մոտ 1 մլն մարդ, այն դարձվի մարդաբնակ, շենացվի, ապա անհրաժեշտ է հսկայական ներուժ այդ ենթակառուցվածքն ստեղծելու համար, որը տվյալ դեպքում բնականաբար չէր արվել: Իսկ այն չանելով և մարդկանց ուղղակի քշելով այնտեղ, պարզ է դառնում մտադրությունը՝ ոչնչացնել մարդկանց[71]: Այս պայմանների ստեղծումը նույնպես միտումնավոր է եղել, և պատահական չի, որ 1948 թվականի ՄԱԿ-ի Ցեղասպանության կոնվենցիայում կա հատուկ կետ այն մասին, որ տվյալ խմբի կենսագործունեության համար անհամատեղելի պայմանների ստեղծումը նույնպես համարվում է ցեղասպան գործողություն[72]:

Ապրելու պայմաններ չկային նաև բռնագաղթի երկար ու ձիգ ճանապարհների կայանատեղիներում: Դեպի սիրիական անապատներ տանող հանգույցներում կային համակենտրոնացման ճամբարներ, որտեղ ստեղծված էին այնպիսի վիճակներ, որ տարագիրները մահանան սովից և համաճարակներից: Կրկին մեջբերենք ականատես Երվանդ Օտյանի հուշերը, ով Կիլիկիայի Տարսուսում գտնվել է օգոստոս-սեպտեմբեր ամիսներին և այնտեղի համակենտրոնացման ճամբարի մասին պատմում է հետևյալը. «Ամբողջ ընդարձակ դաշտը բնակատեղիի մը երևոյթը առած էր: ...Թարսուս, վրաններու ներքև, 25-30 հազար հայեր կային, ընդհանրապես ատապազարցի, իզմիթցի, պարտիզակցի, պրուսացի, էտիրնեցի, ռոտոսցի, պանտրմացի և այլն[73]»: Օտյանը նշում է, որ այդ միջոցին Թարսուսում կար մոտ 25 հազար թուրք զինվոր: Հայերի ճամբարներն ունեին փակ գետոյի կարգավիճակ, քանի որ «Թարսուս երթալու համար

1915 թ. Ուրֆայում երիտթուրքական իշխանությունները 1500 ուրֆացի հայ երիտասարդների ուղարկեցին, այսպես կոչված, «թիկունքային աշխատանքների» և քաղաքից դուրս տանելով նրանց սպանեցին:

71. *Հարցազրույց Ս. Մանուկյանի հետ:*
72. *Հարցազրույց Ա. Մարուքյանի հետ:*
73. *Երուանդ Օտեան, Անիծեալ տարիներ, էջ 119:*

հարկ էր վէսիքա առնել և այս վէսիքան օրը հազիւ 40-50 հգոիի կըտրու էր[74]»: Ամառվա շոգին, առանց ջրի, սանիտարահիգիենիկ պայմաններից զուրկ, փակ տարածքից դուրս գալու իրավունքից զրկված իրավիճակում, բնականաբար, ճամբարը համակվել էր համաճարակով. «Գրեթէ ամէն վրանի տակ մէյ մեկ հիւանդ կար ու այդ միջոցին, ինչպէս ըսի, վրաններուն թիւը հինգ վեց հազարի կըհասնէր[75]»: Գլխավոր հիվանդությունը դիզենտերիան էր. «Տիզանդը-ը ոն որ փոխանցիկ ալ է, ամէնէն աւելի զոհ կ՝ըներ: Այդ հիւանդութենէն օրական 60-70 հոգի կը մեռնէին[76]»:

Ցեղասպանության մասին կոնվենցիայի 2-րդ հոդվածի «Գ» կետը վերաբերում է խմբի անդամների համար այնպիսի կենսապայմանների ստեղծմանը, որոնք միտված են նրանց ֆիզիկական ոչնչացմանը[77]: Այսինքն, եթե տեղափոխվում է ինչ-որ զուտ էթնիկ խումբ՝ նորմալ պայմաններով, և այդ խումբը ինչ-որ Ա կետից մինչև Բ կետ հասնում է նորմալ իրավիճակում և այնուհետև հնարավորություն է ունենում Ա կետ վերադառնալու, կամ համենայնդեպս, այդ Բ կետում պահպանվում է, ապա այստեղ դժվար է խոսել ցեղասպանությունից: Օրինակ, երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից ճապոնացի քաղաքացիների հանդեպ իրականացված քաղաքականությունը չի կարելի որակել որպես ցեղասպանություն, քանի որ՝ թեև կային համակենտրոնացման ճամբարներ ու բարդ կենսապայմաններ, սակայն բնակատեղիները համապատասխանում էին միջազգային մինիմալ ստանդարտներին,

...հայերին տեղահանում էին նաև Սեբաստիայից, Դիարբեքիրից, Կիլիկիայից, որտեղ չկային պատերազմական գործողություններ:

74. *Նույն տեղը, էջ 121:*
75. *Նույն տեղը, էջ 124:*
76. *Նույն տեղը:*
77. *Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիա, http://www.un.am/res/UN%20Treaties/III_1.pdf*

Բռնագաղթերի վերջնակետը հստակ ցույց է տալիս, թե ուր էին տանում այդ մարդկանց. այն բացարձակ անապատ էր, կյանքի համար ոչ մի հարմարեցված պայմաններով:

երեխաները նույնիսկ ունեին կրթության պայմաններ, բռնագաղթյալներին կանոնավոր կերպով պատվաստումներ էին կատարում և այլն[78]:

Այն անհամեմատելի է Օսմանյան կայսրությունում տեղի ունեցածի հետ, որը խմբի գոյության համար ստեղծում էր այնպիսի կենսապայմաններ, որոնք միտված էին նրանց մասնակի կամ ամբողջական ֆիզիկական բնաջնջմանը: Դա տեղահանություն անցկացնելու միտում չէ, այլ՝ միտումն ուղղված է այդ խմբի անդամների ոչնչացմանը[79]:

Սակայն հայ բռնագաղթյալները հիմնականում չէին էլ հասնում նշանակետ: Այսինքն, հայերին հանում էին իրենց բնակավայրից, բայց ոչ թե ինչ-որ այլ տեղ տեղափոխելու, այլ՝ այնտեղ տեղափոխելով սպանելու:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվում է հետևյալը. «Թեշքիլյաթը Մահսուսե» կոչված հատուկ կազմակերպությունն այնպես էր կազմակերպել քարավանների տեղափոխությունը, որ Էրզրումից հանված քարավաններից յուրաքանչյուրը տարվում էր այնպիսի ճանապարհով, որ հաջորդ քարավանը ականատեսը չլիներ նախորդի ողբերգությանը: Օրինակ՝ առաջին քարավանը Էրզրումից հանելուց հետո տանում էին դեպի Աշքալա, Աշքալայից՝ Դերջան, Դերջանից՝ Խարբերդ, Մալաթիա, Հալեպ: Հաջորդ խումբը տանում էին դեպի Հյուսիս՝ դեպի Միտուրքու, դեպի Դումրիլեռ, այնտեղից դեպի Բաբերդ, Բաբերդից դեպի Ջանիկ: Երրորդ խումբն իջեցնում էին դեպի հարավ՝ Խնուս,

78. *Ավելի մանրամասն ճապոնացիների տեղահանման մասին տես՝ Wendy L. Ng, Japanese American Internment During World War II: A History and Reference Guide, Westport, 2002, 209p.; Roger Daniels, Prisoners Without Trial: Japanese Americans in World War II, Farrar, Straus and Giroux, 2004, 162 p.;Robinson, Greg. (2010). A Tragedy of Democracy: Japanese Confinement in North America. Journal of Transnational American Studies, 2(1).*
79. *Հարցազրույց Վ. Վարդանյանի հետ:*

Մուշ, Դիարբեքիր: Ինչպես վկայում են աղբյուրները, հունիսի վերջին-հուլիսի սկզբին արդեն ստեղծվել էր մի իրավիճակ, երբ այլևս ճանապարհ չէր մնացել, որոնք լցված չլինեին հայերի դիակներով: Արդեն վերահսկողությունը կորել էր, և տեղափոխությունը կատարվում էր վայրիվերո՝ մարդկանց տանում էին նախորդ քարավանների անցած գեհենական ճանապարհներով: Այդ քարավաններում տեղահանվածների մեջ, որպես կանոն, 80 տոկոսը կանայք, երեխաներ և ծերեր էին, որոնք որևէ վտանգ չէին ներկայացնում[80]:

...հայերին միտումնավոր տեղափոխում էին այնպիսի վայրեր, որտեղ նրանք դատապարտված էին մահվան:

Բազում փաստեր կան, որ բոլոր քայլերը ձեռնարկվել են, որպեսզի տարագիր ժողովուրդը լինի անպաշտպան և որպեսզի ոչ միայն քարավանը հսկող օսմանցի զինվորները, այլ նաև ուրիշ հրոսակախմբերը կարողանան քարավանի ճանապարհին հարձակվել, կողոպտել, բռնաբարել և սպանել[81]:

Այդուհանդերձ, բռնագաղթված հայերի զանգվածն այնքան մեծ էր, որ ի հեռուկս ճանապարհին կազմակերպված այս բոլոր արհավիրքներին մարդկանց մի հոծ զանգված կարողացել էր ոտքով հասնել նշանակետ՝ սիրիական անապատ: Թեև հայերն աքսորի ճանապարհներին ենթարկվել էին սահմռկեցուցիչ ջարդերի, բայց և այնպես, ըստ Արամ Անտոնյանի՝ «...ամենէն զարհուրելի եղեռնագործութիւնները եւ մեծագոյն ջարդերը կատարուեցան 1916-ին եւ անկէ ետք, այն հեռաւոր անապատներուն մէջ»[82]: «Մեծ ոճիրը» գրքի հեղինակը պատմում է, որ 1916 թ. հետո, երբ ողջ հայությունը քշվել էր Սիրիայի անապատներ, և նրան էին միացել նաև Կիլիկիայի հայերը, այստեղ կառավարությունից ստացված հրահանգով կազմակերպվեց երեք մեծ ջարդ, որոնցից առաջինը՝ Ռաս ուլ-Այնում, որտեղ կոտորվեց 70

80. *Հարցազրույց Ա. Մելքոնյանի հետ:*
81. *Հարցազրույց Կ. Մանոյանի հետ:*
82. *Արամ Անտոնեան, Մեծ ոճիրը, Պոսթըն, 1921, էջ15:*

հազար հայ, երկրորդը՝ Ինթիլլիում, որին զոհ գնաց 50 հազար հոգի, և ի վերջո՝ Դեյր էզ-Զորի անապատում, որն ամենազարհուրելին էր և ամենազանգվածայինը դրանց մեջ (200 հազար մարդ):

Ի դեպ, ինչպես նշում է Արամ Անտոնյանը, վերոհիշյալ թվերը վերաբերում են միայն ջարդերի միջոցով կոտորված հայերին, սակայն դրանց պետք է ավելացնել նաև այդ երեք վայրերում հիվանդություններին, առանձին սպանություններին, սովին ու ծարավին զոհ դարձած հայերին[83]:

Դեպի սիրիական անապատներ տանող հանգույցներում կային համակենտրոնացման ճամբարներ, որտեղ ստեղծված էին այնպիսի վիճակներ, որ տարագիրները մահանան սովից և համաճարակներից:

Սիրիական անապատում հայերի ոչնչացումը սկսվեց Ռաս ուլ-Այնի ճամբարից: Այդ ծրագրի իրականացման համար «Հատուկ կազմակերպության» հրահանգով Ռաս ուլ-Այնի մոտ գտնվող չեչենական Սաֆա գյուղի երիտասարդությունից ստեղծվեց հատուկ ջոկատ, որը ղեկավարում էր Արսլան բեյը: Այդ գյուղից էր նաև Ռաս ուլ-Այնի և Դեյր էզ-Զորի հայերի ոչնչացման կազմակերպիչներից մեկը՝ ջրհորներում հայ երեխաների այրման հրաման արձակած Ահմեթ Սելիմը: Սաֆա գյուղի չեչենների հրոսակախումբը զինվել էր Հալեպի բանակային պահեստներից: «Ռաս ուլ-Այնի եղերական դեպքերի հրամանը տրվել էր անմիջապես Հալեպից: Այս հրամանը տրված էր այդ հրոսակախմբի պետերին: Նրանցից մի քանիսը եկել էին Հալեպ և հանդիպել կուսակալ Մուսթաֆա Աբդուլհալիք բեյի հետ: Նրանց վերադարձից չորս-հինգ օր հետո՝ Ռաս ուլ-Այնի քայմաքամը (Քերիմ Ռէֆի բեյ) ծածկագրով իմացավ հասնելու և հրահանգներ ընդունելու մասին»:

Ռաս ուլ-Այնում հայերի զանգվածային կոտորածը սկսվեց 1916 թ. մարտի 17-ին և տևեց մինչև հունիս, երբ բոլոր հայերը ոչնչացվեցին: Այստեղի կոտորածի համակազմակերպիչներից Զեքքի բեյը նշանակվեց Դեյր էզ-Զորի կուսակալ՝ հրահանգ ստանալով այնտեղ նույնպես իրականացնել Ռաս ուլ-Այնի կոտորածը: Դեյր էզ-Զորի ջարդերը տևեցին 1916 թ. Զեքքի բեյի անմիջական հսկողության տակ: Ռաս ուլ-Այնում և Դեյր էզ-Զորում հայերի զանգվածային ոչնչացումը, փաստորեն, նշանակում էր Հայոց ցեղասպանության ծրագրի հիմնական մասի իրականացում[84]:

1919-1921 թթ. հայոց կոտորածների մեղադրանքով Օսմանյան կայսրությունում հարուցված շուրջ 63 դատական գործերի շրջանակներում տեղի է ունեցել նաև Դեյր էզ-Զոր սանջակի ջարդերի դատաքննությունը: Դեյր էզ-Զորի մութասարրիֆ (կառավարիչ) Զեքքի բեյին հեռակա կարգով մահվան դատապարտող դատավճիռն արձանագրվել է օսմանյան «Ալեմդար» օրաթերթի կողմից: Սույն փաստաթղթում մեկ անգամ ևս հավաստվում է, որ Դեյր էզ-Զոր աքսորված հայերն այստեղ զոհվել են ոչ միայն կենսական ծանր պայմանների պատճառով, որն անխուսափելի էր, այլև օսմանյան կառավարության հրահանգով կոտորվել են վերոհիշյալ Զեքքիի կազմած հեծյալ և հետիոտն հրոսակախմբերի կողմից[85]:

Ցեղասպանության մասին կոնվենցիայի 2-րդ հոդվածի «Գ» կետը վերաբերում է խմբի անդամների համար այնպիսի կենսապայմանների ստեղծմանը, որոնք միտված են նրանց ֆիզիկական ոչնչացմանը:

Այսպիսով, «Տեղահանության մասին» օրենքն ընդունվել է, երբ բռնագաղթն արդեն ողջ թափով ընթանում էր: Բռնագաղթի նպատակը չի եղել ապստամբած հայերին Կովկասյան ռազմաճակատից հեռացնելը, քանի որ ապստամբություն, որպես այդպիսին, չի եղել: Բացի այդ տեղա-

83. *Արամ Անտոնեան, Մեծ ոճիրը, Պոսթոն, 1921, էջ15:*

84. *Ա.Ավագյան, Չերքեզական ջոկատների մասնակցությունը 1915 թ. հայերի ցեղասպանությանը, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», N 4, Երևան 2001, էջ 32-33*

85. *Մելինե Անումյան, Դեր Զորի կառավարիչ Զեքի բեյի մահվան դատավճիռը (1920 թ.), http://akunq.net/am/?p=9125*

հանումներ եղել են նաև ռազմաճակատներից էականորեն հեռու գտնվող վայրերից: Քննության չի դիմանում նաև հանուն խաղաղ բնակչության բարօրության՝ նրանց ռազմական ասպարեզից հեռու տանելու փաստարկը, քանի որ այդ դեպքում տրամաբանորեն պետք է գաղթի ենթարկվեին նաև տվյալ տարածքների մյուս բնակիչները, այլ ոչ թե միայն քրիստոնյա կանայք, ծերերն ու երեխաները: Բռանագաղթն ուղեկցվել է թալանով, բռնաբարություններով, կոտորածներով՝ ողջ ճանապարհի ընթացքում: Հարյուրավոր կիլոմետրեր ոտքով անցնող տարագիրները չեն ապահովվել սննդամթերքով, ջրով, իսկ ամառվա տապը արագացրել է համաճարակների տարածումը: Սակայն մահվան քարավանների՝ նշանակետ սիրիական անապատներ հասնելը նրանց ճնշող մեծամասնության համար նշանակում էր ոչ թե տանջանքների, այլ կյանքի վերջ, քանի որ Դեյր էզ-Զորում ու հարակից տարածքներում կազմակերպվեցին հայ գաղթականների զանգվածային կոտորածներ:

Էրզրումից հանված քարավաններից յուրաքանչյուրը տարվում էր այնպիսի ճանապարհով, որ հաջորդ քարավանը ականատեսը չլիներ նախորդի ողբերգությանը

ՀԱՅԵՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ 1915 ԹՎԱԿԱՆԻՆ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ազգային գաղափարների հանդեպ Օսմանյան կայսրության մոտեցումները

19-րդ դարը Օսմանյան կայսրության համար փլուզման սկիզբն էր՝ պատերազմներում պարտությունները, կառավարման սխալները և շատ այլ պատճառներ երբեմնի փառահեղ Օսմանյան կայսրությունը աստիճանաբար թուլացրեցին և նրա իշխանությունը դարձրեցին իր վիթխարի տարածքները վերահսկելուն ոչ ունակ: Այդ ընթացքում կայսրության հպատակ ժողովուրդների մոտ, մասնավորապես՝ Եվրոպային մոտ գտնվող տարածքներում բնակվողների, բարձրանում էր ազգային ինքնագիտակցությունը:

...բոլոր քայլերը ձեռնարկվել են, որպեսզի տարագիր ժողովուրդը լինի անպաշտպան և որպեսզի, ոչ միայն քարավանը հսկող օսմանցի զինվորները, այլ նաև ուրիշ հրոսակախմբերը կարողանան քարավանի ճանապարհին հարձակվել, կողոպտել, բռնաբարել և սպանել:

19-րդ դարի առաջին տասնամյակներում երևան եկան սերբական ու հունական պետական միավորումները: Սերբերը փաստացի ինքնավարություն ստացան 1815 թ., որը, որպես ինքնավարություն, պաշտոնապես ճանաչվեց 1830 թ.: 1867 թ. Սերբիան փաստացի անկախացավ, Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի ճնշման ներքո օսմանյան ուժերը հեռացան նրա տարածքներից, իսկ 1878 թ.՝ համաձայն Բեռլինի դաշնագրի, Բելգրադում դե յուրե հռչակվեց անկախություն: 1814 թ. հիմնադրվեց «Ֆիլիկի էթերիա» անունով մի գաղտնի

...ամենէն զարհուրելի եղեռնագործութիւնները եւ մեծագոյն ջարդերը կատարուեցան 1916-ին եւ անկէ ետք, այն հեռաւոր անապատներուն մէջ:

կազմակերպություն, որի նպատակն էր Հունաստանի ազատագրումը: 1821 թ. հույները բացահայտ ապստամբեցին թուրքերի դեմ, իսկ 1831-1832 թթ. հասան անկախության[86]:

Օսմանյան կայսրության տարածքում ու դրանից դուրս տեղի ունեցող տնտեսական զարգացումները ազգային խմբերին թույլ տվեցին կուտակել նշանակալի դրամագլուխ: Կուտակված հարստությունը աստիճանաբար ուղղորդվեց դեպի կրթության զարգացմանը՝ հիմնվեցին դպրոցներ, գրադարաններ, ինչպես նաև բալկանցի երիտասարդներն սկսեցին ուսում ստանալ Արևմտյան Եվրոպայի համալսարաններում, որտեղ էլ նրանք ծանոթացան եվրոպական լուսավորչականության, ֆրանսիական հեղափոխության ու ռոմանտիկ ազգայնականության արմատական գաղափարներին[87]: Անշուշտ, միայն ֆինանսական ապահովվածությունը, կրթությունն ու ազգայնական գաղափարները բավարար չէին ազատագրական պայքարում հաջողության հասնելու համար. հավասարազոր վճռական կարևորություն ուներ նաև քաղաքական կողմը:

Այսպես, Սերբական առաջին (1804-1813 թթ.) և երկրորդ (1815-1817 թթ.) ապստամբությունների արդյունքում՝ սերբերը հասան ինքնավարության Օսմանյան կայսրության կազմում: Սերբերի հաջողությունների հիմքում ոչ միայն լուսավորչական գաղափարներն էին, այլ նաև Օսմանյան կայսրության հարևան՝ Ավստրո-Հունգարիայում բնակվող սերբական համայնքների ակտիվությունն ու հենց Հաբսբուրգյան կայսրության ուղղակի և անուղղակի միջամտությունները: Օրինակ, 1787-1791 թթ. ավստրո-թուրքական պատերազմի ժամանակ ավստրիացիները սերբերին օգտագործել են օսմանցիների դեմ պայքարում, և նույնիսկ սերբերից կազմավորել են բանակ[88]: Հունաստանի ազա-

86. *S. G. Markovich, Patterns of National Identity Development, Balcanica XLIV (2013), p.211;*
87. *Richard Clogg, A Concise History of Greece, Cambridge University Press, 2002, p. 25-26.*
88. *S. G. Markovich, Patterns of National Identity Development, Balcanica XLIV (2013), p.217;*

տագրական պայքարում, ամենևին չնսեմացնելով հույների պայքարի կարևորությունը պետք է հիշատակել, մասնավորապես, Ռուսաստանի ու Անգլիայի էական ներդրումը անկախություն ձեռք բերելու հարցում:

Սակայն այս ամբողջ ընթացքում հայերը Օսմանյան կայսրությունում վայելում էին «միլլեթ-ի սադրքա»՝ «հավատարիմ ժողովուրդ» մակդիրը, քանի որ ճնշող մեծամասնությամբ՝ հայերը շարունակում էին հավատարիմ ծառայել օսմանյան պետությանը: Հայկական ամիրայական ընտանիքները ստանձնել էին կայսրության մի շարք կարևոր պաշտոններ: Այսպես, Տատյան գերդաստանը ավանդաբար զբաղեցնում էր արքունական բարութչուբաշու (վառոդապետ) պաշտոնը: Իրենց վերելքը նրանք սկսել են 1790-ական թթ., երբ Առաքել ամիրա Տատը տեխնիկական նորամուծություններ մտցրեց վառոդի արտադրության մեջ, ինչպես և հիմնովին բարելավեց օսմանյան Ազադլըի վառոդարանի արտադրությունը: Հետագայում ևս Տատյանները մեծապես նպաստեցին թղթի, մետաքսի, զենքի և ճուլման արտադրությանը: Օսմանյան կայսրության արտադրության մեջ նրանք առաջինը արմատավորեցին ժամանակակից եվրոպական տեխնոլոգիաները: Փողերանոցի (դրամահատարան) և արքունի ոսկերչապետության պաշտոններն էին զբաղեցնում Տյուզյանները: Հարություն Պեզճյանը խոշոր ծառայություններ մատուցեց օսմանյան պետությանը, նա կազմակերպեց Ռուսաստանին 1828-1829 թթ. պատերազմի հետևանքով ռազմատուգանքի մի մասի վճարման գործը[89]: Այսպիսով, մինչ հույներն ու սերբերը ապստամբում էին ու հասնում անկախության, հայերը օս-

Սերբերը փաստացի ինքնավարություն ստացան 1815 թ., որը, որպես ինքնավարություն, պաշտոնապես ճանաչվեց 1830 թ.: 1867 թ. Սերբիան փաստացի անկախացավ:

89. *Խառատյան, Ալբերտ (2009) Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XVIII դարի սկիզբ – 1923 թ.). Պատմա-բանասիրական հանդես, № 2-3 . էջ. 36-37:*

մանցիների համար ավելի կատարյալ վառոդ ու զենք էին պատրաստում:

Իրավիճակը տարբեր էր Կ.Պոլսից դուրս՝ գավառներում, որտեղ հայերը գտնվում էին տեղի մահմեդական ազգաբնակչության մշտական ճնշման տակ և երբեմն հարկային այս կամ այն անինա քաղաքականության դեմ նրանց կողմից սակավաթիվ բողոքներ էին առկայծում[90]: Պետք է ընդգծել, որ ընդհանուր առմամբ, ողջ կայսրությունում իրավիճակը դառնում էր անտանելի, և ապստամբում էին ոչ միայն քրիստոնյա, այլ նաև այլ հպատակ ազգերը: Օրինակ, 1852 թ. Տավրոսի լեռներում ապստամբեց թուրքմենների աֆշար ցեղախումբը[91], 1850-1860-ականներից սկսած պարբերաբար ապստամբում էին քրդերը:

1821թ. հույները բացահայտ ապստամբեցին թուրքերի դեմ, իսկ 1831-1832թթ. հասան անկախության:

Սերբերից ու հույներից հետ չմնացին նաև ռումինացիները: Նրանք ինքնավարություն ստացան 1867 թ., իսկ անկախություն՝ 1878 թ.: Նույն 1878 թ. Սան-Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերով բուլղարացիներն ստացան ինքնավարություն, իսկ 1908 թ.՝ անկախություն: Ակնհայտ է ինչպես՝ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանի հաղթանակում բուլղար կամավորների գործուն աջակցությունը, այնպես էլ համապատասխանաբար՝ Ռուսաստանի քաղաքական աջակցության ցուցաբերումը բուլղարացիների ազատագրական ձգտումներին:

Այս ժամանակահատվածում՝ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, հայերն արդեն ներքաշված էին մեծ քաղաքականության մեջ: Օսմանյան բռնատիրությունը, հավատակից Ռուսական կայսրության զորքերի

90. *Ներսիսյան, Մ. Գ. (1962) Ջեյթունի 1862 թվականի ապստամբությունը. Պատմա-բանասիրական հանդես, № 4 . էջ 59-68:*
91. *Ավելի մանրամասն տես՝ James J.Reid, Crisis of the Ottoman Empire: Prelude to Collapse 1839-1878, Franz Steiner Verlag, 2000, pp. 209-212;*

հաջողությունները Կովկասյան ճակատում, բալկանյան ազգերի հաջողությունները և արևմտյան կրթություն ստացած հայ մտավորականների առկայությունը, հայերի համար ստեղծեցին պարարտ միջավայր՝ օսմանյան ճնշումներից ազատվելու հույսին ծնունդ տալու համար: Բայց հայերի ընդվզումները կայսրության դեմ ավելի շատ արձագանք էին օսմանյան բանակի կամ ոստիկանության առանձին քայլերին և չունեին համակարգված մոտեցում: Միայն 1878 թ. Վանում ստեղծվեց «Սև խաչ» գաղտնի կազմակերպությունը, որը նպատակ ուներ տարածել ազատատենչ գաղափարներ ու կազմակերպել ինքնապաշտպանական խմբեր[92]:

Սերբերի հաջողությունների հիմքում ոչ միայն լուսավորչական գաղափարներն էին, այլ նաև Օսմանյան կայսրության հարևան՝ Ավստրո-Հունգարիայում բնակվող սերբական համայնքների ակտիվությունն ու հենց Հաբսբուրգյան կայսրության ուղղակի և անուղղակի միջամտությունները:

Սակայն պետք է ընդգծել, որ հայերը հաճախ ձգտում էին ոչ թե անկախության ձեռքբերման, այլ պարզապես ավելի լայն ազատության շրջանակներ ունենալու համար, լիներ դա Օսմանյան կայսրությունում ինքնավարության, թե Ռուսաստանին միանալու տեսքով: Ռուսական կայսրության սահմանամերձ Օսմանյան կայսրության գավառներում բնակվող հայերի մեծ մասն ուներ հստակ ռուսամետ կողմնորոշում և հավատակից ռուս զինվորներին դիտարկում էր որպես ազատարարներ: Այսպես, Գևորգ վրդ. Ռուսճուգյանն իր հիշատակարանում գրում է, որ մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչը Կ. Պոլսի դեսպան կոմս Ա. Նելիդովի և Ն. Իգնատևի հետ ունեցած իր զրույցի ժամանակ նշել է. «Շատ գոհ եմ հայ հասարակութենեն, սիրալիր ընդունելություն մը

92. *Հակոբ Հակոբյան, Արևմտահայության հեղափոխական կազմակերպությունների պայքարը սուլթանական գաղտնի ծառայությունների գործունեության պայմաններում, Տարածաշրջանային խնդիրներ, 4, 2014, էջ 77:*

ըրած են և կընեն մեր զորաց... ես կը սիրեմ հայերը...»[93]:

Նման խառը իրավիճակ՝ հարաբերական փոփոխություններով, շարունակվել է 19-րդ դարավերջին ու 20-րդ դարի սկզբին: Օսմանցիները միշտ իրենց աչքի առաջ ունեին բալկանյան կորուստներն ու իրականացվող ամեն մի քայլ՝ հայ քաղաքական կուսակցությունների ստեղծում, հայերի կողմից ցաքուցրիվ ընդվզումներ ու Արևմտյան Հայաստանում կազմակերպված զինված ինքնապաշտպանություններ, Ռուսաստանի հետաքրքրվածություն հայերի նկատմամբ, հայերի կողմից օգնության ռուսական զորքերին, դիտարկվում էր որպես բալկանյան սցենարով հնարավոր զարգացումներ: Սակայն նույն բալկանյան փորձից դաս չքաղելով՝ Բարձր Դուռը կրկին գնաց ճնշումների, սպանությունների ու էթնիկ զտումների ուղիով: Սասունի ու հարակից բնակավայրերի բնաջնջումը 1894-1896 թթ. ուրվագծում է օսմանյան մտածելակերպի հայաջինջ միտումները:

...մինչ հույներն ու սերբերը ապստամբում էին ու հասնում անկախության, հայերը օսմանցիների համար ավելի կատարյալ վառոդ ու զենք էին պատրաստում:

Թուրքական կառավարությունը հրապարակել է օսմանյան փաստաթղթերի մի փաթեթ, որը փաստում է այդ միտումը: Այդ փաստաթղթերի հրապարակման ընտրությունը կատարված է Բարձր Դռան տեսանկյունից: Ավելին, չբավարարվելով արդեն իսկ խեղված ներկայացնելու իրականությամբ՝ թարգմանիչները ժամանակակից թուրքերենից անգլերեն թարգմանելիս միտումնավոր կերպով ավելացրել են բառեր և կամ օգտագործել ավելի խիստ հոմանիշներ: Արդյունքում՝ տեքստերում ստացվել են մտքեր, որոնք հեղինակային փաստաթղթի հետ ունեն շատ հեռավոր կապ[94]:

93. *Լեո. Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 51:*
94. *Սրա մասին ավելի մանրամասն տես՝ James J.Reid, Crisis of the Ottoman Empire: Prelude to Collapse 1839-1878, Franz Steiner Verlag, 2000, p. 183;*

Սակայն սույն պարագայում այս փաստաթղթերի մեջբերումն անհրաժեշտ է, քանի որ նրանք զինված հայերին հաճախ անվանել են «հրոսակախմբեր[95]», ինչը սովորական երևույթ է օսմանյան տեքստերում, քանի որ Օսմանյան իշխանությունները այդպես էին կոչում սեփական գաղափարախոսությանը ոչ հարիր, հեղափոխական մտքեր կրողներին, անհնազանդություն ցուցաբերողներին՝ նրանց հասարակացնելու ու նրանք կարգավիճակը ստորադասելու համար: Սակայն եթե հայերն ունեին հրոսակախմբեր, անհերքելի փաստ է, որ քրդերի, լազերի, թուրքմենների ու չերքեզների հրոսակախմբերը նրանցից էապես մեծաքանակ էին[96]: Այդուհանդերձ, գրեթե չեք գտնի թուրքմենների կամ չերքեզների հրոսակախմբերի գործունեությունը դատապարտող փաստաթուղթ արխիվում և հատկապես ժամանակակից թուրք պատմաբանների մտքով անգամ չի անցնի թարգմանել դրան: Օսմանյան պետությունն ուներ վաղուց փորձված մեթոդ, որը երիտթուրքերի օրոք նույնպես լայն կիրառում ստացավ: Նախ պետությունը հայկական տարածքներ էր ուղարկում քրդերից կազմված Համիդիյե անկանոն զորախմբեր, որոնք հայկական անկանոն զորախմբեր փնտրելու պատրվակով պետք է հարձակվեին, ահաբեկեին, թալանեին ու սպանեին հայ գյուղացիներին, ապա՝ հայերի ինքնապաշտպանության դեպքում, որպես պատիժ՝արդեն ուղարկվում էին կանոնավոր զորքեր[97]:

...ողջ կայսրությունում իրավիճակը դառնում էր անտանելի, և ապստամբում էին ոչ միայն քրիստոնյա, այլ նաև այլ հպատակ ազգերը:

95. *Ertuğrul Zekai Ökte, et al., Ottoman Archivez, Yildiz Collection: The Armenian Question, Talori Incidents, Istanbul, Tarihi Araştirma ve Dokumentasyon Merkezleri Kurma ve Geliştirme Vakfi, The Historical research Center, 1989, pp.80-81, as cited in James J.Reid, Crisis of the Ottoman Empire: Prelude to Collapse 1839-1878, Franz Steiner Verlag, 2000, p. 183;*
96. *Reid, pp. 183-184.*
97. *Reid, pp. 185.*

Թուրքերի նախապատրաստումը ցեղասպանության հիմնական փուլին

Հայերի ջարդերը շարունակվեցին նաև 20-րդ դարասկզբին, սակայն որևէ համակարգված ապստամբություն տեղի չունեցավ՝ չնայած այն հանգամանքին, որ թուրքերն անընդհատ սպասում էին այդ ապստամբությանը: «Հայոց ցեղասպանությունը վախի հետևանք է, որովհետև ապստամբել և ազատագրվել էին բուլղարները, ռումինները, սերբերը, հույները, և թուրքերը միշտ սպասում էին, որ հաջորդը կլինեն հայերը: Այդ վախի սպասումը բերեց նրան, որ հայերին ոչնչացնելու որոշում կայացվի»[98]:

Միայն 1878 թ. Վանում ստեղծվեց «Սև խաչ» գաղտնի կազմակերպությունը, որը նպատակ ուներ տարածել ազատատենչ գաղափարներ ու կազմակերպել ինքնապաշտպանական խմբեր

Հայերն արդեն դարձել էին անվստահելի տարր, և օսմանցիները գրեթե վստահ էին, որ Կովկասյան ճակատում ժողովուրդը կհամագործակցի ռուսական բանակի հետ: Այդուհանդերձ, 1914 թ. Օսմանյան կայսրության իշխանությունը դիմում է Հայ հեղափոխական դաշնակցությանը՝ պահանջով, որ եթե պատերազմն սկսվի, և Օսմանյան կայսրությունն էլ մտնի պատերազմի մեջ, ապա Բարձր Դուռը հայերից ակնկալում է, որ Ռուսական կայսրությունում գտնվող հայերը ապստամբեն ռուսական իշխանությունների դեմ[99]: Դաշնակցության 8-րդ համագումարը, որ տեղի ունեցավ Էրզրումում (Կարինում), որոշում ընդունեց, որ Օսմանյան կայսրության հայերը պետք է ծառայեն օսմանյան բանակում, իսկ ռուսաստանահպատակ հայերը՝ ռուսական բանակում[100]: Այսինքն, Դաշնակցությունը նախընտրեց, որ տարբեր պետությունների ուժերում կռվող հայերը կռվեն իրար դեմ[101]:

98. Հարցազրույց Ս.Մանուկյանի հետ:
99. Հարցազրույց Կ.Մանոյանի հետ:
100. Հարցազրույց Ռ.Սաֆրաստյանի հետ:
101. Հարցազրույց Կ.Մանոյանի հետ:

Հայերը զորակոչվեցին օսմանյան բանակ, որտեղ և նրանք ցույց տվեցին իրենց հավատարմությունը: Էնվերի փրկությունը արևելյան ճակատում սվազցի Օհաննես Ագինյանի կողմից[102], հայերի մասնակցությունը արևմտյան ճակատում, մասնավորապես՝ որպես զինվորական բժիշկներ[103], միայն օսմանյան բանակում ծառայած ու ռազմական գործերի նախարար Էնվերից հերոսի շքանշան[104] ստացած հրետանավոր Սարգիս Թորոսյանի կյանքի պատմությունը[105], բավարար են վկայելու այն մասին, որ այդ հայերը շատ հավատարմորեն ծառայել են Օսմանյան կայսրության զինված ուժերում[106]: Այդուհանդերձ, Կոստանդնուպոլսից Ավստրո-Հունգարիայի դիվանագետները հաղորդում են Վիեննա. «Շատ հաճախ հայ զինվորներին ուղարկում են ռազմաճակատի առաջին գիծ, որպեսզի նրանք այնտեղ սպանվեն»[107]: Սա-

Սասունի ու հարակից բնակավայրերի բնաջնջումը 1894-1896 թթ. ուրվագծում է օսմանյան մտածելակերպի հայաջինջ միտումները:

102. Ezgi Berk, 'Bu kitabı I. Dünya Savaşı'nda görünmeyen Ermeni emeğini anlatmak için yazdım', Agos, 14.11.2014 (http://www.agos.com.tr/bu-kitabi-i-dunya-savasinda-gorunmeyen-ermeni-emegini-anlatmak-icin-yazdim-8604.html)
103. Arsen Yarman, Ermeni Etibba Cemiyeti 1912-1922 (Osmanlı'da Tıptan Siyasete Bir Kurum), İstanbul, 2014, 488 s.; Emre Ertani, Çanakkale'nin unutturulan gayrimüslim şehitleri, Agos, 18.03.2013 (http://www.agos.com.tr/canakkalenin-unutturulan-gayrimuslim-sehitleri-4692.html);
104. Շքանշանի վերաբերյալ հրամանի օսմաներեն բնագիր փաստաթղթի լուսապատճենը՝ http://www.tanerakcam.com/files/2013/01/OTTOMAN-DOCUMENT-Enver-Pasha.jpeg
105. Sarkis Torossian: an Armenian hero of the Dardanelles, The Armenian Genocide Museum Institute, http://www.genocide-museum.am/eng/24.04.2010d.php; Robert Fisk, The Armenian hero Turkey would prefer to forget, The Independent, 12 May 2013 (http://www.independent.co.uk/voices/comment/the-armenian-hero-turkey-would-prefer-to-forget-8612890.html); Taner Akçam, Sarkis Torossian Debate, January 25, 2013, http://www.tanerakcam.com/debates/sarkis-torossian-debate/
106. Հարցազրույց Կ.Մանոյանի հետ:
107. 'Österreich-Armenien", 1872-1936 Faksimilesammlung diplomatischer Aktenstücke, Herausgegeben und eingeleitet von Mag.Dr.Artem Ohandjanian, Band I-XII, Ohandjanian Eigenverlag Wien, 1995, Bd. VI, s.4491,

կայն 1915 թ. փետրվարից սկսած՝ հայ զինվորների ճնշող մեծամասնությունը զինաթափվում է ու տեղափոխվում բանվորական վաշտեր: Որոշ ժամանակ շինարարական աշխատանքներում օգտագործվելուց հետո, նրանք սպանվում են: Դրանով փորձ է կատարվել հեռացնել պաշտպանող ուժը, որպեսզի ցեղասպանության քաղաքականությունը հետագայում ավելի հեշտ ու արդյունավետ իրականացվի: Ժամանակը ցույց տվեց, որ հայերը կարողացան ինքնապաշտպանական մարտեր կազմակերպել միայն այն բնակավայրերում, որտեղ հայ տղամարդիկ որոշակի վերապահում ցուցաբերեցին զորակոչի պահանջին[108]:

Հայերի ինքնապաշտպանությունը

Հայ տղամարդկանց մի մասին հեռացնելով իրենց բնակավայրերից, օսմանյան պետության ուղղորդմամբ՝ թուրքական ու քրդական հրոսակախմբերը գրեթե անարգել սկսեցին ջարդել հայ բնակչությանը: Արդեն 1915 թ. հունվարից սկսած՝ գրանցված են զանգվածային սպանությունների դեպքեր, ինչպես օրինակ՝ Վանի Ավշարիկ գյուղում, որտեղ տեղի է ունեցել 107 հայերի ջարդ[109]: Նմանատիպ դեպքերի մասին, ինչպես նաև կանանց ու երեխաների բռնի կրոնափոխությունների մասին վկայություններն օրեցօր ավելանում

Հայոց ցեղասպանությունը վախի հետևանք է, որովհետև ապստամբել և ազատագրվել էին բուլղարները, ռումինները, սերբերը, հույները, և թուրքերը միշտ սպասում էին, որ հաջորդը կլինեն հայերը

Haus-Hof und Staatsarchiv, Politisches Archiv, N 50; մեջբերումն ըստ Նուրիջանյան, Ժ. (2005) ժամանակագրություն Հայոց ցեղասպանության. Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, №10-11. էջ. 91:

108. *Հարցազրույց Ա.Մարուքյանի հետ:*

109. *Barby Henry. Au Paus de Eepouvante: E Armenie martyre, Beyrouth, 1973, p. 240; մեջբերումն ըստ Նուրիջանյան, Ժ. (2005) ժամանակագրություն Հայոց ցեղասպանության. Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, № 10-11. էջ. 91:*

են: Դրանց զուգահեռ՝ արդեն փետրվար ամսից սկսվել էին նաև քաղաքական-հասարակական գործիչների ձերբակալումները: Հայկական կուսակցությունները ուշքի եկան և ժողովրդի հետ միասին անցան ինքնապաշտպանության, բայց ցավոք, դա ապստամբություն չէր: Ժամանակը ցույց տվեց, որ «Դաշնակցության 8-րդ համագումարի որոշումը սխալ էր: Եթե Դաշնակցությունն ի սկզբանե նպատակ դներ համընդհանուր ապստամբություն անելու, այդ ժամանակ կփրկվեր ժողովրդի մեծ մասը»[110]:

Դաշնակցության 8-րդ համագումարը, որ տեղի ունեցավ Էրզրումում (Կարինում), որոշում ընդունեց, որ Օսմանյան կայսրության հայերը պետք է ծառայեն օսմանյան բանակում, իսկ Ռուսաստանահպատակ հայերը՝ ռուսական բանակում:

Ինքնապաշտպանական գործողությունների թվաքանակն ընդհանուր առմամբ շատ քիչ էր: Այդ հսկայական տարածքում ընդամենը 10 փոքր հատուկենտ դիմադրությունն էլ հենց ապացույց է, որ իրականում մարդիկ պատրաստ չէին դիմակայելու, որովհետև պատրաստ մարդիկ ավելի շատ ու ավելի արդյունավետ կդիմադրեին[111]:

Վան

Ինքնապաշտպանություններից ամենից հայտնին Վանի ինքնապաշտպանությունն է, որի մասին օտարազգի, հատկապես՝ թուրք պատմաբանները երբեմն նշում են որպես ապստամբություն, բայց երբ ուսումնասիրվում է Վանի դեպքերի ժամանակագրությունը, պարզ է դառնում, որ ինքնապաշտպանությունն սկսվեց այն ժամանակ միայն, երբ Վան քաղաքի շրջակա գյուղերն արդեն չկային, և Վան եկող թուրքական զորքը հենց այն զորքն էր, որը ոչնչացրել էր Վան քաղաքի կողքի բոլոր գյուղերը[112]:

110. *Հարցազրույց Ռ. Սաֆրաստյանի հետ:*

111. *Հարցազրույց Ս. Մանուկյանի հետ:*

112. *Հարցազրույց Ս.Մանուկյանի հետ:*

Վանի կողքի գյուղերի վրա հարձակումները սկսվել էին դեռ 1914 թ. վերջերին: Գյուղերի մասն առանց դիմադրելու սրի էր քաշվել: Հ. Մորգենթաուի վկայությամբ՝ միայն երեք օրվա ընթացքում Վանա լճի հյուսիսային շրջանում թուրքերը սպանել են 24 000 հայերի[113], իսկ մինչև մայիս՝ ավերվեցին նահանգի մոտ 100 գյուղեր, որոնց բնակիչները կոտորվեցին[114]: Որոշ գյուղեր հնարավորինս դիմադրել են, ինչպես օրինակ՝ Արճեշ գավառի Արեն գյուղը և Շատախ գավառի Թաղ գյուղը[115]:

...հայերը կարողացան ինքնապաշտպանական մարտեր կազմակերպել միայն այն բնակավայրերում, որտեղ հայ տղամարդիկ որոշակի վերապահում ցուցաբերեցին զորակոչի պահանջին:

1914 թ. ապրիլի 5-ին կազմվում է «Վասպուրականի հայ ինքնապաշտպանության մարմին», սակայն ուժերի հարաբերակցությունը հայերի օգտին չէր: Վանեցիներից զենք կարող էին կրել ամենաշատը 1500 հոգի, բայց կար ընդամենը 300 հրացան: Կռվողների շարքերը համալրվեցին միայն հետագայում՝ նահանգի տարբեր շրջաններից Վանի հայկական թաղամասերում ապաստան գտածների հաշվին: Հայերը կարողանում են մոտ մեկ ամիս դիմադրել թնդանոթներով զինված օսմանյան կանոնավոր բանակին, որոնց օգնում էին նաև քրդական ու չերքեզական հրոսակախմբերը[116]:

113. *Henry Morgenthau, Ambassador Morgenthau's Story, New York, 1918, p. 297*
114. *Arthur Beylerian, Les Grandes Puissances L'Empire Ottoman et les Arméniens dans les Archives Françaises (1914-1918), Paris, 1983, p. 25; մեջբերումն ըստ Սահակյան, Ռ. Օ. (1989) 1915 թ. Վանի հերոսամարտը օտար աղբյուրներում. Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 8 . էջ. 54-63:*
115. *Ավելի մանրամասն տես՝ Սահակյան, Ռ. Օ. (1995) Վասպուրականի հայության գոյամարտը 1915 թվականին. Պատմա-բանասիրական հանդես, № 1 . էջ. 19-30:*
116. *Ավելի մանրամասն տես՝ Սահակյան, Ռ. Օ. (1989) 1915 թ. Վանի հերոսամարտը օտար աղբյուրներում. Լրաբեր Հասարակական Գիտությունների,, № 8 . էջ. 54-63:*

Մուշ

Օսմանյան կառավարության ջարդարարներն անհաջողության մատնվելով Վանում, չէին շտապում սկսել Մուշի, շրջակա գյուղերի և Սասունի հայության զանգվածային կոտորածները և սկսել էին ավելի «զգուշորեն» գործել: Բացի այդ, ռուսական Կովկասյան բանակը հաջող հարձակում էր ձեռնարկել, և օսմանյան 3-րդ բանակն ամբողջությամբ զբաղված էր հակառակորդի առաջխաղացումը կասեցնելով: Տեղական իշխանությունները գիտակցում էին, որ քրդական ցեղերն առանց կանոնավոր բանակի, հրետանու և գնդացիրների ի զորու չեն իրականացնելու հայերի ոչնչացումը: Երիտթուրքերը ցանկանում էին, որ ռազմաճակատում իրադրությունը փոքր ինչ կայունացնելուց հետո զորքեր տեղափոխեն և հաշվեհարդար տեսնեն Մուշի հայության հետ: Իրադրությունն անհանգստացնում էր հայերին, սակայն ինքնապաշտպանությունը կազմակերպող դաշնակցական գործիչները որոշում են դիմադրությունը կենտրոնացնել Սասունի լեռներում: Ուստի՝ հայ մարտիկների մեծ մասը բարձրացավ Սասուն, իսկ մի փոքր մասը մնաց Մուշում:

Այդ հսկայական տարածքում ընդամենը 10 փոքր հատուկենտ դիմադրությունն էլ հենց ապացույց է, որ իրականում մարդիկ պատրաստ չէին դիմակայելու:

1915 թ. հուլիսին, ռուսական բանակի նահանջելուց հետո, թուրքական իշխանությունները կարողացան զգալի ուժեր կենտրոնացնել Մուշի հայության դեմ: Թուրքերն ու քրդերն առաջին հարվածը հասցրեցին Մուշ քաղաքի հայկական թաղամասերի և դաշտի հայկական գյուղերի վրա: Իշխանությունների հրամանով քաղաք շտապեցին քրդական զինված հրոսակախմբերը, զենք բաժանվեց նաև թուրք քաղաքացիներին: Հայկական թաղամասերն օղակվեցին թուրքական բանակի ստորաբաժանումներով և քրդական ու թուրքական ելուզակախմբերով:

1915 թ. հունիսի 26-ին Մուշ քաղաքի կառավարիչ Սերվեթը հրամայում է տեղի հայությանը տեղահանել, իսկ չենթարկվելու դեպքում՝ սպառնալ և նրանց հետ հաշվեհարդար տեսնել: 1915 թ. հունիսի 28-ին սկսվում է Մուշ քաղաքի հայության ինքնապաշտպանությունը: Մուշն ուներ հինգ հայկական թաղամաս՝ 12 հազար բնակիչներով: Նրանց էին միացել նաև շրջակա հայկական գյուղերից փախած 10 հազար հայերը: Հայերն ամրանում են որոշակի թաղամասերում ու անցնում ինքնապաշտպանության: Ժամանակ առ ժամանակ հայկական որոշ խմբեր կարողանում են ճեղքել շրջապատման օղակը ու փախչել Սասունի լեռներ: 1915 թ. հունիսի 30-ին թշնամին ավելի մեծ ուժերով սկսում է գրոհը: Թուրքերին հաջողվում է ճեղքել մշեցիների պաշտպանությունը: Ինքնապաշտպանության մասնակիցները մարտնչում են մինչև վերջ և զոհվում: Հայերի դիմադրությունը ճնշելուց հետո թուրքերը քաղաքում վայրենի կոտորած են սկսում: Մասնավորապես, թուրք ոստիկանները հրդեհում են մանկատունը՝ հայ որբերի հետ մեկտեղ[117]:

Վան եկող թուրքական զորքը հենց այն զորքն էր, որը ոչնչացրել էր Վան քաղաքի կողքի բոլոր գյուղերը:

Ուրֆա

Ուրֆա քաղաքի հայերը ինքնապաշտպանության դիմեցին թուրք ջարդարարների դեմ: Քաղաքը 1915 թ. գարնանից վերածվել էր համակենտրոնացման ճամբարի ու աքսորավայրի՝ ամեն օր, առանց դադարի, Արևմտյան Հայաստանի տարբեր քաղաքներից տարագիրների քարավանները անցնում էին Ուրֆայով: Ինչպես գրում էր Ուրֆայի գերմանական առաքելության աշխատակից Բրունո Էքարտը, այս ամենը նպատակ ուներ հայերին տանջալից սովամահության դատապարտել Միջագետքի անապատներում[118]: Աքսորված հայերի թալանը և կողոպուտը շարունակվում էր նաև Ուրֆայում: Քաղաքում հավաքված տարագիրները գտնվում էին ահավոր հակահիգիենիկ պայմաններում, որի պատճառով Ուրֆայի բնակչության մեջ սաստկացել էր տարբեր վարակիչ հիվանդությունների տարածումը:

Հակառակ օսմանյան ղեկավարության խիստ արգելքների, Ուրֆա քաղաքում ապրող հայությունը, որը քաղաքում ապրող մոտ 100 հազար բնակչության մեկ երրորդն էր, փորձում էր ամեն կերպ օգնել տարագիրներին: Տեսնելով թուրքական իշխանությունների դաժան և անողորմ վերաբերմունքը, այդ սպառնալից իրավիճակի քննարկման համար Ուրֆայի հայ բնակչության ներկայացուցիչները ժողով գումարեցին: Թուրքերը եռանդուն կերպով առիթ էին փնտրում Ուրֆայի հայերին նույնպես աքսորելու համար: Ուստի՝ իշխանություններին առիթ չտալու համար որոշվեց անմիջական գործողությունների չդիմել և համբերատար տանում էին բոլոր անարգանքներն ու բռնությունները, որոնք կատարվում էին թուրքական իշխանությունների կողմից: Սակայն իշխանությունները հունիսի 25-ին երկու ժամվա ընթացքում ձերբակալեցին 100-ից ավելի նշանավոր հայերի, ինչպես նաև ժողովի մասնակիցներին: Ձերբակալությունից հաջողվեց խուսափել շատ քչերին: Շուտով երիտթուրքական իշխանությունները 1500 ուրֆացի հայ երիտասարդների ուղարկեցին, այսպես կոչված, «թիկունքային աշխատանքների» և քաղաքից դուրս տա-

Տեղական իշխանությունները գիտակցում էին, որ քրդական ցեղերը, առանց կանոնավոր բանակի, հրետանու և գնդացիրների, ի զորու չեն իրականացնելու հայերի ոչնչացումը:

117. *Ավելի մանրամասն տես՝ Սահակյան, Ռուբեն (2006) Մուշ քաղաքի հայկական թաղամասերի ինքնապաշտպանությունը 1915 թվականին. Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, № 12. pp. 94-102*

118. *Bruno Eckart, Meine Erlebnisse in Urfa, Potsdam, 1922, s. 7, մեջբերումն ըստ՝ Սահակյան, Ռուբեն (2006) Մուշ քաղաքի հայկական թաղամասերի ինքնապաշտպանությունը 1915 թվականին. Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, № 12. էջ 94-102*

նելով նրանց սպանեցին: Այդ դժոխքից հաջողվեց փրկվել միայն երկու հոգու, որոնք այդ աղետաբեր լուրը բերեցին Ուրֆա: Արդեն քաղաք էին ժամանել «Միություն և առաջադիմություն» կուսակցության ներկայացուցիչներ Չերքեզ Ահմեդն ու Խալիլ բեյը, ովքեր և հրահրեցին մահմեդական խաժամուժին ու ղեկավարեցին հայերի կոտորածը: Այդ օրը զոհվեց մոտ 200 հայ: Ուրֆայի հայերն սկսեցին կազմել ինքնապաշտպանական խմբեր և զենք հայթայթել:

Սեպտեմբերի 29-ին ոստիկանությունը շրջապատեց բանվորական գումարտակի կոտորածից փրկված երկու հայ երիտասարդների տունը՝ նրանց իբրև դասալիքների ձերբակալելու համար: Վերջիններս կռվի մեջ մտան և սպանվեցմի քանի ոստիկան, իսկ ընդհարումն առիթ հանդիսացավ սկսելու Ուրֆայի ինքնապաշտպանությունը: Մինչ կանոնավոր զորքի ժամանումը երիտթուրքական իշխանությունները ոտքի հանեցին շրջակայքի մահմեդական բնակչությանը: Այդ ընթացքում հայկական խմբերը պաշտպանվում էին բավականին արդյունավետ կերպով:

...քաղաք էին ժամանել «Միություն և առաջադիմության» կուսակցության ներկայացուցիչներ Չերքեզ Ահմեդն ու Խալիլ բեյը, ովքեր և հրահրեցին մահմեդական խաժամուժին ու ղեկավարեցին հայերի կոտորածը:

Մինչև հոկտեմբերի 12-ը Ուրֆա բերվեցին 3 թուրքական գումարտակ, երկու 120 մմ տրամաչափի հաուբից և երկու դաշտային թնդանոթ: Թուրքերը հայերի դեմ կենտրոնացրեցին մոտ 11 000 զինվոր, որից՝ 6000-ը՝ կանոնավոր զորք, 600-ը՝ Սրուճի Սուլեյման բեկի մարդիկ և մնացածը՝ շրջակա մահմեդական բնակչությունից: Թուրքական շտաբի պետը գերմանացի սպա Վոլֆսկեհլ ֆոն Ռայխենբերգն էր, ով մասնակցել էր Մարաշի և Զեյթունի խաղաղ բնակչության ոչնչացմանը: Թուրքերին օգնում էր ազգությամբ վենեսուելացի, գերմանական բանակի սպա Ռաֆայել դե Նոգալեսը, ով ևս այդ գործում հարուստ «փորձ» ուներ: Այդ

արկածախնդիր անձնավորությունը մասնակցել էր Վանի մարտերին՝ ղեկավարելով թուրքական հրետանին:

Չնայած հայերի անձնազոհ պայքարին, ինքնապաշտպանությունը մոտեցավ իր վախճանին: Մարտերն, ըստ որոշ աղբյուրների, ավարտվել են հոկտեմբերի 15-ին կամ 16-ին, իսկ ըստ այլոց՝ 23-ին կամ 24-ին: Կենդանի մնացած տղամարդկանց թուրքերը և քրդերը կոտորեցին քաղաքում, իսկ կանանց և երեխաներին աքսորեցին սիրիական անապատ[119]:

...հայերը նախաձեռնող չեն եղել, այլ միայն արձագանքել են օսմանյան իշխանությունների քայլերին: Ավելին, հայերը նախապատրաստված չեն եղել ու կողմնորոշվել են տեղում, ինչն ապացուցում է, որ նրանց գործողություններն ամենևին էլ ապստամբություններ չեն:

Այսպիսով, թվարկված երեք դեպքերն էլ փաստում են, որ հայերը նախաձեռնող չեն եղել, այլ միայն արձագանքել են օսմանյան իշխանությունների քայլերին: Ավելին՝ հայերը նախապատրաստված չեն եղել ու կողմնորոշվել են տեղում, ինչն ապացուցում է, որ նրանց գործողություններն ամենևին էլ ապստամբություններ չեն:

Ապստամբության մասին խոսելիս պետք է նշել, որ հայերի համար տրամաբանական կլիներ այն բարձրացնել միաժամանակ բոլոր վայրերում, որովհետև այդ դեպքում հաջողության հասնելու շանսերն ավելի մեծ կլինեին: Հայերի կողմից իրականացված ինքնապաշտպանական մարտերը համակարգված չէին, դրանք առանձին, տեղային գոյամարտեր էին՝ Վանը, Շապին Գարահիսարը, Մուսալեռը և Ուրֆան: Եթե դա իսկապես ապստամբություն էր, ապա բոլոր վայրերում միաժամանակ պետք է սկսեին, բայց սկզբում տեղի ունեցավ Վանի ինքնապաշտպանությունը, հետո Շապին Գարահիսարը, հետո՝ Մուսալեռը, հետո՝ Ուր-

119. *Սահակյան, Ռ. Օ. (1988) Ուրֆայի 1915 թվականի հերոսամարտի պատմությունից. Պատմա-բանասիրական հանդես, № 3. էջ 103-113:*

ֆան: Սա վկայում է այն մասին, որ տվյալ բնակավայրի հայ բնակչությունը ինքնապաշտպանությունն սկսում էր, ջանք էր գործադրում, երբ սպանվելու հերթը հասնում էր իրեն[120]:

Ավելին, անպայման չէ ժխտել հայերի ապստամբությունների վերաբերյալ կարծիքները, ապացուցելու համար, որ Օսմանյան կայսրության կողմից իրականացվածը եղել է ցեղասպանություն: Դասականն այս առումով արդեն Ռուանդայում տեղի ունեցածն է: Ռուանդայում բավականին երկար ժամանակ՝ մինչև ցեղասպանությունը, կար քաղաքացիական պատերազմ էթնիկ հութուների և էթնիկ թութսիների միջև: Բայց Ռուանդայի հարցով միջազգային քրեական տրիբունալը, քննելով գործը, ասաց. «Այո՛, եղել է պատերազմ, քաղաքացիական պատերազմ, բայց դա որևիցե կերպ չի նսեմացնում այն, որ տվյալ ժամանակահատվածում տեղի է ունեցել նաև թութսիների ցեղասպանություն»: Այսինքն, եթե նույնիսկ ասվի, որ, այո՛, եղել են ապստամբություններ Վանում և այլ հայաբնակ վայրերում, այո՛, եղել են ինքնապաշտպանական հայկական ջոկատներ, որոնք մասնակցել են նաև ռուսական բանակի կողմից իրականացված գործողություններին, ապա դա որևիցե կերպ չի կարող արդարացնել Օսմանյան կայսրության կողմից իրականացրած հայկական էթնիկ խմբի ոչնչացման քաղաքականությունը»[121]:

Եթե դա իսկապես ապստամբություն էր, ապա բոլոր վայրերում միաժամանակ պետք է սկսեին:

Նույն կերպ ոչ մի տեղ և ոչ ոք հրեական ողջակիզումը չի արդարացնում՝ ասելով, թե «հրեաները Վարշավայում ապստամբեցին կամ ինքնապաշտպանության դիմեցին, ուստի արդարացված է ամբողջ Ռայխի գերիշխանության տակ գտնվող տարածքներում նրանց սպանելը»[122]:

120. *Հարցազրույց Ա.Մարուքյանի հետ:*
121. *Հարցազրույց Վ.Վարդանյանի հետ:*
122. *Հարցազրույց Կ.Մանոյանի հետ:*

Հրեաների ապստամբությունը Վարշավայում

Վանի, Ուրֆայի, Մուսա լեռան կամ այլ ինքնապաշտպանական մարտերի նման, Հոլոքոստի սկսվելուց հետո միայն հրեաները դիմեցին ինքնապաշտպանության:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Լեհաստանում, Լիտվայում, Բելառուսում և Ուկրաինայում գտնվող մոտ հարյուր գետոներում հիմնվել են ընդհատակյա կազմակերպություններ: Այդ կազմակերպությունների նպատակն էր նախաձեռնել զինված պայքար, այն է՝ ապստամբել, որպեսզի դուրս գան փակ գետոյից ու միանան պարտիզաններին: Կային նաև դեպքեր, երբ ապստամբությունը պլանավորած չի եղել և տեղի է ունեցել ըստ իրավիճակի:

Ռուանդայի հարցով միջազգային քրեական տրիբունալը, քննելով գործը, ասաց. «Այո՛, եղել է պատերազմ, քաղաքացիական պատերազմ, բայց դա որևիցե կերպ չի նսեմացնում այն, որ տվյալ ժամանակահատվածում տեղի է ունեցել նաև թութսիների ցեղասպանություն»:

Բազմաթիվ գետոներում, որտեղ դիմադրությունն ավելի կազմակերպված էր, դա արդյունք էր այն բանի, որ հրեական երիտասարդական շարժումները խորապես ներգրավված էին դիմադրությունների պլանավորմանն ու դրա իրագործմանը: Ակտիվ դիմադրությունը տարբեր տեսք է ունեցել՝ զինված պայքարից մինչև թաքուստ և փախուստ: Զինված պայքարի նախապատրաստումը գետոների գաղտնի խմբերի համար ծայրահեղ բարդ խնդիրներ է ներառել. ինչպես զենք մտցնել գետոյի տարածք, ինչպես կրակային վարժանքներ անցկացնել գետոյի պայմաններում և այլն: Ոչ պակաս բարդ խնդիր էր ստանալ գետոյի բնակիչների աջակցությունն ընդհատակյա մարտիկներին: Հստակ էր, որ ապստամբները չեն ունենալու բնաջնջումը կասեցնելու ոչ մի հնարավորություն: Միակ հաջողությունը կարող էր լինել այն, որ մի խումբ մարտիկներ կարողանա-

յին դուրս պրծնել գետոյից ու միանան պարտիզանական ջոկատների:

Ամենամեծ ու հայտնի ապստամբությունը տեղի ունեցավ Վարշավայի գետոյում՝ 1943 թ. ապրիլ-մայիս ամիսներին, որն առաջնորդվում էր Zydowska Organizacja Bojowa (Հրեական մարտական կազմակերպություն՝ ZOB) կողմից: Այս կազմակերպության անդամները հերքում էին պասիվության ու համակերպվելու հրեական ավանդույթը[123]: Ապստամբությունը տևեց 27 օր: Հենց առաջին օրը նացիստները տեղակայեցին մոտ երկու հազար զինվոր ու ոստիկան, և 36 սպա: Նրանց դիմադրում էին 700-750 երիտասարդ հրեա մարտիկ, ովքեր չունեին զինվորական փորձ և ունեին մի քանի ատրճանակ: Որոշ ժամանակ տևած մարտերից հետո, գերմանացիները որոշեցին պարզապես հրդեհել գետոն՝ տուն առ տուն: Աստիճանաբար հրեաների դիմադրելու կամ թաքնվելու կարողությունը անկում էր ապրում: Մայիսի 8-ին ZOB-ի շտաբը ոչնչացվեց: Մարտիկները նահանջի պլաններ նախապես չէին մշակել: Լեհական հատվածում մի քանի գաղափարակիցների օգնությամբ մի քանի տասնյակ մարտիկներ կարողացան ճողոպրել գետոյից կոյուղու համակարգի միջով: Մայիսի 16-ին գեներալ Յուրգեն Շտրոոպը հայտարարեց, որ մարտերն ավարտվել են և որպես հաղթանակի խորհրդանիշ պայթեցրեց հրեաների պարծանք Մեծ սինագոգը, որը սկզբունքորեն գետոյի սահմաններից դուրս էր, և հայտարարեց, թե «Վարշավայի հրեական թաղամասն այլևս գոյություն չունի»[124]:

...ոչ ոք հրեական ողջակիզումը չի արդարացնում՝ ասելով, թե «հրեաները Վարշավայում ապստամբեցին կամ ինքնապաշտպանության դիմեցին, ուստի արդարացված է ամբողջ Ռայխի գերիշխանության տակ գտնվող տարածքներում նրանց սպանելը»:

123. *Israel Gutman, Resistance: The Warsaw Ghetto Uprising, Mariner books, 1998, p. xvii*
124. *Israel Gutman, Resistance, pp. 1-2;*

Ինչպես արդեն հիշատակեցինք, հրեաները պայքարել են ոչ միայն գետոներում՝ կազմակերպելով ինքնապաշտպանական խմբեր և ընդվզումներ, այլ նաև մասնակցել են պարտիզանական պայքարին: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ պարտիզանները վտանգում էին իրենց կյանքը՝ կազմակերպելով գաղտնի դիմադրություն նացիստների կողմից վերահսկվող տարածքներում: Նրանք հարձակվում էին երկաթուղիների, կամուրջների ու ռազմական հենակետերի վրա: Նրանք նաև սպանում էին նացիստների հետ համագործակցող տեղացիներին:

...հրեաները պայքարել են ոչ միայն գետոներում՝ կազմակերպելով ինքնապաշտպանական խմբեր և ընդվզումներ, այլ նաև մասնակցել են պարտիզանական պայքարին:

Հրեա պարտիզանները էականորեն տարբերվում էին ոչ հրեաներից: Ոչ հրեա պարտիզանները միացել էին պայքարին իրենց երկիրն օտարներից ազատագրելու կամ որպես ձախ սոցիալիստներ ֆաշիզմի գաղափարախոսության դեմ պայքարելու նպատակով: Նրանց ընտանիքները հիմնականում տանն սպասում էին ու ակնկալում, որ պատերազմն ավարտվելուց հետո պարտիզանները տուն կվերադառնան: Հրեա պարտիզանները պայքարում էին ոչ թե հանուն ինչ-որ գաղափարի, այլ իրենց կյանքը պահպանելու համար: Հրեա պարտիզանները չէին մտածում, թե երբևէ իրենց տունը կամ ընտանիքին կտեսնեն, քանի որ նրանց ընտանիքների մեծ մասը սպանվել էր նացիստների կողմից: Ավելին, ոչ հրեա պարտիզաններին՝ որպես հայրենասեր քաղաքացիների աջակցում էին տեղի բնակիչները՝ սննդով և այլ պարագաներով: Հրեաները շատ հազվադեպ կարող էին հույսները դնել տեղաբնակների վրա, որոնք հաճախ հրեատյաց էին[125]: Այդուհանդերձ, հրեական պարտիզանական ջոկատ-

125. *Resistance during the Holocaust, Anti-defamation League, http://www.adl.org/assets/pdf/education-outreach/Resistance-During-the-Holocaust-NYLM-Guide.pdf*

ները բավականին արդյունավետ կերպով պայքարում էին նացիստների դեմ ու էական վնաս էին հասցնում նրանց զորքին:

Ինչպես տեսնում ենք, հրեաների մի մասը բավականին ակտիվ կերպով զենքը ձեռքին պայքարել է նացիստների դեմ, ապստամբել է, պարտիզանական պայքար վարել անկանոն զինված խմբերով, սակայն երբևիցե ոչ ոք չի փորձել արդարացնել կամ հիմնավորել հրեական ողջակիզումը վերջիններիս դիմադրության փաստով: Ապստամբությունը, և հատկապես ինքնապաշտպանությունը, չեն արդարացնում ցեղասպանության իրագործումը:

Հրեա պարտիզանները չէին մտածում, թե երբևէ իրենց տունը կամ ընտանիքին կտեսնեն, քանի որ նրանց ընտանիքների մեծ մասը սպանվել էր նացիստների կողմից:

Այսպիսով, Հայոց ցեղասպանությունը վախի հետևանք է, որովհետև ապստամբել և ազատագրվել էին բուլղարները, ռումինները, սերբերը, հույները: Եվ թուրքերը միշտ սպասում էին, որ հաջորդը կլինեն հայերը: Այդ վախի սպասումը բերեց նրան, որ կայացվի հայերին ոչնչացնելու որոշում: Ապստամբություն իրականում տեղի չի ունեցել, քանի որ հայ քաղաքական միտքը սխալ էր գնահատել իրավիճակը և պատրաստ չէր դեպքերի նման զարգացման: Զինված ընդհարումների հատուկենտ դեպքերը ինքնապաշտպանություն էին, հայերը չեն եղել նախաձեռնող, այլ միայն արձագանքել են օսմանյան իշխանությունների քայլերին: Ավելին, հա-

...հրեաների մի մասը բավականին ակտիվ կերպով, զենքը ձեռքին պայքարել է նացիստների դեմ, ապստամբել է, պարտիզանական պայքար վարել անկանոն զինված խմբերով, սակայն երբևիցե ոչ ոք չի փորձել արդարացնել կամ հիմնավորել հրեական ողջակիզումը վերջիններիս դիմադրության փաստով:

յերը նախապատրաստված չեն եղել ու կողմնորոշվել են տեղում: Ինքնապաշտպանական գործողությունների թիվն էլ ընդհանուր առմամբ շատ քիչ էր: Այդ հսկայական տարածքում ընդամենը 10 փոքր դիմադրությունը ապացույցն է այն բանի, որ իրականում հայերը պատրաստ չէին: Սակայն նույնիսկ ապստամբության կամ զինված պայքարի առկայությունը որևիցե կերպ չի կարող արդարացնել Օսմանյան կայսրությունում ընթացող հայկական էթնիկ խմբի ոչնչացման քաղաքականությունը:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ՝ 1919-1920 ԹԹ.

Հայոց ցեղասպանությունն առաջինը ճանաչել է Օսմանյան կայսրությունը: Երիտթուրքերի իրականացրած հայերի բնաջնջման քաղաքականությունը թուրքական ռազմական արտակարգ ատյանների միջոցով պաշտոնապես դատապարտվել է հենց թուրքերի կողմից՝ դեռևս 1919-1920 թթ.:

Պարտված Օսմանյան կայսրության սուլթանը և անընդմեջ փոփոխվող սադրազամները՝ վարչապետերը, միջազգային հանրության ճնշման ներքո, Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին հաջորդած ամիսներին որոշեցին դատական պատասխանատվության ենթարկել պատերազմի տարիներին կատարված հանցագործությունների հեղինակներին: Պատասխանատվության խնդիր էին համարվում նաև մեղադրանքները հայերի տեղահանության ու կոտորածների համար:

1919-1920 թթ. ընթացքում, հայերի տեղահանության ու կոտորածների մեղադրանքով տեղի ունեցան 63 տարբեր դատական պրոցեսներ, որոնցից գլխավոր են համարվում «Միություն ու առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամների, «Հատուկ կազմակերպության» ղեկավարների, կառավարության անդամների և կուսակցության պատասխանատու քարտուղարների դատավարությունները:

Հայոց ցեղասպանության ուսումնասիրման տեսանկյունից վկայություններով առավել հարուստ են Յոզղատի և Տրապիզոնի դատական նիստերը, որոնց ընթացքում լսված վկայություններն ու ցուցմունքները, ինչպես նաև հետաքննության ընթացքում ձեռք բերված պաշտոնական փաստաթղթերը կրկին հաստատում են, որ կոտորածները ոչ թե եղել են տեղական պաշտոնյաների չարաշահման արդյունք, այլ կազմակերպված են եղել կառավարության կող-

մից[126]: Թե՛ Յոզղատի, թե՛ Տրապիզոնի դատական նիստերի ընթացքում հանդես եկած վկաները հիմնականում եղել են թուրքեր և այլ ազգությունների մահմեդականներ[127]: Բացի այդ, Տրապիզոնի դատավարության ընթացքում վկայություններ են տվել բարձրաստիճան այնպիսի պաշտոնյաներ, ինչպիսիք են՝ Վանի նախկին նահանգապետ Նազըմը, Էրզրումի նախկին նահանգապետ Թահսինը, ռազմածովային նախարար Ամնին, իրավական տեսուչ Քենանը, Տրապիզոնի և Լազիստանի զորքերի շտաբի պետ, գնդապետ Մուհթարը, լեյտենանտ Ահմեդը և ուրիշներ[128]:

Ինչը դրդեց օսմանցիներին նախաձեռնել դատավարությունները:

Առաջին պատճառը՝ որպես բացատրություն այս քայլի, դա իթիլաֆականների վրեժն է իթիհաթականներից: «Ազատություն և համաձայնություն» («Հյուրիյեթ վե իթիլաֆ») կուսակցությունը երիտթուրքերի՝ «Միություն և առաջադիմություն» («Իթիհաթ վե թերաքի») կուսակցության իշխանության տարիներին վտարանդի էր և անդամների մեծ մասը աքսորված էր: Իթիհաթականների ղեկավարած Օսմանյան կայսրության՝ Առաջին համաշխարհային պատերազմում պարտությունից հետո իշխանության եկան իթիլաֆականները, որոնք, ըստ որոշ պատմաբանների, ձգտում էին ռևանշիզմի:[129] Ըստ նրանց՝ սա էր պատճառը, որ իթիլաֆականներն, օգտագործելով վարչական լծակները և վայելելով անգլիացիների աջակցությունը ամեն հնարավոր

126. *Յոզղատի և Տրապիզոնի դատական նիստերի մասին ավելի մանրամասն տես՝ Meline Anumyan, The irrefutable testimonies of the Armenian Genocide in the trials of the deportations and massacres of the Armenians from Yozghat and Trebizond, Regional Affairs, volume 2 (5), 2014:*
127. *Taner Akçam, İnsan hakları ve Ermeni sorunu. İttihat ve Terakki'den Kurtuluş savaşına, 2. baskı, İstanbul, 2002, s.303*
128. *Ավելի մանրամասն տես՝ Մելինե Անումյան, Ճանաչում և դատապարտում. երիտթուրքերի դատավարությունները (1919-1921 թթ. և 1926 թ.), Երևան, 2013:*
129. *Հարցազրույց Ա. Մարուքյանի հետ:*

միջոց ձեռնարկում էին իթիհաթականներից վրեժխնդիր լինելու համար, այդ թվում՝ մեղադրելով ու դատապարտելով նաև հայկական կոտորածների համար:

Երկրորդ պատճառը, որ ավելի հաճախ է օգտագործվում թուրք պատմաբանների կողմից, անգլիական ճնշումն էր, քանզի այդ ժամանակահատվածում անգլիական նավատորմը գտնվում էր Կոստանդնուպոլսում[130] ու բրիտանացիները շատ հետաքրքրված էին պատերազմի հանցագործներին պատժելու հարցում: Ընդհանրապես, այս դատավարությունների հարցում անգլիացիների պրոցեսում հետաքրքրվածությունն ու մայրաքաղաքում ներկայությունը շատ է շահարկվում և հաճախ՝ անտեղի:

ա) պրոցեսում հետաքրքրվածությունը.

Տրապիզոնի դատավարության ընթացքում վկայություններ են տվել բարձրաստիճան այնպիսի պաշտոնյաներ, ինչպիսիք են՝ Վանի նախկին նահանգապետ Նազըմը, Էրզրումի նախկին նահանգապետ Թահսինը, ռազմածովային նախարար Ալին:

Եթե թուրքերն իսկապես անգլիացիների ուղղակի ճնշման տակ էին, և եթե անգլիացիներն էին թելադրում, որ կայանար այդ դատավարությունը, ապա ինչու իրենք՝ անգլիացիները չկազմակերպեցին այդ դատավարությունը[131]: Երբ առաջին մեղադրյալը դատապարտվեց, որը Ցոզղադի դատավարության գծով էր, և մահապատժի ենթարկվեց, դա մեծ վրդովմունքի ալիք բարձրացրեց: Երիտթուրքերը, որոնք շարունակում էին մեծ ուժ կազմել Օսմանյան կայսրությունում, մեծ ցույցեր կազմակերպեցին Ստամբուլում: Նույն օրերին հունական զորքը մտել էր Իզմիր, Զմյուռնիա: Հենց այդ ժամանակ Անգլիան մտավախություն ունենալով, որ դրա պատճառով մյուս մեղադրյալներին ազատ կարձակեն, որոշեց նրանց տեղափոխել Մալթա կղզի, ինչը և արեց 1919 թ. մայիսի վերջերին[132]: Հարց է ծագում՝ եթե Ստամբուլում անգլիացիների կողմից կար ճնշում երիտթուրքերին հանցագործությունների համար դատապարտելու ուղղությամբ, ապա ինչն էր խանգարում անգլիացիներին, որ դա արվեր Մալթայում: Նրանք կարող էին ստեղծել տրիբունալ և անաչառ կերպով անցկացնել դատը[133], առավել ևս, որ հենց Մալթայի աքսորյալներն ամենակարևոր մեղադրյալներն էին՝ հիմնականում կառավարության անդամներ[134]: Բայց պատմական փաստերը ցույց տվեցին, որ անգլիացիները բացարձակապես շահագրգռվածություն չունեին այս հարցում, մանավանդ՝ հույն-թուրքական պատերազմից հետո, երբ շատ բարձրաստիճան սպաներ գերի էին ընկել Մուստաֆա Քեմալի մոտ, և արխիվային փաստերը վկայում էին այն մասին, որ այդ աքսորված 66 իթիհաթականները՝ գերիների փոխանակման տեսակետից, ընդամենը խաղաքար էին անգլիացիների համար: Եվ այդպես էլ եղավ՝ վերջում բոլորն էլ ազատ արձակվեցին[135], վերադարձան Ստամբուլ, և հետագայում հենց նրանք դարձան Թուրքիայի Հանրապետության հիմնադիր կադրերը[136]:

...պատմական փաստերը ցույց տվեցին, որ անգլիացիները բացարձակապես շահագրգռվածություն չունեին այս հարցում:

բ) մայրաքաղաքում ներկայությունը.

Առաջին համաշխարհային պատերազմում հաղթանակ տարած ուժերի ներկայությունը մայրաքաղաքում, որտեղ անցկացվում էին դատական նիստերը, կարող է դիտարկվել որպես հոգեբանական ազդեցություն պրոցեսի վրա: Սակայն այդ դեպքում նման ազդեցությունը գերագնահատող

130. *Հարցազրույց Ա. Մարուքյանի հետ:*
131. *Հարցազրույց Ա. Մարուքյանի հետ:*

132. *Հարցազրույց Մ. Անումյանի հետ:*
133. *Հարցազրույց Ա. Մարուքյանի հետ:*
134. *Հարցազրույց Մ. Անումյանի հետ:*
135. *Հարցազրույց Ա. Մարուքյանի հետ:*
136. *Հարցազրույց Ա. Խոսրոևայի հետ:*

պատմաբանները պետք է չեղյալ համարեն նաև Նյուրնբերգյան դատավարությունները: Ոչ պակաս օկուպացիայի ժամանակ էր Նյուրնբերգը, երբ այդտեղ դատավարություն արվեց Հոլոքոստի մեղավորներին դատական պատասխանատվության ենթարկելու նպատակով[137]: Նյուրնբերգում հաղթող ուժը դատում էր պարտված ուժին: Թե Նյուրնբերգում, թե Տոկիոյում դատավորները և դատախազները հաղթող ուժերի ներկայացուցիչներ էին՝ ԽՍՀՄ-ից, ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից և այլն: Ի տարբերություն այդ՝ միջազգային հանրության կողմից ընդունված և Հոլոքոստի դատապարտման տեսանկյունից անկյունաքար համարվող դատավարությունների՝ Ստամբուլի դատական պրոցեսները անց են կացվել թուրքական օրենքներով, թուրքական դատարանով, թուրք դատավորներով ու դատախազներով, այսինքն՝ որակապես ավելի բարձր են ու անհամեմատելիորեն զերծ ազդեցությունից[138]:

...վերջում բոլորն էլ ազատ արձակվեցին, վերադարձան Ստամբուլ և հետագայում հենց նրանք դարձան Թուրքիայի Հանրապետության հիմնադիր կադրերը:

Իրական պատճառը.

Կարծում ենք դատավարությունների անցկացման ամենակարևոր պատճառն այն էր, որ Առաջին աշխարհամարտի ավարտից արդեն սկսվել էին խոսակցություններ Անտանտի տերությունների մոտ ռազմական տրիբունալներ ստեղծելու մասին: Օսմանյան կայսրությունը մտավախություն ուներ, որ եթե խաղաղ բնակչության նկատմամբ կատարված հանցագործությունները քննվեն ոչ թե Օսմանյան դատարանում, այլ միջազգային դատարանում, ապա ի հայտ է գալու Օսմանյան պետության պատասխանատվության խնդիրը, ինչը ենթադրելու էր նաև տարածքային կորուստներ, նյութական հատուցման խնդիր և այլն[139]: Այդ ժամանակ արդեն Ֆրանսիայում Խաղաղության վեհաժողովի նախապատրաստական աշխատանքներն էին ընթանում և, օրինակ, Սևրի պայմանագրի մեջ կար մի դրույթ՝ հանցագործության պատասխանատուներին պատժելու և տվյալ պետությանը փոխհատուցում տալու վերաբերյալ: Ուստի, օսմանցիները փորձում էին նվազագույնի հասցնել այդ պարտադրանքները և դրա համար էլ իրենք նախաձեռնեցին և իրականացրին դատավարությունները[140]: Այսինքն, օսմանյան պետությունը գիտակցում էր այն բոլոր հնարավոր ծանր հետևանքներն իր համար, որոնք կարող էին ի հայտ գալ, եթե Հայոց ցեղասպանության հարցը քննվեր միջազգային տրիբունալում: Դրանից էլ բխում է այն շտապողականությունը, որն ի հայտ եկավ 1918 թ. վերջերին: Այսինքն՝ հենց Միդրոսի զինադադարի կնքումից անմիջապես հետո շատ արագ սկսվեցին քննարկումները մամուլում, ապա՝ օսմանյան խորհրդարանում, և այնուհետև հենց 1919 թ. սկզբներին անմիջապես սկսվեց դատավարությունը[141]:

Ոչ պակաս օկուպացիայի ժամանակ էր Նյուրնբերգը, երբ այդտեղ դատավարություն արվեց Հոլոքոստի մեղավորներին դատական պատասխանատվության ենթարկելու նպատակով:

Այսինքն, սկզբունքորեն այս դատավարությունները նպատակ ունեին փրկելու Օսմանյան կայսրության մնացորդներն ու հնարավորինս մեղմել պատիժը՝ եթե ոչ անհատների, ապա գոնե պետության հանդեպ: Այս դատավարություններով, փաստորեն, կանխվեցին հետագայում այլ նմանատիպ դատավարությունների կազմակերպումը: Բացի այդ, եթե քննարկենք, թե պատժի առումով ինչ ար-

137. *Հարցազրույց Ս. Մանուկյանի հետ:*
138. *Հարցազրույց Կ. Մանոյանի հետ:*

139. *Հարցազրույց Մ. Անումյանի հետ. հարցազրույց Ա. Մարուքյանի հետ:*
140. *Հարցազրույց Կ. Մանոյանի հետ:*
141. *Հարցազրույց Մ. Անումյանի հետ. հարցազրույց Ա.Մարուքյանի հետ:*

դյունք ունեցան այս դատավարությունները, պետք է փաստենք, որ թուրքական պետությունն անձամբ պատիժ չի իրականացրել, դատական վճիռ չի կայացվել, որովհետև մեղադրյալների ճնշող մեծամասնությունն ազատվել է կամ հետագայում փոխանակվել բրիտանական ռազմագերիների հետ: Այսինքն՝ իրականում պատիժը, որպես այդպիսին, թուրքական կառավարությունը չի իրականացրել, պատիժը իրականացվել է հետագայում՝ հայ վրիժառուների միջոցով[142]: Միայն մի հոգի է կախաղան բարձրացվել, որը շատ փոքր պատասխանատվություն է նման հանցագործության համար[143]: Իրական պատասխանատուները մեծ մասամբ պատասխանատվության չեն ենթարկվել և նույնիսկ հետագայում դարձել են հանրապետական Թուրքիայի կարևոր դեմքեր[144]:

...դատավարությունների անցկացման ամենակարևոր պատճառն այն էր, որ Առաջին աշխարհամարտի ավարտից արդեն սկսվել էին խոսակցություններ Անտանտի տերությունների մոտ ռազմական տրիբունալներ ստեղծելու մասին:

Բացի այդ, ցեղասպանությունը քաղաքական հանցագործություն է, և սխալ է փորձը՝ վերաձևակերպելու այդ հանցագործությունը ուղղակի քրեական հանցագործության, քանի որ կարող են մարդիկ պատժվել, բայց հանցագործությունն ընդամենը մարդու սպանություն չէր: Եվ այդ առումով, օսմանյան դատարանում հանցագործությունն իր իրավաբանական ավարտը չի ստացել[145]:

Այդուհանդերձ, թուրքական տրիբունալների վճիռները անուղղակիորեն վկայում են այն մասին, որ Օսմանյան կայսրությունն ինքն է առաջիններից մեկը ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Օսմանյան կայսրության քրեական օրենսգրքում, բնական է, չի եղել ցեղասպանության

142. *Հարցազրույց Ս. Մանուկյանի հետ:*
143. *Հարցազրույց Ռ. Սաֆրաստյանի հետ:*
144. *Հարցազրույց Ա. Խոսրոևայի հետ:*
145. *Հարցազրույց Ս. Մանուկյանի հետ:*

մասին հոդված, բայց գլխավոր մեղադրյալները մահվան էին դատապարտվում քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածով՝ առաջին կարգի սպանություն կատարելու մեջ, իսկ առաջին կարգի սպանությունը կանխամտածված սպանությունն է, այդ կանխամտածվածության տարրն էլ շատ կարևոր է ցեղասպանություն հանցագործության բնութագրման համար[146]: Սա ամենամեծ ապացույցներից մեկն է Հայոց ցեղասպանության մեջ Օսմանյան պետության մեղսակցության հարցում, որովհետև բոլոր մեղադրվորներն Օսմանյան պետության պաշտոնյաներ էին: Դա նշանակում է, որ Հայոց ցեղասպանությունը Օսմանյան կայսրության պաշտոնական կամ պետական կարգով կազմակերպված հանցագործություն էր[147]: Այնպես որ, հենց օսմանյան դատարանն ինքը իր վճիռներով, փաստորեն, համարժեք գնահատական էր տալիս կատարված հանցագործությանը, և կարող է խոսվել գնալ ոչ թե Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչելու, այլ՝ վերաճանաչելու մասին[148]:

...օսմանյան պետությունը գիտակցում էր այն բոլոր հնարավոր ծանր հետևանքներն իր համար, որոնք կարող էին ի հայտ գալ, եթե Հայոց ցեղասպանության հարցը քննվեր միջազգային տրիբունալում:

146. *Հարցազրույց Ա. Մարուքյանի հետ:*
147. *Հարցազրույց Ս. Մանուկյանի հետ:*
148. *Հարցազրույց Ա. Մարուքյանի հետ:*

ԲԱՑ ԵՎ ՓԱԿ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՐԽԻՎՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արխիվները ծառայում են որպես հասարակության հավաքական հիշողություն: Դրանք պահպանում են անցյալի վկայություններն ու ապահովում անցյալում իրականացված գործողությունների հանդեպ պատասխանատվությունն ու թափանցիկությունը: Արխիվներն օգնում են մարդկանց օբյեկտիվ պատկերացում ունենալ իրենց անցյալի ու պատմության վերաբերյալ, ինչպես նաև ճիշտ հասկանալ առանձին անձանց ու կատարված իրադարձությունների, կազմակերպությունների դերն անցյալը կերտելու գործում: Անցյալի վերաբերյալ հնարավորինս օբյեկտիվ գիտելիքները հնարավոր են դարձնում կերտելու ավելի լավ ապագա: Սակայն անցյալի կերտման գործում դերակատարում ունեցողների մի մասը թաքցնելով անցյալի մութ էջերը, ոչ ճիշտ ներկայացնելով պատմությունը փորձում է փոխել ապագան: Նրանց կողմից արվում է ամեն ինչ՝ փաստաթղթերն ու արխիվները ոչնչացնելու, արխիվները հույժ գաղտնի պահելու և հետքերը մաքրելու ուղղությամբ: Փաստաթղթերի և արխիվների նկատմամբ առավել ուշադիր են լինում մարդկության դեմ ոճրագործություն կատարած հանցագործները: Ցեղասպանությունների մասին ուղղակի կերպով վկայող փաստաթղթերը շատ դեպքերում դժվար է գտնել:

...թուրքական պետությունն անձամբ պատիժ չի իրականացրել, դատական վճիռ չի կայացվել, որովհետև մեղադրյալների ճնշող մեծամասնությունն ազատվել է կամ հետագայում փոխանակվել բրիտանական ռազմագերիների հետ:

Եվ՝ նացիստական Գերմանիայում, և Օսմանյան կայսրությունում, և Ռուանդայում ոճրագործները հասկանում էին, որ ցեղասպանությունն այն հանցագործություններից

է, որը պատժելի է բոլոր դեպքերում: Սակայն ամեն դեպքում, որքան էլ մաքրազերծվեն արխիվները, ցեղասպանությունն այնպիսի զանգվածային գործողություն է, որի բոլոր հետքերը գործնականում հնարավոր չէ ջնջել: Արխիվների թերի կամ բացակա լինելու դեպքում, ցեղասպանությամբ զբաղվող մասնագետները դիմում են գործողությունների ընդհանուր վերլուծությանը, ուսումնասիրում կատարված հանցագործությունը և եզրահանգում, որ ոճրագործությունը կատարելիս գոյություն է ունեցել կանխամտածվածություն, որն էլ փաստում է, որ կատարվածն իրոք ցեղասպանություն է[149]:

...թուրքական տրիբունալների վճիռներն անուղղակիորեն վկայում են այն մասին, որ Օսմանյան կայսրությունն ինքն է առաջիններից մեկը ճանաչել Հայոց Ցեղասպանությունը:

Հայոց ցեղասպանության ուսումնասիրության ընթացքում հաճախ է բարձրացվում արխիվների հարցը: Շատ մասնագետներ են ուսումնասիրել ամերիկյան, բրիտանական, ռուսական, իտալական, Օսմանյան կայսրության դաշնակից գերմանական ու ավստրիական արխիվները, սակայն ամենակարևորը՝ թուրքական արխիվները, դեռ լիարժեք ուսումնասիրված չեն[150]:

Սա ամենամեծ ապացույցներից մեկն է Հայոց Ցեղասպանության մեջ Օսմանյան պետության մեղսակցության հարցում, որովհետև բոլոր մեղավորներն Օսմանյան պետության պաշտոնյաներ էին:

Թուրքական արխիվները

Ինչ է նշանակում ուսումնասիրել թուրքական արխիվները ցեղասպանության մասին: Նշանակում է, որ պետք է ենթադրել, թե Օսմանյան արխիվներում կան փաստաթղթեր

149. *Հարցազրույց Վ. Վարդանյանի հետ:*
150. *Հարցազրույց Ա. Խոսրոևայի հետ:*

Հայոց Ցեղասպանության վերաբերյալ[151]:

Անշուշտ, որքան էլ ոչնչացված ու մաքրազերծված լինեն արխիվները, ցեղասպանության մասին վկայող որոշ փաստաթղթեր սպրդած կլինեն այդ մաքրազերծումներից ու հավելյալ լույս կսփռեն ցեղասպանությունն իրականացնողների, նրանց կատարած գործողությունների ու մեթոդների վրա: Սակայն պետք է հստակ հասկանալ Հայոց ցեղասպանության անցկացման մեխանիզմը և մութ սենյակում սև կատու չփնտրել, որն ամենայն հավանականությամբ այնտեղ չէ:

Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանությունն իրականացվել է երկու խողովակներով՝ պետական և կուսակցական, ընդ որում առավել ազդեցիկ են եղել հենց «Միություն և առաջադիմություն» («Իթթիհատ վե Թերաքքի») կուսակցության լծակները: Ցեղասպանության պրոցեսի համակարգողը եղել է Թալեաթը՝ իր իշխանական երկու ազդեցությամբ. որպես ներքին գործերի նախարար և որպես երիտթուրքական կուսակցության իրական ղեկավար: Որպես ներքին գործերի նախարար նա հրաման է տվել վիլայեթների ղեկավարներին՝ վալիներին, կազմակերպել հայերի տեղահանությունը: Միաժամանակ, Թալեաթը հրամաններ է տվել կուսակցության կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչներին, որոնք գտնվում էին տարբեր վիլայեթներում: Օսմանյան կայսրությունը ձևականորեն ղեկավարվում էր կառավարության կողմից, բայց իրականում երկիրը կառավարում էր երիտթուրքերի կենտրոնական կոմիտեն: Հենց կոմիտեն է ընդունել հայերին ցեղասպանության ենթարկելու անդրանիկ որոշումն, ու նախքան պետական մեխանիզմն աշխատեցնելը՝ կուսակցական խողովակները տարածել էին որոշման գործադրման հրամաններն, ու գործընթացն արդեն սկսված էր[152]: Ցեղասպանությունն իրականացվել է Միություն ու առաջադիմություն

151. *Հարցազրույց Ռ. Սաֆրաստյանի հետ:*
152. *Հարցազրույց Ռ. Սաֆրաստյանի հետ:*

կուսակցության կոմիտեի հովանու ներքո ու մասնավորապես հայտնի դոկտոր Բեհաեդդին Շաքիրի ղեկավարությամբ գործող Հատուկ կազմակերպության կողմից[153]: Ցեղասպանության հեղինակների մասին ավելի մանրամասն տես համապատասխան գլխում:

Հայոց ցեղասպանությունն ուսումնասիրողներին թուրքական արխիվներից պետք է հետաքրքրեն ոչ միայն պետական արխիվները, այլ, առավել ևս, կուսակցական արխիվը: Պետական արխիվներում կան փաստաթղթեր, որոնք վերաբերում են հիմնականում տեղահանումներին: Դրանք այժմ Թուրքիայում հրատարակվում են: Այդ փաստաթղթերը հետաքրքիր են և անուղղակի լույս են սփռում անցյալի վրա: Սակայն հիմնական փաստաթղթերը կուսակցական՝ երիտթուրքական կուսակցության կենտրոնական կոմիտեի փաստաթղթերն են: Բայց երիտթուրքական կենտրոնական կոմիտեի՝ ցեղասպանությանն առնչվող հիմնական փաստաթղթերը գոյություն չունեն, ոչնչացվել են կամ դեռ հրապարակում չկան: Ականատեսների վկայությամբ կան որոշ տվյալներ, որ թուրք ղեկավարները 1918 թվականի հոկտեմբերի 30-ից մինչև նոյեմբերի 1-ը գերմանական նավով փախչելիս իրենց հետ տարել են որոշ փաստաթղթեր (օրինակ՝ Նազըմ Բեյը): Կան ականատեսներ, ովքեր վկայում են, որ կուսակցության կենտրոնական կոմիտեում մի քանի օր շարունակ փաստաթղթեր էին վառվում ու այնտեղից ծուխ էր դուրս գալիս: Այդ առումով կան գերմանացիների մասնակցությանը վերաբերվող տեղեկություններ, որ գերմանական ռազմական պատվիրակության վերջին ղեկավարը՝ գեներալ Ջեքտը իր հետ Գերմանիա է տարել փաստաթղթերի մի մասը՝ կապված հայերի կոտորածների և ցեղասպանության հետ: Բայց

...ցեղասպանությունն այնպիսի զանգվածային գործողություն է, որի բոլոր հետքերը գործնականում հնարավոր չէ ջնջել:

153. *Հարցազրույց Ա. Խոսրոևայի հետ:*

այդ շրջանի գերմանական ռազմական արխիվները չկան: Ենթադրվում է, որ մեծ մասը ոչնչացվել է երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, թեև կան նաև որոշ տեղեկություններ, որ արխիվները տարվել են ԱՄՆ[154]: Ամեն դեպքում հենց ինքը՝ գեներալ Ջեքտը զեկուցում էր, որ «պաշտոնական հրամանները, որոնք ներկայացվում էին որպես պաշտոնական քաղաքականության արտացոլանք, հավելվում էին գաղտնի հրահանգներով. երբեմն այդ գաղտնի հրահանգները տեղյակ էին պահում հասցեատերերին, որ պաշտոնական հրամանները պետք չէ լրջությամբ ընդունել[155]»:

...պետք է հստակ հասկանալ Հայոց ցեղասպանության անցկացման մեխանիզմը:

Ինչ վերաբերվում է թուրքական պետական արխիվներին, ապա մեկ բառով հնարավոր չէ ասել՝ փակ են, թե՝ բաց: Նախևառաջ, թուրքական արխիվները հսկայական նյութ պարունակող, կուտակված մի շտեմարան են, որոնք մինչ այսօր նույնիսկ կանոնակարգված չեն, և դասակարգման ենթարկված փաստաթղթերը շատ քիչ են: Այդ առումով շատ դեպքերում լուրջ խնդիրներ են առաջանում նաև այն մարդկանց համար, ովքեր հնարավորություն ունեն այնտեղ աշխատելու:

Արխիվների հետ կապված երկրորդ կարևոր իրողությունն այն է, որ թուրքական արխիվները մաքրազտվել են բազմաթիվ անգամներ: Դեռ 1960-ական թվականներից, երբ եզակի մասնագետների էր իրավունք տրվում ուսումնասիրելու թուրքական արխիվները, թուրքական պետությունը հասկացավ, թե ինչ վտանգավոր նյութեր կարող են պարունակել դրանք և ուղղորդված, պետականորեն նախաձեռնված սկսեց այդ արխիվների մաքրազտումը: Թուրքիայի Հանրապետության պատմության ընթացքում մի շարք ռազմական հեղաշրջումներ են իրականացվել, և ամեն հեղաշրջումից հետո, նոր եկող մարդկանց խումբը կրկին մաքրազտում էր արխիվները: Մարդիկ, ովքեր եղել են այդ արխիվներում և փորձել են աշխատել այնտեղ, փաստում են, որ շատ հստակ զգացվում է այդ մաքրազերծումը, քանի որ թվակալումը ընդհատվում է: Օրինակ՝ կարող են 41-րդ թղթապանակում գտնվել 5, 6 և հետո 8, 9, 10 փաստաթղթերը, իսկ 7-րդ փաստաթուղթն ուղղակի չլինել:

1987 թ. մայիսին Պետական արխիվի տնօրեն նշանակված Իսմեթ Միրոզլուի գլխավորությամբ այդ արխիվներից հայկական նյութը հնարավորինս մաքրվեց: 1989 թ. մայիսին թուրքական պետությունը հանդիսավորությամբ հայտարարեց օսմանյան արխիվների բացման վերաբերյալ[156]: Սակայն այդ հայտարարությամբ թուրքերի կողմից կատարվեց բացթողում, հայտարարվեց, որ արխիվները բաց են մինչև 1894 թ., դրանով իսկ մատնելով իրենց, քանի որ յուրաքանչյուր արխիվ ունի գաղտնիության, վաղեմության ժամկետ, իսկ նրանք լավ հասկանալով, որ 1894–96 թթ. համիդյան կոտորածների շրջանի հրապարակումը վտանգ է ներկայացնում, այդ արխիվները պահեցին փակի տակ[157]:

Հայոց ցեղասպանությունն իրականացվել է երկու խողովակներով՝ պետական և կուսակցական:

Ամեն դեպքում թուրքական արխիվների մասին քննարկելիս պետք է խուսափել մեկ այլ ծուղակից: Շատ են քննարկումները թուրքական արխիվների բաց կամ փակ լինելու վերաբերյալ: Սակայն խոսելով Թուրքիայի արխիվների մասին, որոնք այս կամ այն կերպ առնչվում են Հայկական հարցին և հայերին, կամ ընդհանրապես Օսմանյան կայսրության և իր իրավահաջորդ Թուրքիայի Հանրապետության պատմությանը, պետք է տարբերակել պետական

154. *Հարցազրույց Ռ. Սաֆրաստյանի հետ:*
155. *General von Seeckt, Die Gründe des Zusammenbruchs der Türkei, from V.Dadrian, German Responsibility in the Armenian Genocide, Watertown, 1996, p. 135.*

156. *Հարցազրույց Ս. Մանուկյանի հետ:*
157. *Հարցազրույց Ա. Մելքոնյանի հետ:*

արխիվներն ու Գլխավոր շտաբի ռազմական արխիվները:

1. Թուրքիայի Հանրապետության վարչապետի աշխատակազմին կից Պետական արխիվների գլխավոր տնօրինություն (Başbakanlık'a bağlı Devlet Arşivleri Genel Müdürlüğü): Այստեղ պետք է իմանալ, որ Օսմանյան կայսրության ժամանակաշրջանին վերաբերող արխիվային նյութերը գտնվում են Օսմանյան արխիվներում, որոնք գտնվում են Ստամբուլի Քաղաքթհանե վարչական շրջանում՝ Սադաբաթ կոչվող վայրում, իսկ հանրապետական շրջանին պատկանող նյութերը գտնվում են Հանրապետական շրջանի արխիվային ֆոնդերում, որոնք տեղակայված են Անկարայում: Այս արխիվը բաց է բոլոր ուսումնասիրողների համար և միջազգային չափորոշիչներին համապատասխան՝ մատուցում է բարձրակարգ ծառայություն: Ստամբուլում գտնվող օսմանյան արխիվների արխիվային ֆոնդերի բոլոր կատալոգները թվային տիրույթում են և դրանք կարելի է պատվիրել համակարգչի միջոցով: Արխիվային փաստաթղթերի մի մասը թվայնացված է և ցանկացած ժամանակ կարելի է ուսումնասիրել, ցանկության դեպքում՝ պատվիրել CD կրիչի վրա (վճարելու դեպքում):

Հենց կոմիտեն է ընդունել հայերին ցեղասպանության ենթարկելու անդրանիկ որոշումն ու նախքան պետական մեխանիզմն աշխատեցնելը կուսակցական խողովակները տարածել էին որոշման գործադրման հրամաններն, ու գործընթացն արդեն սկսված էր:

Այն փաստաթղթերը, որոնք դեռևս թվայնացված չեն, պատվիրելու դեպքում կարելի է ստանալ հաջորդ օրը, իսկ ցանկության դեպքում՝ պատճենը կամ սքանավորված տարբերակն ստանալ CD կրիչի վրա կամ անձամբ լուսանկարել (ծառայությունները վճարովի են): Միակ խնդիրն այն է, որ Օսմանյան արխիվների որոշ ֆոնդեր Գյուլհանեից դեռևս Սադաբաթ չեն տեղափոխվել, և այդ հիմնավորմամբ կարող է մերժվել փաստաթղթի տրամադրումը, ինչը ժամանակավոր խնդիր է: Այլ խնդիր է, թե իրականում արխիվում ինչ փաստաթղթեր են պահվում և ինչ է ներկայացվում:

2. Գլխավոր շտաբի ռազմական պատմության և ստրատեգիական հետազոտությունների վարչության տնօրինության (ATASE [Genelkurmay Askeri Tarih ve Stratejik Etںt Ba_kanlںںı]) արխիվ: Թեև հայտարարում են, որ այս արխիվը բաց է, սակայն կարելի է համարել փակ: Այս արխիվում են գտնվում Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Օսմանյան կայսրության Ռազմական նախարարության, Ներքին գործերի նախարարության և տարբեր ռազմական կառույցների միջև տարատեսակ թեմաների վերաբերյալ գրագրություններ, փաստաթղթեր, այսինքն՝ Հայոց ցեղասպանության վերաբերյալ պահպանված կարևոր փաստաթղթերից գրեթե բոլորը պահվում են այս արխիվում:

Բիլքենթ համալսարանի դասախոս, պրոֆեսոր Օքթայ Օզելը «Ռադիքալ» թերթում կիսվում է իր փորձառությամբ[158]: Ըստ նրա՝ արխիվը գործում է Գլխավոր շտաբին կից, ուստի՝ Գլխավոր շտաբի համապատասխան գործերով զբաղվող պաշտոնյաներն են որոշում, թե որ պատմաբանը կամ հետազոտողը կարող է մուտք գործել արխիվ: Նրանք նույնիսկ վերահսկում և որոշում են, թե հետազոտողն իր ուսումնասիրության շրջանակներում ինչ նյութ կարող է ուսումնասիրել: Այսինքն՝ հետազոտողին հասանելի չեն բոլոր կատալոգները: Նրանք կարող են մերժել տվյալ հետազոտողի պատվիրած նյութն առանց հիմնարար պատճառաբանության: Եթե Օսմանյան արխիվների պայմանները համապատասխանում են միջազգային

Բայց երիտթուրքական կենտրոնական կոմիտեի՝ ցեղասպանությանն առնչվող հիմնական փաստաթղթերը գոյություն չունեն, ոչնչացվել են կամ դեռ հրապարակում չկան:

158. *Oktay Özel, Hükümetin 1915 bildirisi vesilesiyle: Arşivlerimiz gerçekten açık mı?, Radikal, 07/05/2014, http://www.radikal.com.tr/yorum/hukumetin_1915_bildirisi_vesilesiylearsivlerimiz_gercekten_acik_mi-1190637*

չափորոշիչներին, ապա այստեղ իրավիճակն այլ է: Հետազոտողն իր հետ կարող է վերցնել միայն մատիտ և թուղթ: Պատճենահանել կամ լուսանկարել չի թույլատրվում: Սահմանափակ է նաև փաստաթղթերի ուսումնասիրման աշխատաժամանակը: Այս արխիվից օգտվելու ընթացակարգի մասին ավելի մանրամասն կարելի է ծանոթանալ հետևյալ հղմամբ[159]:

...գերմանական ռազմական պատվիրակության վերջին ղեկավարը՝ գեներալ Զեքտը իր հետ Գերմանիա է տարել փաստաթղթերի մի մասը՝ կապված հայերի կոտորածների և ցեղասպանության հետ:

Ամեն դեպքում, թուրքական արխիվների ուսումնասիրումն այլևս չի հետապնդում Հայոց ցեղասպանությունն ապացուցելու նպատակ: Դրանք արդեն պետք է ուսումնասիրվեն ոչ թե ապացուցելու համար եղել է, թե չի եղել, այլ ուսումնասիրվի, թե ինչպես է եղել, ինչ է եղել, ինչու՞, ո՞վ է պատասխանատուն, որտե՞ղ, այսինքն՝ մանրամասների համար: Իսկության խնդիրը վաղուց լուծված է[160]:

Հայկական արխիվները

Արխիվների վերաբերյալ քննարկումները շեղելու նպատակով թուրքական կողմը հաճախ դնում է քննարկման հայկական արխիվների բաց կամ փակ լինելու հարցը:

Սկսենք նրանից, թե հայկական արխիվներում նրանք ինչ են փնտրում, որ ուզում են գտնել: Ինչ է կարող հետաքրքրել թուրք հետազոտողներին հայկական արխիվներում՝ Հայոց ցեղասպանության հետ կապված: Մինչև 1918 թ. Հայաստան անունով պետություն նույնիսկ չկար[161]: Այսինքն, եթե նույնիսկ մի պահ ենթադրենք, որ հայկական արխիվներում

159. *Genelkurmay ATASE başkanlığı arşivinde çalışma başvurusu, http://www.tsk.tr/9_yayınlar/9_5_genelkurmay_atase_baskanligi_arsivinde_calisma_basvurusu/calisma_basvurusu.htm*
160. *Հարցազրույց Ռ. Սաֆրասյանի հետ:*
161. *Հարցազրույց Ա. Խոսրոևայի հետ:*

նրանք գտնեն ինչ-որ փաստաթուղթ (թեև չկա), որ իբրև թե Օսմանյան կայսրության մեջ բնակվող համայն հայությունը 1914 թ. կամ 1915 թ. որոշել էր ապստամբել, ապա դա դարձյալ արդարացման հիմք չէ ցեղասպանություն իրականացնելու համար[162]:

Պետական մակարդակով հետազոտողների առջև բաց են Հայաստանի Ազգային արխիվի, Հայոց ցեղասպանության ինստիտուտ թանգարանի, Մատենադարանի, Ազգային գրադարանի արխիվային ֆոնդերն ու գրապահոցները: Այս մասին վերջերս բարձրաձայնում են նաև Թուրքիայի հետազոտողներից ու պատմաբաններից ոմանք: Հատկապես՝ Պոլսում լույս տեսնող հայկական «Ագոս» շաբաթաթերթում իրենց փորձառության ու դրական տպավորությունների մասին վերջերս կիսվել են Թունջելիի համալսարանի պատմության բաժնի վարիչ, դոկտոր դոցենտ Ջանան Բադեմը[163] և ԱՄՆ Քլարքսի համալսարանի Հոլոքոստի և ցեղասպանության ամբիոնի գիտությունների թեկնածու Ումիթ Քուրթը[164]:

...«պաշտոնական հրամանները, որոնք ներկայացվում էին որպես պաշտոնական քաղաքականության արտացոլանք, հավելվում էին գաղտնի հրահանգներով. երբեմն այդ գաղտնի հրահանգները տեղյակ էին պահում հասցեատերերին, որ պաշտոնական հրամանները պետք չէ լրջությամբ ընդունել»:

Հայաստանի ազգային արխիվը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ՝ երեք հատորով հրատարակել է ցեղասպանության վերաբերյալ բոլոր առկա փաստաթղթերն ու վկայությունները: Եռահատորը լույս է

162. *Հարցազրույց Կ. Մանոյանի հետ:*
163. *Canan Badem, Ermenistan Ulusal Arşivi Türk araştırmacılara açık, Agos, 08 Ekim 2012, http://www.agos.com.tr/haber.php?seo=ermenistan-ulusal-arsivi-turk-arastirmacilara-acik&haberId=2856*
164. *Ümit Kurt, Yerevan'da arşivler herkese açık, Agos, 30 Mayıs 2014, http://www.agos.com.tr/haber.php?seo=yerevanda-arsivler-herkese-acik&haberId=7318*

տեսել Ամատունի Վիրաբյանի և Գոհար Ավագյանի գլխավորությամբ[165], որից հետո թարգմանվել ռուսերեն, անգլերեն լեզուներով, իսկ վերջերս տեղի ունեցավ թուրքերեն թարգմանությամբ գրքի շնորհանդեսը՝ կատարված թուրք հրատարակիչ Ռ. Ջարաքոլուի կողմից: Վերջինս հնարավորություն է տալիս թուրք հետազոտողին ծանոթանալ այդ փաստաթղթերին՝ առանց Հայաստան այցելելու[166]: Դրանք 1916-17 թթ. վերաբերող՝ Անդրկովկասում, Իրանի տարածքում, Բաքվում, Հյուսիսային Կովկասում, Կոստանդնուպոլսում և այլ տեղերում հավաքված գաղթականներից անմիջապես գրի առնված նյութերն են՝ իրենց հետ տեղի ունեցածի վերաբերյալ: Դեպքերից ընդամենը մեկ տարի անց մարդիկ նկարագրում էին իրենց գյուղը, տեղահանության պատմությունը և իրենց ոդիսականն այն մասին, թե ինչպես են հայտնվել տվյալ վայրում:

...թուրքական արխիվները մաքրազտվել են բազմաթիվ անգամներ:

Վենետիկի Մխիթարյանների գրադարանի և Փարիզի Նուբարյան գրադարանի արխիվային ու գրապահոցային ֆոնդերը սպասարկում են գիտնականներին և հետազոտողներին ոչ պաշտոնական մակարդակով[167]: Թուրքիայի կողմից շատ է շահարկվում նաև Բոսթոնի դաշնակցական արխիվների փաստը: Այն կուսակցության արխիվ է, և կուսակցությունը ինքն է որոշում՝ ինչ չափով է այն բացում կամ չի բացում, և դա Հայաստանի Հանրապետության հետ կապ չունի: Բնականաբար, մեղադրել Հայաստանի Հանրապետությանը, որ որևէ ոչ պաշտոնական կառույց կամ անհատ թույլ չի տալիս օգտվել իր արխիվային հավաքածուից կամ ֆոնդից, առն-

Հայոց ցեղասպանության վերաբերյալ պահպանված կարևոր փաստաթղթերից գրեթե բոլորը պահվում են այս արխիվում:

165. *Հարցազրույց Ա. Մելքոնյանի հետ:*
166. *Հարցազրույց Ա. Մարուքյանի հետ:*
167. *Հարցազրույց Ա. Քարտաշյանի հետ:*

վազն իրականությունից կտրված լինելու արդյունք է[168]:

Ի վերջո, ՀՅԴ այդ արխիվներն էլ, ըստ էության, բաց են: Արդեն հրատարակվել է այդ արխիվների մի կարևոր մասը (մինչև 1913 թվականը), սակայն այդ հրապարակված արխիվներից թուրքական կողմը երբևէ չի օգտվել: Այսինքն, թուրքական այս թեզը ևս պարզապես խոսելու նյութ է և ոչ թե իրական ինչ-որ պատճառաբանություն[169]:

Գլխավոր շտաբի համապատասխան գործերով զբաղվող պաշտոնյաներն են որոշում, թե որ պատմաբանը կամ հետազոտողը կարող է մուտք գործել արխիվ: Նրանք նույնիսկ վերահսկում և որոշում են, թե հետազոտողն իր ուսումնասիրության շրջանակներում ինչ նյութ կարող է ուսումնասիրել:

168. *Հարցազրույց Ս. Մանուկյանի հետ:*
169. *Հարցազրույց Կ. Մանոյանի հետ:*

«ԱՐԴԱՐ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ» ԵՎ «ՀԱՄԱՏԵՂ ՑԱՎԸ»

Առաջին համաշխարհային պատերազմն սկսվեց 1914 թ. օգոստոսի 1-ին (հուլիսի 19-ին) պետությունների երկու խմբավորումների՝ Անտանտի (Ռուսաստան, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա) և Գերմանա-ավստրիական բլոկի (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Թուրքիա, որոնց 1915 թ. միացավ նաև Բուլղարիան) միջև: Անտանտին հետագայում միացան նաև Իտալիան, Ռումինիան և Ամերիկայի Միացյալ Նահանգները: Կայզերական Գերմանիան օգոստոսի 1-ին պատերազմ հայտարարեց Ռուսաստանին, օգոստոսի 3-ին՝ Ֆրանսիային, իսկ Մեծ Բրիտանիան օգոստոսի 4-ին՝ Գերմանիային: Պատերազմական գործողություններն ընդգրկեցին Եվրոպայի, Ասիայի, Աֆրիկայի և Հեռավոր Արևելքի տարածքները:

Հետազոտողը իր հետ կարող է վերցնել միայն մատիտ և թուղթ: Պատժենահանել կամ լուսանկարել չի թույլատրվում: Սահմանափակ է նաև փաստաթղթերի ուսումնասիրման աշխատաժամանակը:

Առաջին համաշխարհային պատերազմում մարտական ու խաղաղ բնակչության շրջանում զոհերի և վիրավորների ընդհանուր թիվը կազմեց 37 մլն մարդ: 16 մլն մահ և 20 մլն վիրավոր տված բախումը մինչ այդ տեղի ունեցած պատերազմներից ամենամահաբերն էր: 16 մլն զոհերից մոտ 7 մլն-ը խաղաղ բնակչությունից էր: Անտանտը կորցրել է մոտ 6 մլն զինվոր, իսկ Քառյակ դաշինքը՝ մոտ 4 մլն:

Բնական է, որ Առաջին աշխարհամարտի զոհերի թիվը հստակ ներկայացնելը բավականին բարդ է, և տարբեր հեղինակներ բերում են տարբեր թվեր: Հաշվարկը բարդանում է նրանով, որ պատերազմին զուգահեռ տեղի են ունեցել նաև այլ ողբերգական իրադարձություններ, և հեղինակների մի մասը դրանք դասում է Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքների շարքին, մյուս մասը՝ ոչ: Այդ

իրադարձություններից են քաղաքացիական պատերազմը Ռուսաստանում կամ իսպանական գրիպի համաճարակը: Ամեն դեպքում կորուստների ծավալներն այնքան մեծ են, որ միջինացված թվերը նույնիսկ տպավորիչ են:

Օսմանյան կայսրությունն Առաջին համաշխարհային պատերազմ մտավ, երբ դեռ թարմ էին Առաջին Բալկանյան պատերազմում (1912-1913 թթ.) պարտության արդյունքում կրած կորուստները: Այն շոկային էր թուրքերի համար ոչ միայն կորցրած տարածքների և իրենց հպատակ ազգերից պարտություն կրելու, այլ նաև Բալկաններից դեպի Օսմանյան կայսրություն ներգաղթող մահմեդական փախստականների պատճառով: Նրանց պատմությունները Բալկաններում իրականացված կոտորածների մասին, նրանց ճարահատյալ վիճակն ու դառը ճակատագիրը չէին կարող չառաջացնել մարդկային խղճահարություն այն խաղաղ բնակչության նկատմամբ, որին սպանել են, թալանել ու թողել անտուն: Օսմանյան կայսրությունն ինքը ֆինանսատնտեսական լուրջ հոգեվարքի մեջ էր ու ի վիճակի չէր լիարժեք լուծում տալ բալկանյան փախստականների խնդիրներին: Առաջին համաշխարհային պատերազմն էլ ավելի շատ զոհերի պատճառ դարձավ: Ըստ տարբեր աղբյուրների՝ Օսմանյան բանակի զոհերի թիվը տատանվում է 325-450 հազարի շրջանակներում: Միայն Դարդանելի՝ Գալիպոլիի ճակատամարտում, Օսմանյան բանակն ունեցավ 86 հազարից ավելի զոհ, իսկ Սարիղամիշի ճակատամարտում օսմանյան զոհերի թիվը տատանվում է մինչև 90 հազարի շրջա-

...թուրքական արխիվների ուսումնասիրումը այլևս չի հետապնդում Հայոց ցեղասպանությունն ապացուցելու նպատակ: Դրանք արդեն պետք է ուսումնասիրվեն ոչ թե ապացուցելու համար եղել է, թե չի եղել, այլ ուսումնասիրվի, թե ինչպես է եղել, ինչ է եղել, ինչու՞, ով է պատասխանատուն, որտեղ, այսինքն՝ մանրամասների համար:

նակներում[170]: Սրան անհրաժեշտ է գումարել պատերազմում պարտված Օսմանյան կայսրության ազգաբնակչության տարած զրկանքներն ու կորուստները: Երկրի տարբեր շրջաններում սով էր, կային համաճարակներ, իսկ Անտանտի զորքերը գրեթե բոլոր ճակատներում հաղթանակներ էին տանում: Թե՛ Ուիլյամ Էքհարդը, թե՛ Սփենսեր Թաքերը[171] նշում են, որ Օսմանյան կայսրությունում Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակահատվածում երկրում մահացել է մոտ մեկ միլիոն քաղաքացիական անձ (չհաշված օսմանահպատակ մեկ միլիոնից ավելի հայ զոհերը):

Եթե նույնիսկ մի պահ ենթադրենք, որ հայկական արխիվներում նրանք գտնեն ինչ-որ փաստաթուղթ (թեև չկա), որ իբրև թե Օսմանյան կայսրության մեջ բնակվող համայն հայությունը 1914թ. կամ 1915 թ. որոշել էր ապստամբել, ապա դա դարձյալ արդարացման հիմք չէ ցեղասպանություն իրականացնելու համար:

Թերևս, սա Նկատի ունենալով է Թուրքիայի ներկայիս վարչապետ Ահմեդ Դավութօղլուն գրում, թե. «Հայերի համար 1915 թ. տեղահանության տարի էր, որի ընթացքում մեծ ողբերգություններ տեղի ունեցան: 1915 թ. նախորդող ու հաջորդող տարիները Անատոլիայում թուրքերի համար էլ վիթխարի ողբերգության ժամանակներ էին: Այդ ժամանակ էր, երբ թուրքերը կենաց-մահու պատերազմ էին վարում Բալկանյան պատերազմներում, Դարդանելում ու Անկախության պատերազմում: Ըստ էության, դա «ընդհանուր ցավի» ժամանակ էր[172]»:

Հարգելով Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում ու դրա արդյունքում կյանքը կորցրած բոլոր ազգերի և բոլոր մարդկանց հիշատակը, ցավելով երկիրն Առաջին աշխարհամարտ ներքաշած ապաշնորհ երիտթուրք գործիչների պատճառով մահմեդական խաղաղ բնակչության անդառնալի կորուստը և «մանավորապես» ապրումակցելով այդ ժամանակաշրջանի իրար հաջորդող պատերազմների ժամանակ մահացած թուրք ազգի զավակների վշտին, անհրաժեշտ ենք համարում կատարել մի էական պարզաբանում:

Հայկական ու թուրքական զոհերը համեմատելի չեն այնքան, որքան համեմատելի չեն հրեական Հոլոքոստի զոհերը՝ զոհված ֆաշիստների և կամ Երկրորդ համաշխարհային պատերազմում սովահարված գերմանացիների զոհերի հետ:

Առաջին համաշխարհային պատերազմում մարտական ու խաղաղ բնակչության շրջանում զոհերի և վիրավորների ընդհանուր թիվը կազմեց 37 մլն մարդ:

Մի բան է, երբ զինվորը զենքը ձեռքին կռվում և զոհվում է իր պետությունը կամ իր երկրի սահմանները պաշտպանելով, այլ բան է, երբ խաղաղ բնակչությունը զանգվածաբար ոչնչանում է պատերազմի քողի տակ[173]:

Ցանկացած պատերազմ իր հետ բերում է զոհեր, և պետությունը մտնելով պատերազմի մեջ պետք է պատրաստ լինի, որ ունենալու է զոհեր իր և՛ քաղաքացիական, և՛ ռազմական, և՛ զինվորական բնակչության մեջ: Այս պարագայում թուրքական զոհերը կարող են ընդունվել որպես պատերազմական զոհեր, իսկ հայ բնակչության նկատմամբ իրականացվածը պատերազմական զոհերի մեջ չի կարող տեղավորվել, քանի որ այն նպատակաուղղված մարդկանց ոչնչացում է. և՛ տեղահանություն, և՛ սպանություններ, որոնք ուղղված էին այդ մարդկանց դեմ՝ որպես կոնկրետ կրոնի կամ ազգության ներկայացուցիչների: Այսինքն՝ այս առու-

170. *Ավելի մանրամասն տես՝ Hew Strachan, The First World War, Volume I: To Arms, Oxford University Press, 2003, 1248 Pages; Spencer C. Tucker, The Great War, 1914-1918, Indiana University Press, 1998, 296 pages.*

171. *Ավելի մանրամասն տես՝ Spencer Tucker, European Powers in the First World War: An Encyclopedia, Routledge, 1999, 814 pages; Eckhardt, William, 'Three page table", In Sivard, Ruth Leger, World Military and Social Expenditures 1987-88 (12th ed.).*

172. *Ahmet Davutoğlu, Turkish–Armenian Relations: Is a 'Just Memory" Possible?, Turkish Policy Quarterly, Spring 2014, p. 28.*

173. *Հարցազրույց Ա. Մարուքյանի հետ:*

մով խոսվում է բոլորովին տարբեր բովանդակության երևույթների մասին՝ սպանություն ազգային, կրոնական պատկանելիության համար և պատերազմական զոհեր, որոնք և՛ իրավաբանական, և՛ պատմական-քաղաքական առումով լրիվ տարբեր երևույթներ են[174]:

Հայ հպատակներից զատ՝ Օսմանյան կայսրության կրած առավել քան մեկ միլիոն մարդկային զոհերը կարելի է բաժանել երեք կատեգորիայի:

Առաջինը՝ դրանք թուրքական կողմի զոհերը կամ պարտված բանակի սպանված զինվորներն են, որի մեղավորը երկիրը պատերազմ ներքաշած ղեկավարներն ու ապաշնորհ գեներալներն էին: Ինչպես նշվել է, Օսմանյան բանակի զոհերի թիվը տատանվում է 325-450 հազար մարդ: Այստեղ զոհվածները (ընդ որում՝ հնարավոր չէ պնդել, որ բոլորը 100 տոկոսով թուրքեր են) եղել են օսմանյան բանակ զորակոչված անձինք, ովքեր կռվել են ռուսների և բրիտանացիների դեմ, պաշտպանել են իրենց պետության տարածքը: Այս առումով նրանք հակառակորդի հետ գտնվել են հավասար վիճակում և, նույն հաջողությամբ, իրենք էլ սպանել են ռուս ու բրիտանացի զինվորներին և այլն:

Միայն Դարդանելի՝ Գալիպոլիի ճակատամարտում, Օսմանյան բանակն ունեցավ 86 հազարից ավելի զոհ, իսկ Սարիղամիշի ճակատամարտում օսմանյան զոհերի թիվը տատանվում է մինչև 90 հազարի շրջանակներում:

Անշուշտ, արդար ու ճիշտ չէ նույն հարթության վրա դնել զինված թուրքերին, որոնք զոհվել են պատերազմական գործողությունների ժամանակ և սպանդի ենթարկված խաղաղ հայ բնակչությանը:

Ամեն մի պարտված զորավար ձգտում է արդարացնել իր պարտությունը՝ փնտրելով քավության նոխազներ: Ժամանակին Էնվերն էլ, որպես Սարիղամիշում խայտառակ պարտության հիմնական պատճառ, բերում էր հայերին:

174. *Հարցազրույց Ս.Մանուկյանի հետ:*

Նա մոռացության էր տալիս այն փաստը, որ 1914 թ. դեկտեմբերի 9-ից մինչև 1915 թ. հունվարի 5-ը է տեղի ունեցած այդ արյունալի ճակատամարտի արդյունքում՝ մոտ 80 000 զոհված օսմանցի զինվորներից ավելի քան 20 000-ը պարզապես ցրտահարվել են[175]:

Գործողությունից առաջ Էնվեր փաշան շրջել է ջոկատներով և սոված ու թեթև հագնված զինվորներին հուսադրող խոսքեր հղել, ասելով՝ «Զինվորներ, հանդիպել եմ բոլորիդ: Տեսել եմ, որ ձեր ոտքերը բոկոտն են, իսկ ուսներիդ չկա շինել: Սակայն ձեր դիմաց կանգնած թշնամին վախենում է ձեզանից: Շատ մոտ ժամանակներս դուք հարձակվելու եք ու մտնեք Կովկաս: Այնտեղ կգտնեք բազում սնունդ և հարստություն: Ողջ մուսուլման աշխարհը հույսով հետևում է ձեր վերջին ճիգերին[176]»:

Հայկական ու թուրքական զոհերը համեմատելի չեն այնքան, որքան համեմատելի չեն հրեական Հոլոքոստի զոհերը՝ զոհված ֆաշիստների և կամ երկրորդ համաշխարհային պատերազմում սովահարված գերմանացիների զոհերի հետ:

Բնականաբար, Էնվերը պարտության ողջ մեղքը գցեց հայերի ենթադրյալ դավաճանության վրա, ինչն անշուշտ, շատ հարմար էր թափ առնող ցեղասպանության իրավիճակում: Թուրք պատմաբաններն այդպես էլ չուսումնասիրեցին Սարիղամիշի ճակատամարտի մանրամասները՝ վեր հանելու համար թուրք զորավարի մարտավարական սխալները: Օրինակ, երբ հետախուզության բացակայության պատճառով թուրքական 31-րդ ու 32-րդ հետևակային դիվիզիաները վատ տեսանելիության պայմաններում սկսում էին կրակել իրար վրա՝ փոխադարձաբար ենթադրելով, որ դիմացը ռուսական զորքեր են[177]: Թուրք պատմաբանները

175. *Հարցազրույց Ա.Մելքոնյանի հետ:*
176. *Корсун Н., Сарыкамышская операция. – М.: Воениздат НКО СССР, 1937; (http://militera.lib.ru/h/korsun_n1/08.html)*
177. *Корсун Н., Նույն տեղը: «Ինչպես նշում է թուրքական 9-րդ կորպուսի ղեկավարն իր հուշերում՝ «Երբ հասկացանք սխալը, մարդիկ սկսեցին լաց լինել: Սրտաճմլիկ պատկեր էր: Մենք ուղիղ*

գիտակցաբար կոծկում են այն փաստը, որ տանջակ հազարավոր թուրք զինվորներ պարզապես մահացել են ցրտահարումից, այդպես էլ մարտի չմտնելով ռուսական բանակի հետ, քանի որ Էնվեր փաշան, անտեսելով գերմանացի խորհրդականների պնդումները, ձնամրրիկի պայմաններում առաջ էր մղում իր զինվորներին: «Անոթի, առանց տաք ձմեռային վերնազգեստի ու պիտանի կոշիկների, զինվորները Արսիան լեռնանցն անցնելիս ընկան ձնամրրիկի մեջ, որն ուղեկցվում էր շատ ցածր ջերմաստիճանով... Զինվորները կորցրեցին կարգապահությունը, խախտեցին շարքերը, բարդ վերելքների ժամանակ պառկում էին հանգստանալու, ծածկվում էին ձյան շերտով, սառչում էին... Շատ զինվորներ թողնում էին ճանապարհը, հեռանում շարքից ու փորձում վատ եղանակից թաքնվել ամառային անասնագոմերում: Ալ-լա-իկպար զանգվածի լանջերին այդ օրը (դեկտեմբերի 13-ին) թուրքերը տարան ավելի քան 10 հազար զոհ՝ ցրտահարությունից»[178]:

Ամեն մի պարտված զորավար ձգտում է արդարացնել իր պարտությունը՝ փնտրելով քավության նոխազներ:

Սրանք պարզապես մի քանի դրվագ են օսմանյան զորքերի Առաջին աշխարհամարտին խայտառակ մասնակցության: Սակայն թուրք պատմաբանները նախընտրում են որպես քավության նոխազ մատնանշել հայերին: Ավելին՝ գոյները խտացնելու համար թուրք պատմաբանները նշում են, որ այդ օրերին ռուսական բանակի կազմում կռվում էին բազմաթիվ հայեր՝ նշելով Անդրանիկի, Թովմաս Նազարբեկովի անունները:

Հայերը, և մասնավորապես, հայկական կամավորական հետախուզական ստորաբաժանումները, իրոք աչքի են ընկել 1914 թ. դեկտեմբեր–1915 թ. հունվար ամիսներին՝ Սարիղամիշի գործողության ժամանակ: Հատկապես աչքի են ընկել Անդրանիկի 1-ին և Քեռու 4-րդ խմբերի հետախույզները: 1-ին խմբի հետախույզները 1914 թ. նոյեմբեր–դեկտեմբեր ամիսներին կարողացել են կարևոր տեղեկություններ հայթայթել թուրք-քրդական ուժերի տեղակայման և սպառազինության մասին: Սարիղամիշյան ճակատամարտի սկզբնական փուլում Քեռու հետախույզներն առաջիններից էին, որ զեկուցեցին թուրքական գերակշիռ ուժերի հայտնվելու մասին: Ստացված տեղեկությունը Քեռին շտապում է հայտնել Կովկասյան 1-ին բանակային կորպուսի հրամանատար, գեներալ Գ. Է. Բերխմանին[179]: Սակայն նա անուշադրության է մատնում այդ կարևոր տեղեկությունը, գտնելով, որ ռելիեֆի և բնակլիմայական նման պայմաններում (ուժեղ ձյան և ձնամրրիկի[180]) հակառակորդի հարձակողական լայնածավալ գործողություն ծավալելը հավասարազոր է ինքնասպանության: Ռուս գեներալի՝ ձմռան պայմաններում պատերազմ վարելու փորձն իրեն չի դավաճանում, Սարիղամիշը թուրքերի համար իրոք նման էր ինքնասպանության:

...մոտ 80 000 զոհված օսմանցի զինվորներից ավելի քան 20 000-ը պարզապես ցրտահարվել են:

Թուրքերը կրկին անարդար են պատմության առջև՝ մոռացության տալով այն փաստը, որ Ռուսական կայսրությունում ապրում էր հայկական ոչ պակաս ստվար զանգված, և հայերը, բնականաբար, զորակոչված էին ռուսական բանակ: Ռուսական կայսրության 2 միլիոն 54 հազարանոց հայ ազգաբնակչությունը պատերազմի տարիներին ռուսական բանակին տվեց ավելի քան 250 հազար զինվոր[181]: Սարի-

չորս ժամ մարտ էինք վարում 32-րդ դիվիզիայի դեմ»: Թուրքական կողմը փարավ նվազագույնը՝ 2000 հոգի սպանված և վիրավոր:

178. Корсун Н., Նույն տեղում:

179. Սահակյան, Ռուբեն (2011) Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և ընթացքում ռուս-թուրքական ռազմաճակատում հետախուզական ծառայությունների գործունեության պատմությունից (1914–1917 թթ.). Պատմա-բանասիրական հանդես, № 3, էջ 112-113:

180. Корсун Н., Նույն տեղում:

181. Ղորղանյան Գ., Հայերի մասնակցությունը առաջին համաշխար-

ղամիշում, Վանում և այլուր աչքի ընկած Անդրանիկը, Նազարբեկովը և շատ այլոք Օսմանյան կայսրության բանակի դավաճան դասալիքներ չէին, այլ ռուսական բանակի զինվորներ էին, ուստի նրանց մեղադրելն ընդամենը մանիպուլյացիա է:

Երկրորդը՝ դա նույն մանիպուլյացիայի տրամաբանական շարունակությունն է: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին զոհված մահմեդական բնակչությունը ներկայացվում է որպես հայերի զոհ: Այստեղ հիմնականում կրկին առաջ է բերվում ռուսական բանակի առաջխաղացման ժամանակ տուժած թուրք և քուրդ ազգաբնակչությունն ու կրկին օգտագործվում են Անդրանիկի և Նազարբեկովի անունները: Կարիք չկա ևս մեկ անգամ նշել, որ Օսմանյան կայսրության արևմտյան մասում՝ Իզմիրում, Էսքիշեհիրում, Բուրսայում բնակվող հայերը բնավ մեղավոր չէին թե՛ ռուսական բանակի առաջխաղացման, թե՛ ռուսական բանակի զինվոր ու ռուսական կայսրության քաղաքացի հանդիսացող Անդրանիկի, Նազարբեկովի կամ այլոց գործողությունների համար: Նույնիսկ ֆաշիստական Գերմանիայում, ոչ մեկի մտքով անգամ չի անցել արդարացնել հրեական Հոլոքոստն այն փաստով, որ խորհրդային կամ բրիտանական զորքերում ծառայել են հրեաներ, կամ որ Արևելյան Եվրոպայի տարածքում գործել են հրեական պարտիզանական ջոկատներ: Ուստի, ռուսական բանակի կողմից սպանված մուսուլման բնակչության համար թուրք պատմաբանները

...հետախուզության բացակայության պատճառով թուրքական 31-րդ ու 32-րդ հետևակային դիվիզիաները, վատ տեսանելիության պայմաններում, սկսում էին կրակել իրար վրա՝ փոխադարձաբար ենթադրելով, որ դիմացը ռուսական զորքեր են

հային պատերազմին Կովկասյան ռազմաճակատի վրա 1914-1917 թթ., Հայրենիք, Բոսթոն, 1927, №2, էջ 12:

ցանկության դեպքում կարող են մեղադրել Ցարական Ռուսաստանին, բայց ոչ հայերին, և նույնիսկ այդ դեպքում դա չի կարող լինել Հայոց ցեղասպանության իրականացման արդարացում:

Անշուշտ, թուրք զինվորների անկանոն հրոսակախմբերի դեմ պայքարել են նաև հայկական որոշ բնակավայրերի բնակիչներ, դիմադրել ցեղասպանական ծրագրերի իրագործմանը: Ի դժբախտություն հայերի, սակայն, նման ինքնապաշտպանական գործողությունների թվաքանակը շատ քիչ էր: Այդ հսկայական տարածքում ընդամենը 10 փոքր հատուկենտ դիմադրությունը, կաթիլ է ծովի մեջ: Հստակ ժամանակագրության առումով երևում է, որ դիմադրություններն սկսվել են այն ժամանակ, երբ արդեն սկսվել են հայերի կոտորածները և սպանությունները[182]: Ցեղասպանություն՝ չի նշանակում իրավիճակ, երբ հանցագործը կոտորում է բոլորին և չկա դիմադրություն: Որևէ մեկը չի կարող ասել, որ եթե էթնիկ խումբը պաշտպանվում է, դիմադրություն է ցույց տալիս, ապա նա այլևս չի կարող դիտարկվել որպես ցեղասպանության զոհ: Նույնիսկ Հոլոքոստի պարագայում, համակենտրոնացման ճամբարներում, գետոներում, և այն հատվածներում, որտեղ հրեաների տեսակարար կշիռը մեծանում էր, նրանք ապստամբում էին, փորձում էին ինքնապաշտպանություն կազմակերպել: Ամենահայտնին Վարշավայի գետոյում տեղի ունեցած ապստամբությունն էր, որը խորտակվեց արյան մեջ, բայց այնուհանդերձ՝ դա ևս վկայությունն է այն բանի, որ այդ ցեղասպանության զոհը փորձում է ապստամբել իր ինքնապաշտպանությունն իրականացնելու համար[183]:

Զինվորները կորցրեցին կարգապահությունը, խախտեցին շարքերը, բարդ վերելքների ժամանակ պառկում էին հանգստանալու, ծածկվում էին ձյան շերտով, սառչում էին...

182. *Հարցազրույց Ս. Մանուկյանի հետ:*
183. *Հարցազրույց Վ. Վարդանյանի հետ:*

Անշուշտ, եղել են նաև վրիժառության դեպքեր, երբ մահվան քարավաններից փախած կամ իրենց հարազատների սպանության մասին տեղեկացված հայերը վրեժխնդիր են եղել իրենց հարևաններից, ովքեր շատ հաճախ օսմանցի զինվորների հետ հավասար մասնակցել են հայկական կոտորածներին:

...գեներալի՝ ճմռան պայմաններում պատերազմ վարելու փորձն իրեն չի դավաճանում, Սարիղամիշը թուրքերի համար իրոք նման էր ինքնասպանության:

Կա տարբերություն Հայոց ցեղասպանության և հրեաների Հոլոքոստի միջև: Ինչպես իրականացվեց հրեաների ցեղասպանությունը: Նախ՝ հավաքում էին, բնակեցնում գետոներում, ապա որոշում ոչնչացնել: Հրեաներին հավաքում էին, դնում գնացքներ, տանում համակենտրոնացման ճամբարներ, որտեղ էլ սպանում էին, վառում կամ խեղդում: Այսինքն՝ առավել չափով աշխատում էին, որ երկրի բնակչությունը դա չիմանա: Չնայած, իհարկե, իմացվում էր, բայց բնակչությունն ուղղակի կերպով դերակատարում չէր ունենում: Այդպես չէր Օսմանյան Թուրքիայում: Առաջին աշխարհամարտին Բարձր Դռան կողմից հայտարարվեց ջիհադ (սրբազան պատերազմ) քրիստոնյաների դեմ, ինչից հետո կառավարությունից հատուկ խմբեր ուղարկվեցին վիլայեթներ՝ ժողովրդին գրգռելու քրիստոնյաների դեմ[184]: Բալկանյան պատերազմում զրկանքների վրեժխնդրությունը, քրիստոնյաների կանանց, փողերին, հողերին տիրանալու ցանկությունը ստացավ կառավարության ու կրոնի օրինանքը: Մահմեդական ժողովուրդը մասնակցեց հայերի կոտորածներին, հարևանը հարևանին սպանում էր, որպեսզի տիրանա նրա հարստությանը, նրա ունեցվածքին, կնոջը[185]: Բնական է, որ որոշ վայրերում հայերը դիմել են թե՛ ինքնապաշտպանության, թե՛

184. *Հարցազրույց Ռ.Սաֆրաստյանի հետ:*
185. *Հարցազրույց Ռ.Սաֆրաստյանի հետ:*

վրեժխնդրության, սակայն մեկ անգամ ևս պետք է շեշտել, որ դիմադրություն, ինքնապաշտպանություն, վրեժխնդրություն բառերը ենթադրում են դրանց նախորդող՝ թուրքերի կողմից իրականացված գործողություն, ուստի դրանք չեն կարող դիտարկվել որպես պատճառ:

Երրորդը Օսմանյան կայսրության ոչ հայ զոհերը՝ ասորիներն ու հույներն են, որոնք նույն Առաջին աշխարհամարտի տարիներին ենթարկվել են ցեղասպանության օսմանյան թուրքերի կողմից: Ըստ տարբեր աղբյուրների՝ Առաջին համաշխարհային պատերազմի և դրան հաջորդած տարիներին թուրքերի կողմից իրականացված ասորիների ցեղասպանության զոհերի թիվը հասնում է 500-750 հազարի: Այս ժողովրդի հանդեպ երիտթուրքերի վարած ցեղասպան քաղաքականությունը նույնպես նախօրոք ծրագրավորած, կազմակերպած և նպատակային ոճրագործություն էր, ինչը վկայում են բացահայտված՝ ինչպես օսմանյան բարձրաստիճան սպաների խոստովանությունները, այնպես էլ մեծ տերությունների դիվանագետների, օտարազգի միսիոներների, տվյալ ժամանակի մամուլի, արխիվային փաստաթղթերի, և վերջապես, ականատեսների վկայությունները[186]: Իսկ 1914-1923 թթ. Պոնտոսում հույն ժողովրդի նկատմամբ իրականացված քաղաքականության հետևանքով այս տարածքը հիմնականում «մաքրվեց» հույն բնակչությունից: Երիտթուրքերի և նրանց հաջորդած քեմալականների քաղաքականությանը զոհ գնաց ավելի քան 350 000 հույն[187]:

Ռուսական կայսրության 2 միլիոն 54 հազարանոց հայ ազգաբնակչությունը պատերազմի տարիներին ռուսական բանակին տվեց ավելի քան 250 հազար զինվոր:

186. *Անահիտ Խոսրոևա, Ասորիների ցեղասպանությունն Օսմանյան Թուրքիայում և հարակից թյուրքաբնակ վայրերում (XIX դարի վերջ - XX դարի առաջին քառորդ), Երևան, 2004:*
187. *Ավելի մանրամասն տես՝ Photiades K., The Annihilation of the Greeks in Pontus by the Turks: Tubingen: Union of the fighters for the Liberation of the Greek Lands seized by Turkey, 1987, 38 p.; կամ Գ.Վարդա-*

Ասորիների և հույների հանդեպ թուրքերի կողմից վարած կոտորածների քաղաքականությունը միջազգային իրավունքի չափանիշներով, միանշանակ, որակվում է որպես ցեղասպանություն, ինչն էլ ևս մեկ անգամ ապացուցում է, որ Օսմանյան Թուրքիան համարվում է ցեղասպան պետություն[188]:

Ամփոփելով՝ պետք է ընդունել, որ մարդկային ամեն մի կյանք թանկ է և Օսմանյան կայսրության 1915-1923 թթ. ժամանակահատվածը գնահատելիս: Անկասկած, որպես Օսմանյան կայսրության ժառանգորդ՝ պետք է ցավակցել Թուրքիայի Հանրապետությանը, թե ռազմի դաշտում ընկած զինվորների (ապաշնորհ գեներալների պատճառով) և թե պատերազմի հետևանքով սպանված խաղաղ բնակչության համար: Պետք է տարբերակել մարդկանց, ովքեր դարձել են ցեղասպանության զոհ և մարդկանց, ովքեր դարձել են ռազմական գործողությունների զոհ[189]: Անզեն հայ ժողովուրդը, միայն կրոնական ու ազգային պատկանելիության պատճառով, կորցրեց իր ազգաբնակչության մոտ 60 տոկոսը[190]: Եվ անարդար է այստեղ դնել հավասարության նշան:

Նույնիսկ ֆաշիստական Գերմանիայում ոչ մեկի մտքով անգամ չի անցել արդարացնել հրեական Հոլոքոստն այն փաստով, որ խորհրդային կամ բրիտանական զորքերում ծառայել են հրեաներ, կամ որ Արևելյան Եվրոպայի տարածքում գործել են հրեական պարտիզանական ջոկատներ:

Խոսելով արդար հիշողությունից՝ պետք է վերացնել տաբուները փակ թեմաների նկատմամբ: Մինչև հայերի հետ

նյան, «Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և Փոքրասիական աղետը (1914-1923 թթ.)», Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան, 2012, 196 էջ:

188. *Anahit Khosroeva, "The Assyrian Genocide in the Ottoman Empire and Adjacent Territories," (The Armenian Genocide: Cultural and Ethical Legacies, Ed. by Richard Hovannisian, New Brunswick, New Jersey, Transaction Publishers)*
189. *Հարցազրույց Վ.Վարդանյանի հետ:*
190. *Հարցազրույց Ռ.Սաֆրաստյանի հետ:*

երկխոսելը, առաջին բանը, որ պետք է արվի Թուրքիայում՝ հասարակության մեջ Հայոց Ցեղասպանության եղելությունը բաց կերպով քննարկելն է: Երբ Թուրքիայի ղեկավարները կարողանան հասարակության մեջ այս թեման դարձնել բաց քննարկման առարկա, և դրա համար մարդիկ չձերբակալվեն, չաշխատի 301 հոդվածը և այլն, այդ ժամանակ էլ նոր կարելի է խոսել «արդար հիշողության» կամ ընդհանուր հիշողության ձևավորման մասին: Մի պետություն, որի բնակչության 70 տոկոսը թեմային հաղորդակից չէ, չգիտե, թե դա ինչ է, չի կարող խոսել «արդար հիշողությունից»: Եթե թեման փակ է, այդ տարիների մասին որևէ նյութ դասագրքերում չկա, դպրոցում չեն անցնում, այդ տարիները և երևույթն ընդհանրապես մոռացված են ապա նման հասարակությունը ոչ միայն արդար հիշողություն, այլ ընդհանրապես հիշողություն չի կարող ձևավորել:

Մահմեդական ժողովուրդը մասնակցեց հայերի կոտորածներին, հարևանը հարևանին սպանում էր, որպեսզի տիրանա նրա հարստությանը, նրա ունեցվածքին, կնոջը:

Իհարկե, պատճառը նաև քեմալական վարչակարգի կամ տասնյակ տարիներով շարունակվող ուղեղների լվացման քաղաքականությունն ու պատմության կոնստրուկտումն է: Այսինքն՝ թուրքական հասարակությունն ընկալում է ոչ թե այն պատմությունը, որն իրականում գոյություն է ունեցել, այլ պատմությունը, որն իր համար հատուկ ստեղծվել և ձևավորվել է իր երկրի վարչակազմի թելադրանքով:

Այդ պայմաններում ոչ մի «արդար հիշողության» մասին խոսել չի կարելի[191]:

191. *Հարցազրույց Ս. Մանուկյանի հետ:*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Փորձագիտական հարցազրույցներ

Թաթոյան, Ռոբերտ, ՀՀ ԳԱԱ Հայոց Ցեղասպանության թանգարան ինստիտուտի աշխատակից

Խոսրոևա, Անահիտ, պ.գ.թ., ԱՄՆ Չիկագոյի համալսարանի դասախոս; ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի աշխատակից

Մանոյան, Կիրո, ՀՅԴ Հայ դատի գրասենյակի ղեկավար

Մանուկյան, Սուրեն, պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Հայոց Ցեղասպանության թանգարան ինստիտուտի փոխտնօրեն

Մարուքյան, Արմեն, պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Հայոց ցեղասպանության ուսումնասիրման բաժնի ղեկավար

Մելքոնյան, Աշոտ, պ.գ.դ., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն

Սաֆրաստյան, Ռուբեն, պ.գ.դ., ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն

Վարդանյան, Վլադիմիր, ի.գ.թ., ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակազմի միջազգային պայմանագրերի բաժնի վարիչ

Քարտաշյան, Անահիտ, Սանկտ Պետերբուրգի համալսարանի արևելագիտության ֆակուլտետի ասպիրանտ

Մենագրություններ

Անումյան, Մելինե, «Ճանաչում և դատապարտում. երիտթուրքերի դատավարությունները (1919-1921 թթ. և 1926 թ.)», Երևան, 2013:

Անումյան, Մելինե, Երիտթուրքերի 1919-1921 թթ. դատավարությունների վավերագրերը ըստ օսմանյան մամուլի, Երևան, 2011, էջ 64:

Անտոնեան, Արամ, Մեծ ոճիրը, Պօսթըն, 1921

Լեո. Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915,

Խոսրոևա, Անահիտ, Ասորիների ցեղասպանությունն Օսմանյան Թուրքիայում և հարակից թյուրքաբնակ վայրերում (XIX դարի վերջ - XX դարի առաջին քառորդ), Երևան, 2004.

Սաֆրաստյան, Ռուբեն, Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Եր., 2009 թ., 246 էջ:

Վարդանյան, Գևորգ, «Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և Փոքրասիական աղետը (1914-1923 թթ.)», Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան, 2012, 196 էջ

Օտեան, Երուանդ, Անիծեալ տարիներ, 1914-1919 անձնական յիշատակներ, Թեհրան, 2010,

Akçam, Taner, İnsan hakları ve Ermeni sorunu. İttihat ve Terakki'den Kurtuluş savaıına, 2. baskı, İstanbul, 2002

Arslan, Hüseyin, 16. yy. Osmanlı Toplumunda Yönetim, Nüfus, İskân, Göç ve Sürgün, İstanbul, Kaknüs Yayınları, 2001

Yarman, Arsen, Ermeni Etıbba Cemiyeti 1912-1922 (Osmanlı'da Tıptan Sıyasete Bir Kurum), İstanbul, 2014, 488 s.;

Brubaker, Rogers, Nationalism Reframed: Nationhood and the National Question in the New Europe, Cambridge University Press, 1996, 202 pages

Clogg, Richard, A Concise History of Greece, Cambridge University Press, 2002

Dadrian, Vahakn, German Responsibility in the Armenian Genocide, Watertown, 1996

Daniels, Roger, Prisoners Without Trial: Japanese Americans in World War II, Farrar, Straus and Giroux, 2004, 162 p.;

Gutman, Israel, Resistance: The Warsaw Ghetto Uprising, Mariner books, 1998,

Kevorkian R., Paboudjian P.B., Les Armeniens dans l'Empire ottoman a la veille du Genocide, Paris, ARHIS, 1992,

Morgenthau, Henry, Ambassador Morgenthau's Story, New York, 1918, p. 297

Ng. Wendy L., Japanese American Internment During World War II: A History and Reference Guide, Westport, 2002, 209p.;

Özkan, Behlül, From the Abode of Islam to the Turkish Vatan: The Making of a National Homeland in Turkey, Yale, 2012

Photiades K., The Annihilation of the Greeks in Pontus by the Turks: Tübingen: Union of the fighters for the Liberation of the Greek Lands seized by Turkey, 1987, 38 p.;

Reid, James J., Crisis of the Ottoman Empire: Prelude to Collapse 1839-1878, Franz Steiner Verlag, 2000

Sarafyan, Ara, Talaat Pasha's Report on the Armenian Genocide, Gomidas Institute, London, 2011

Sivard, Ruth Leger, World Military and Social Expenditures 1987-88 (12th ed.)

Strachan, Hew, The First World War, Volume I: To Arms, Oxford University Press, 2003, 1248 Pages;

Tucker, Spencer, European Powers in the First World War: An Encyclopedia, Routledge, 1999, 814 pages;

Tucker, Spencer, The Great War, 1914-1918, Indiana University Press, 1998, 296 pages

Корсун, Н. Сарыкамышская операция. – М.: Воениздат НКО СССР, 1937;

Գիտական հոդվածներ կամ գրքի գլուխներ

Անումյան, Մելինե, Դեր Զորի կառավարիչ Զեքի բեյի մահվան դատավճիռը (1920 թ.), http://akunq.net/am/?p=9125

Ավագյան, Արսեն, Չերքեզական ջոկատների մասնակցությունը 1915 թ. հայերի ցեղասպանությանը, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», N 4, Երևան 2001, էջ 32-33

Խառատյան, Ալբերտ (2009) Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XVIII դարի սկիզբ – 1923 թ.). Պատմա-բանասիրական հանդես, № 2-3 . էջ. 36-37

Հատիկյան, Հակոբ, Արևմտահայության հեղափոխական կազմակերպությունների պայքարը սուլթանական գաղտնի ծառայությունների գործունեության պայմաններում, Տարածաշրջանային խնդիրներ, 4, 2014,

Ղորղանյան Գ., Հայերի մասնակցությունը առաջին համաշխարհային պատերազմին Կովկասյան ռազմաճակատի վրա 1914-1917 թթ., Հայրենիք, Բոսթոն, 1927, №2, էջ 12:

Ներսիսյան, Մ. Գ. (1962) Զեյթունի 1862 թվականի ապստամբությունը. Պատմա-բանասիրական հանդես, № 4 . pp. 59-68.

Նուրիջանյան, Ժ. (2005) Ժամանակագրություն Հայոց ցեղասպանության. Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, №1 0-11. էջ. 91;

Շաքարյան, Արտակ, Մերձավոր Արևելք(II):Պատմություն, քաղաքականություն, մշակույթ: Հոդվ. ժող.; Խմբ. խորհ.՝ Ն.Հ. Հովհաննիսյան և ուրիշներ: ՀՀ ԳԱԱ Արևելագիտ. ինտ. Երևան:Զանգակ-97, 2005., էջ 59-62;

Սահակյան, Ռ. Օ. (1988) Ուրֆայի 1915 թվականի հերոսամարտի պատմությունից. Պատմա-բանասիրական հանդես, № 3 . pp. 103-113

Սահակյան, Ռ. Օ. (1989) 1915 թ. Վանի հերոսամարտը օտար աղբյուրներում. Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 8 . էջ. 54-63.

Սահակյան, Ռ. Օ. (1995) Վասպուրականի հայության գոյամարտը 1915 թվականին. Պատմա-բանասիրական հանդես, № 1 . էջ. 19-30.

Սահակյան, Ռուբեն (2006) Մուշ քաղաքի հայկական թաղամասերի ինքնապաշտպանությունը 1915 թվականին. Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, № 12.

Սահակյան, Ռուբեն (2011) Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և ընթացքում ռուս- թուրքական ռազմաճակատում հետախուզական ծառայությունների գործունեության պատմությունից (1914–1917 թթ.). Պատմաբանասիրական հանդես, № 3:

Barkan, Ömer Lûtfi, "Osmanlı İmparatorluğu'nda Bir İskân ve Kolonizasyon Metodu Olarak Sürgünler," in İstanbul Üniversitesi İktisat Fakültesi Mecmuası, vol. XI, n° . 1-4, 1949-1950, pp. 550-561;

Anumyan, Meline, The irrefutable testimonies of the Armenian Genocide in the trials of the deportations and massacres of the Armenians from Yozghat and Trebizond, Regional Affairs, volume 2 (5), 2014

Dadrian, Vahakn N., The Secret Young-Turk Ittihadist Conference and the Decision for the World War I Genocide of the Armenians, Holocaust Genocide Studies (1993) 7 (2): 173-201.

Davutoğlu, Ahmet, Turkish–Armenian Relations: Is a "Just Memory" Possible?, Turkish Policy Quarterly, Spring 2014, p. 28

İnalcık, Halil, 'Ottoman Methods of Conquest,' Studia Islamica, II, 1954

Khosroeva, Anahit, The Assyrian Genocide in the Ottoman Empire and Adjacent Territories, in The Armenian Genocide: Cultural and Ethical Legacies, Ed. by Richard Hovannisian, New Brunswick, New Jersey, Transaction Publishers

Markovich, S. G., Patterns of National Identity Development, Balcanica XLIV (2013), p.217;

Robinson, Greg. (2010). A Tragedy of Democracy: Japanese Confinement in North America. Journal of Transnational American Studies, 2(1).

Այլ նյութեր

Badem, Canan, Ermenistan Ulusal Arşivi Türk araştırmacılara açık, Agos, 08 Ekim 2012, http://www.agos.com.tr/haber.php?seo=ermenistan-ulusal-arsivi-turk-arastirmacilara-acik&haberid=2856

Berk, Ezgi, 'Bu kitabı I. Dünya Savaşı'nda görünmeyen Ermeni emeğini anlatmak için yazdım', Agos, 14.11.2014 (http://www.agos.com.tr/bu-kitabi-i-dunya-savasinda-gorunmeyen-ermeni-emegini-anlatmak-icin-yazdim-8604.html)

Celestine Bohlen, Fresh Tension for Cyprus: Counting the Newcomers, The New York Times, 1991, January 23

Cengiz Çandar, Süriye çölünün ortasında bir 24 Nisan, Radikal, 25/04/2010, http://www.radikal.com.tr/yazarlar/cengiz_candar/suriye_colunun_ortasinda_bir_24_nisan-993383

Der Geschäftsträger der Botschaft Konstantinopel (Radowitz) an den Reichskanzler (Bethmann Hollweg), Therapia, den 4. Oktober 1916, Link: http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1916-10-04-DE-002;

Ertani, Emre, Çanakkale'nin unutturulan gayrimüslim şehitleri, Agos, 18.03.2013 (http://www.agos.com.tr/canakkalenin-unutturulan-gayrimuslim-sehitleri-4692.html);

Fisk, Robert, The Armenian hero Turkey would prefer to forget, The Independent, 12 May 2013 (http://www.independent.co.uk/voices/comment/the-armenian-hero-turkey-would-prefer-to-forget-8612890.html); Taner Akçam, Sarkis Torossian Debate, January 25, 2013, http://www.tanerakcam.com/debates/sarkis-torossian-debate/;

Genelkurmay ATASE başkanlığı_arşivinde_calışma_başvurusu, http://www.tsk.tr/9_yayinlar/9_5_genelkurmay_atase_baskanligi_arsivinde_calisma_basvurusu/calisma_basvurusu.htm

Jonny Hogg, Turkey's Erdogan offers condolences for 1915 Armenia killings, Reuters, Apr 23, 2014, http://www.reuters.com/article/2014/04/23/us-turkey-armenia-erdogan-idUSBREA3M0XN20140423

Kocharian response to Erdogan letter, 05YEREVAN707_a, http://www.wikileaks.org/plusd/cables/05YEREVAN707_a.html

Kurt, Ümit, Yerevan'da arşivler herkese açık, Agos, 30 Mayıs 2014, http://www.agos.com.tr/haber.php?seo=yerevanda-arsivler-herkese-acik&haberid=7318

Mamigonian, Marc, Scholarship, Manufacturing Doubt and Genocide Denial, Armenia Weekly, April 2013, pp. 37-42

Özel, Oktay, Hükümetin 1915 bildirisi vesilesiyle: Arşivlerimiz gerçekten açık mı?, Radikal, 07/05/2014, http://www.radikal.com.tr/yorum/hukumetin_1915_bildirisi_vesilesiylearsivlerimiz_gercekten_acik_mi-1190637

Panzer, Fred, The Roper Proposal, Bates Number 2024274199-2024274202, May 1, 1972, http://legacy.library.ucsf.edu/tid/quo14e00/pdf

Resistance during the Holocaust, Anti-defamation League, http://www.adl.org/assets/pdf/education-outreach/Resistance-During-the-Holocaust-NYLM-Guide.pdf

Sarkis Torossian: an Armenian hero of the Dardanelles, The Armenian Genocide Museum Institute, http://www.genocide-museum.am/eng/24.04.2010d.php;

Smokking and health proposal, Brown and Williamson collection, Bates Number 680561778-680561786, http://legacy.library.ucsf.edu/tid/nvs40f00/pdf;jsessionid=53C030F77779D2073EF01246846F8591.tobacco03

Statement of President Barack Obama on Armenian Remembrance Day, The White House, April 24, 2009, http://www.whitehouse.gov/the_press_office/Statement-of-President-Barack-Obama-on-Armenian-Remembrance-Day

The Ten Stages of Genocide, Gregory H. Stanton. Originally presented as a briefing paper, "The Eight Stages of Genocide" at the US State Department in 1996. Discrimination and Persecution have since been added to the 1996 model. http://genocidewatch.org/genocide/tenstagesofgenocide.html

Թուրքիայի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության կայք, http://www.mfa.gov.tr/data/DISPOLITIKA/text-of-the-letter-of-h_e_-prime-minister-recep-tayyip-erdogan-addressed-to-h_e_-robert-kocharian.pdf

Շքանշանի վերաբերյալ հրամանի օսմաներեն բնագիր փաստաթղթի լուսապատճենը՝ http://www.tanerakcam.com/files/2013/01/OTTOMAN-DOCUMENT-Enver-Pasha.jpeg

Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիա,http://www.un.am/res/UN%20Treaties/III_1.pdf

http://www.jewishvirtuallibrary.org/jsource/Holocaust/wannsee.html

http://www.jewishvirtuallibrary.org/jsource/Holocaust/Wannsee_Protocol.html

http://www.ozurdiliyoruz.com/

Արտակ Շաքարյան

Ուղեցույց երիտասարդ դեսպանին

ՓԱՍՏԱՐԿՆԵՐ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.թ. Անահիտ Խոսրոեվա

Գրախոսներ՝

ՀՀ ԱԳՆ Սահմանակից երկրների վարչության պետ, պ.գ.դ. Արսեն Ավագյան,

Հայոց Ցեղասպանության թանգարան ինստիտուտի փոխտնօրեն, պ.գ.թ. Սուրեն Մանուկյան,

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի վարիչ, պ.գ.թ. Արմեն Մարուքյան,

ՀՅԴ Հայ Դատի գրասենյակի ղեկավար Կիրո Մանոյան:

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափը՝ 60x92 1/16:
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 8 տպ. մամուլ:

վերնատուն

«Վերնատուն» հրատարակչություն
www.vernatun.am
info@vernatun.am

ԱՐՏԱԿ ՇԱՔԱՐՅԱՆ

ոչտնական գիտությունների թեկնածու, թուրքագետ

Արևելագիտության բակալավրի ու թուրքագիտության մագիստրոսի աստիճաններն ստացել է Երևանի ոչեական համալսարանից, իսկ թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում 2005թ.: Սովորել է նաև Թաֆթս համալսարանի Ֆլեթչերի իրավունքի ու դիվանագիտության դպրոցում (ԱՄՆ), Հարվարդի համալսարանի Ջոն Ֆ. Քենեդու անվան կառավարման դպրոցում (ԱՄՆ), ինչպես նաև Ջոնս Հոփքինսի համալսարանի Միջազգային հարաբերությունների դպրոցում (ԱՄՆ):

Հեղինակ է շուրջ ութ տասնյակ գիտական ու հրապարակախոսական հոդվածների: Մենագրություններն են «Արյան հարկը Օսմանյան կայսրությունում. դնշիրե» (2006թ.), որտեղ ուսումնասիրվում է մանկահավաքի համակարգի ազդեցությունը կայսրության կառավարման համակարգի և հպատակ ժողովուրդների գենոֆոնդի վրա, և «Արարատից այն կողմ. աղակողավորելով Թուրքիան» (2011թ.), որը նվիրված է Թուրքիայի արտաքին քաղաքական սկզբունքների ուսումնասիրությանը:

«Տարածաշրջանային խնդիրներ» գիտական ամսագրի գլխավոր խմբագիրն է: Ամերիկայի հայկական համագումարի երևանյան գրասենյակի ծրագրերի համակարգողն է, ինչպես նաև երիտասարդ առաջնորդների դպրոցի աշխատանքային խմբի ղեկավարը: